# ԷՋՄԻԱԾԻՆ



ՌՆԺԴ

ԻԱ ՏԱՐԻ

Դեկտեմբեր

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ԺԲ

1964

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Էջ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— «Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի Հանրապետութիւն Խորհրդային Հայաստանի» . . . . . . . . . . 3

Հայաստանում սովետական կարգերի հաստատման քառասունչորրորդ տարեդարձի կապակցությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական անձնավորությունների միջև փոխանակված հեռագրերը . . . . . . 5

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 44-րդ տարեդարձին նվիրված հանդիսություններ Մայր Աթոռում . . . . . . . . 7

Հաղորդագրություն . . . . . . . . . . . . 8

Հարավային Ամերիկայի հայոց հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Բաբգեն արքեպիսկոպոս Ապտոյանի քահանայության 25-ամյակը . . . . 9

Եպիսկոպոսական ձեռնադրություն Մայր Աթոռում . . . . . . 12

Գերաշնորհ Տ. Վահան եպիսկոպոս Տերյան . . . . . . . 14

Գերաշնորհ Տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյան . . . . . . 16

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ . . . . . . . . . . . 18

ԱՐՍԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԵՐԲԵՐՅԱՆ— Մոսկվայի Հոգևոր ակադեմիայի 150-ամյակը . 20

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ— Գրիգոր Տղա . . . . . . . . . . 23

Ա. ՍԱՄՎԵԼՅԱՆ—Երվանդ Լալայան . . . . . . . . 28

ԴՈԿՏ. ՆՇԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ— Էլամացիք և իրենց լեզուն . . . . . 35

Ս. ՔՈԼԱՆՋՅԱՆ— Տրանսիլվանիայի հայերի պայքարը ազգային ինքնուրույնության պահպանման համար . . . . . . . . . . . 37

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ . . . . . . . . . 45

Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի . . . . . 48

Ցանկ «Էջմիածին» ամսագրում 1964 թվականի ընթացքում տպագրված նյութերի . 50



ԳՐԱԴԱՐԱՆ № 2



**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝**

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ**

**«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue „Etchmiadzine", Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1964 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

**Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ**

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

# «ՕՐՀՆԵՍՑԻ ԵՒ ՊԱՀՊԱՆԵՍՑԻ ԵՒ ՆԱԽԱԽՆԱՄԵԱԼ ՊԱՀԵՍՑԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ»

Նոյեմբերի 29-ին լրացավ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 44-ամյակը:

Վերածնված հայ ժողովուրդը, ամեն տարի, ազգային հպարտության և խանդավառության բերկրալի զգացմունքներով է նշում իր հայրենիքի, իր ազատության և անկախության փառապանծ տոնը:

Համազգային այս ցնծատոնին միշտ իր ամենաջերմ խնդակցությունն ու սրտաբուխ օրհնությունն է բերում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ, աղոթելով ի սրտե հայրենիքի և նրա ժողովրդի բարօրության, բարգավաճման և խաղաղության ու լուսապայծառ ապագայի համար, որպեսզի ընդմիշտ, հավիտյան **«Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի Հանրապետութիւն Խորհրդային Հայաստանի»:**

Ս. Էջմիածինը եղել է, է և կլինի միշտ հայրենասիրության օջախ: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, անցնող 44 տարիների ընթացքում, վերածնված հայ ժողովրդի նկատմամբ իր հոգևոր, հայրենասիրական պարտքը կատարել է և կկատարի սիրով և սրբությամբ:

Մայր Աթոռը միշտ հայ ժողովրդի հետ է հայրենաշեն ու ժողովրդանվեր աշխատանքներում:

Մարդկային հոգու բնատուր հարստությունը կազմող այլազան ազնիվ զգացումների մեջ կա մեկը, ամենից տիրականը, նվիրականը, նույնիսկ մայրական սիրուց էլ ավելի. դա **հայրենի հողի սերն է, հայրենասիրությունը:**

Այդ զգացումը ե՛լ ավելի վառ է արտահայտվում փոքր ազգերի մեջ, որոնք հաճախ դժբախտությունն են ունեցել կորցնելու իրենց անկախությունը:

Այդ փոքր ժողովուրդների թվում է և՛ հայ ժողովուրդը, որի անցյալի պատմությունը ուրիշ բան չէ, եթե ոչ ազգային ազատագրական պայքարի մի պատմություն:

Անցյալում, մեր քաղաքական անկախությունը կորցնելուց հետո, աստղերի նման փշուր-փշուր փշրվել ենք ու ցրվել ողջ աշխարհով մեկ՝ «պործն մոլորական աստեղաց», բայց հայրենիքի սերը, հույսը միշտ մեր սրտերում:

**«Հայաստան, հրեշտակի պես կանգնել առաջիս, ինձ թև է տալիս... ա՛հ, ազգի սերը ի՞նչ լավաթ ունի, ի՞նչ կորություն»** (Խ. Աբովյան):

Աբովյանը մտածում էր, որ «Աղասու պես որդիք ունեցողը աշխարհումս էլ ինչ դարդ ունի»:

Բայց հայրենասեր Աբովյանի աչքերի առաջ Աղասու պես հերոսներ կոհվում էին հանուն հայրենիքի, իսկ Հայաստանի վրա չէր ծագում փրկության արշալույսը:

Քաջության հետ, նահատակության հետ, հարկ էր նաև մի մեծ, ազնիվ ու բարի ժողովրդի անկաշառ բարեկամությունը, հովանին:

Հանձին ռուս ժողովրդի, բազմաչարչար հայ ժողովուրդը գտավ իր ավագ, հերոս եղբորը:

Երբեք պատահականություն չէր, որ հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունը միշտ սերտորեն կապված է եղել ռուս առաջավոր ժողովրդի անվան ու պատմության հետ: Հանձին առաջադեմ Ռուսաստանի, հայ ժողովուրդը տեսնում էր այն իրական ուժը, որի օգնությամբ հնարավոր կլիներ թոթափել գերության լուծը և նվաճել ազատություն:

1915 թվականին արյան մեջ խեղդվեց մեր կրոնական, մշակութային, ազգային և քաղաքական կարթոնքը Արևմտյան Հայաստանում: Հայ ժողովուրդը աչքերը դարձրեց դեպի հյուսիս:

1920 թվականին մեր երկիրը ողբի և որբի հայրենիք էր, վարկված ու վրկված Հայաստան, իսկ ժողովուրդը՝ գաղթական, սոված, արյունաքամ, բայց արի ու հերոսական՝ նա ոտքի կանգնեց, ազատության դրոշը պարզած:

Ծգնաժամային ու ճակատագրական այդ օրերին օգնության հասավ ռուս բարի ժողովուրդը:

Հնչել էր հայ ժողովրդի ազատագրության և փրկության ժամը: Մոխիրների, ցավի ու արցունքի ծովից, հարյա՛վ ոգին որբ հայոց պատմության: Արյունաքամ հայ հոգու և հայ հողի վրա ծագեց պայծառ, խոստումնալից առավոտը:

Նոյեմբերի 29-ը հաղթանակի օր է հայության համար, մեր ժողովրդի ազատագրական պայքարի փառավոր ու հերոսական էջերից մեկը, որ փրկություն բերեց հայ ժողովրդին և դարձավ սքանչելի ազգային վերածննդյան սկիզբը:

Նոյեմբերի 29-ը լայն հորիզոններ բացեց մեր ստեղծագործ, աշխատասեր և տաղանդավոր ժողովրդի ազգային և հոգևոր վերածննդյան: Վերջ տրվեց մեր թափառումներին, լացին, վշտին ու վերքին:

Հավար փոքրիկ ու աղետ տեսած մեր երկիրը ոտքի կանգնեց և բռնեց խոստումնալից վերելքի իր ճանապարհը:

Մեր երկրի վրայով անցած մահաբեր մրրիկները, անանուն ոճրագործությունները չկարողացան խեղդել մեր ժողովրդի ապառատենչ ոգին, ապրելու և ստեղծագործելու կամքը, ապագայի նկատմամբ նրա վառ հավատն ու անկոտրում հույսը:

Ու եկավ լուսաբացը հայոց աշխարհում, հայոց լեռներում:

Ահա 44 տարի է, որ հայ ժողովուրդը քայլում է վերելքի ճանապարհով:

44 տարի՜...:

Անցնող 44 տարիները եղան հաղթանակի տարիներ, կառուցման տարիներ:

Հայաստանը դարձել է լույսի հայրենիք, հույսի հայրենիք, նոր ու հզոր՝ Սովետական Հայաստան:

Աննախընթաց թափով վարգացել են հայ մշակույթը, արվեստը, գիտությունն ու գրականությունը: Ստեղծվել են հզոր քիմիական արդյունաբերություն, աճող գյուղատնտեսություն:

Երբեմնի հետամնաց, քայքայված Հայաստանը դարձել է շեն ու ծաղկած երկիր:

Իսկ քաղաքամայր Երևանը դարձել է հայ մշակույթի, լուսավորության և հայ կյանքի կենտրոն, իր համալսարանով, ինստիտուտներով, գիտահետազոտական ինստիտուտներով:

Հայ գիտական միտքը քննում է «վխորս Աստուծոյ», մխրճվում է տիեզերքի անհուն գաղտնիքների մեջ, կարդում է աստղերի քերթվածը, պեղում հայրենի հողի ընդերքը:

Դպրոցներում, բուհերում, սովորում է կես միլիոնից ավելի մարդ: Միայն անցյալ տարի մեր բարձրագույն ուսումնական հաստատություններից շրջանավարտ են եղել ավելի քան 3 000 մասնագետներ, որոնք անցել են ստեղծագործ աշխատանքի՝ իրենց մասնագիտության գծով:

Հայաստանում յուրաքանչյուր չորրորդ քաղաքացին սովորում է:

Ու բացել է հայրենիքը իր մայրական գիրկը 1915 թվականի ազգակործան եղեռնից մազապուրծ ազատած, աշխարհի չորս ծագերին ցրված իր հայրենաբաղձ զավակների առաջ, և կանչում է նրանց բոլորին դեպի տուն, դեպի հայրենի օջախ:

Տարեցտարի անճանաչելիորեն փոխվում է մեր հանրապետության քարտեզը: Ծնունդ են առնում նոր, բարեկարգ քաղաքներ ու ավաններ, որոնց մեջ ապրում են և ստեղծագործում ապագային վառ հույսով նայող հայ նոր սերունդներ: Մեր երկիրը, իր հազարամյակների պատմության ընթացքում, չի տեսել երբեք բնակչության այնպիսի աճ, ինչպիսին ունի այժմ:

Այս բոլորը յուրաքանչյուր հայ մարդու սիրտը լցնում է ազգային հպարտության ամենաանուշ կգացմունքներով:

Մայր Հողի հայությունը իր ազգային վերածնության, պետականության, իր պայծառ ապագայի հիմքերն է ամրապնդում օրերի հետ և շենացնում է համայն հայության հայրենի օջախը: Ինչ ստեղծվել է 44 տարիների ընթացքում, դա սեփականությունն է հայ ժողովրդի:

Այսօր բյուր երազներ են ծաղկում հայ ժողովրդի հոգում:

Անցնող յուրաքանչյուր օր երջանկության, բարգավաճման նոր գարուններ է բերում մեր երկրին և ժողովրդին:

Այսօր պայծառ է վերածնված մեր ժողովրդի ներկան, է՛լ ավելի վառ՝ նրա ապագան: Այսօր հայ ժողովուրդը իր ձեռքն է վերցրել իր ճակատագիրը և իր հայրենի հողի վրա վառել է իր գոյության, հավերժության խարույկը, եղբայրական ժողովուրդների համերաշխ ընտանիքում, և վառ հավատով է նայում ավելի պայծառ գալիքին:

Ծաղկի՛ր, ազատ իմ հայրենիք, ուռճացի՛ր, հզորացի՛ր:

Փա՜ռք վերածնված հայ ժողովրդին:

**«Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի Հանրապետութիւն Խորհրդային Հայաստանի»:**



# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Սովետական Հայաստանի 44-րդ տարեդարձի առիթով ընդունեցե՛ք, մեծահարգ նախագահ, Մեր ջերմագին շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները Ձեզ և Ձեր հարգարժան գործակիցներին:

Թո՛ղ շեն ու հաստատ մնա համայն հայության Մայր Հայրենիքը, Սովետական Միության ժողովուրդների եղբայրական ընտանիքում և թո՛ղ առավել ծաղկի ու առաջադիմի խաղաղության մեջ:

Սիրով և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ Ե. ՔՈՉԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Ընդունեցե՛ք, մեծարգո վարչապետ, Մեր սրտաբուխ շնորհավորանքներն ու բարի մաղթանքները անձամբ Ձեզ և մեր բարեխնամ կառավարության հարգարժան անդամներին, Սովետական Հայաստանի 44-րդ տարեդարձի բարեբաստիկ առիթով: Մաղթում ենք Ձեզ և Ձեր հայրենանվեր գործակիցներին անսպառ ուժ և եռանդ, որպեսզի փայլուն հաջողությամբ պսակվեն մեր սիրեցյալ Մայր Հայրենիքի վերաշինության ու ծաղկման Ձեր ծրագրերը:

Սիրով և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ Կ. ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Սովետական Հայաստանի 44-րդ տարեդարձի առթիվ հղում ենք Ձեզ և խորհրդիդ հարգարժան անդամներին Մեր սրտագին շնորհավորանքները և ջերմագին բարեմաղթությունները և աղոթում առ Աստված Մայր Հայրենիքի և մեր ժողովրդի բարօրության ու առաջադիմության համար խաղաղության մեջ:

Ջերմ ողջույններով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հաճեցեք ընդունել իմ խորին շորհակալությունը Ձեր շնորհավորանքների և բարեմաղթությունների համար մեր Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի 44-րդ տարեդարձի առթիվ:

Խորին հարգանքներով՝

Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի
նախագահության նախագահ

ԵՐԵՎԱՆ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հայաստանում սովետական իշխանության հաստատման 44-րդ տարեդարձի առթիվ հղած Ձեր ջերմագին շնորհավորանքների ու բարեմաղթությունների համար ընդունեցեք, խնդրեմ, Ռեսպուբլիկայի կառավարության և անձամբ իմ շնորհակալությունը:

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ
Հայկական ՍՍՌ Մինիստրների
սովետի նախագահ

ԵՐԵՎԱՆ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հաճեցեք ընդունել Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իմ շնորհակալությունը Սովետական Հայաստանի 44-րդ տարեդարձի առթիվ Ձեր հղած շնորհավորական հեռագրի և սրտագին բարեմաղթությունների համար:

Նույն հանդիսավոր առիթով թույլ տվեք ցանկանալ Ձեզ քաջառողջություն և կորով Ձեր բեղուն գործունեության մեջ՝ հանուն աշխարհիս խաղաղության և հողագնդով մեկ սփռված մեր ժողովրդի միասնականության ամրապնդման:

Կ. ԴԱԼԼԱՔՅԱՆ
Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր
Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ

ԵՐԵՎԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 44-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

*Նոյեմբերի 26-ին, հինգշաբթի, կեսօրից հետո ժամը 3-ին, Հոգևոր Ճեմարանում կազմակերպվեց գրական-գեղարվեստական ցերեկույթ՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 44-րդ տարեդարձին։*

*Հանդիսության նախագահում էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը։*

*Հանդիսությունը բացվում է Հայկական ՍՍՌ պետական հիմնի նվագով։*

*Հոգևոր Ճեմարանի հայոց լեզվի և գրականության դասախոս Պարգև Շահբազյանը այնուհետև հանդես է գալիս տոնի ազգային-պետական նշանակության և խորհրդին նվիրված բացման խոսքով։*

*Բ դասարանի ուսանող Արարատ Գալստյանը դաշնամուրի վրա նվագում է Թարխուդարյանի «Արևելյան պար»-ը, իսկ լսարանական բաժնի ուսանող Եղիշե Բաղրամյանը արտասանում է Նաիրի Զարյանի «Վերածնունդ»-ը։*

*Օրվա գլխավոր բանախոսն էր Հոգևոր Ճեմարանի գրաբար լեզվի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Սամվել Անթոսյանը, որն իր բովանդակալից զեկուցման մեջ հանգամանորեն վեր հանեց պետականություն ունենալու բարիքները հայ ժողովրդի կյանքում, անցնող 44 տարիների ընթացքում, ազգային ճշմարիտ վերածննդյան պայմաններում։*

*Լսարանական բաժնից ուսանող Գրիգոր Բունիաթյանը արտասանեց Վ. Գրիգորյանի «Սա իմ երկիրն էր» բանաստեղծությունը։*

*Հանդիսության իր մասնակցությունն է բերում նաև Հոգևոր Ճեմարանի ուսանողական երգչախումբը, որը Ճեմարանի հայ երաժշտության դասախոս հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանի ղեկավարությամբ հաջողությամբ կատարում է մի շարք խմբերգեր, որոնց թվում Առնո Բաբաջանյանի «Երիտասարդական»-ը, Ալեքսանդր Հարությունյանի «Երիտասարդական քայլերգ»-ը, Երվանդ Սարգարյանի «Երգ խաղաղության»-ը և Կոմիտաս վարդապետի «Սիփանա քաջեր»-ը։*

*Հանդիսության վերջում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ողջույնի և օրհնության խոսք ասաց ազգային-պետական մեծ տոնի 44-րդ տարեդարձի բարեբաստիկ առիթով և հայրապետական իր ջերմ պատգամն ուղղելով Մայր Աթոռի միաբանության և Հոգևոր Ճեմարանի ուսանողության, հորդորեց լինել որքան հավատի, գիտության, նվիրման, նույնքան և հայրենասիրության մարդ, որովհետև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, իր գոյության առաջին իսկ օրերից, իր կյանքն ու ճակատագիրը սերտորեն կապել է հայ ժողովրդի կյանքի, ճակատագրի և ապագայի հետ։*

*Այնուհետև, իր խոսքի վերջավորության, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետն օրհնում է մի անգամ ևս մեր վերածնված Մայր Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, մեր շինարար և խաղաղասեր, ստեղծագործ ժողովրդին, բարեմաղթելով, որ խաղաղություն լինի համայն աշխարհում և բոլոր հայ երգիկների տակ։*

*Հայաստանում սովետական կարգերի հաստատման 44-րդ տարեդարձին նվիրված հանդիսությունը վերջանում է ազգիս հայրենասեր Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով։*

***

*Նոյեմբերի 28-ին, շաբաթ օր, Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի առաջ, կիրակմտի ժամերգությունից հետո, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է կառավարական մաղթանք՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 44-րդ տարեդարձի առթիվ։*

*Գոհաբանական աղոթքին ներկա են լինում Մայր Աթոռի ողջ միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի վերատեսչությունը, ուսանողությունը, վանքի պաշտոնեությունը և բազմաթիվ հավատացյալներ։*




## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը սույն թվականի նոյեմբերի 26-ին գերաշնորհ Տ. Աստղիկ եպիսկոպոս Ղազարյանին կոչեց Մայր Տաճարի լուսարարապետի պաշտոնին, ազատելով այդ պարտականությունից գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանին, իր դիմումի համաձայն, առաջացած տարիքի հետևանքով:

Վեհափառ Հայրապետը, գնահատելով հավատարիմ և արդյունավետ գործունեությունը Տ. Վահան ծայրագույն վարդապետ Տերյանի՝ իբրև առաջնորդական փոխանորդ Արարատյան Հայրապետական թեմի և Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանի՝ իբրև առաջնորդ Ռումինիայի և Բուլղարիայի միացյալ թեմերի, և հարգելով Արարատյան և Ռումինիայի ու Բուլղարիայի թեմական խորհուրդների միջնորդությունը և խնդրանքը, կիրակի, նոյեմբերի 29-ին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, եպիսկոպոս ձեռնադրեց և օծեց Տ. Վահան և Տ. Տիրայր վարդապետներին:

Նորապսակ Տ. Վահան և Տ. Տիրայր եպիսկոպոսները իրենց անդրանիկ պատարագները մատուցեցին Փրկչի Իջման Ս. Սեղանի առաջ երկուշաբթի 30 նոյեմբերին և կիրակի 6 դեկտեմբերին, մեկնելով ապա իրենց թեմերը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ



## ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԲԱԲԳԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՊԱՏՅԱՆԻ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԸ

*Արգենտինայի հայոց թեմի պատվարժան ազգային կենտրոնական վարչության որոշումով և նախաձեռնությամբ, հուլիսի 26-ին, Բուենոս-Այրեսում, հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցում, նշվել է Հարավային Ամերիկայի հայոց հայրապետական պատվիրակ և առաջնորդ գերաշնորհ Տ. Բաբգեն արքեպիսկոպոս Ապատյանի քահանայության 25-ամյակը, սուրբ պատարագի մատուցմամբ, քարոզով և «Հայ կեդրոն»-ի սրահում կատարված հոբելյանական այլ հանդիսություններով։*

*Հանդիսության նախագահել է Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը, որը պաշտոնական այցով գտնվում էր Արգենտինայի հայ հայրենասեր և բարեպաշտ համայնքի ծոցում։*

*Օրվա սուրբ պատարագը մատուցել է հոբելյար սրբազանը, քահանայական պարզ զգեստավորման մեջ։*

*Սուրբ պատարագի ընթացքում, «Գոհություն» քարոզից առաջ, հանդիսավորապես և երկյուղած լռության մեջ, ընթերցվել է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հունիս 27 թվակիր սրբատառ կոնդակը, որով Նորին Ս. Օծությունն Իր հայրապետական բարձր ուշադրության արժանացնելով հոբելյար սրբազանի 25-ամյա եկեղեցանվեր, հովվական, վարչական հույժ գովելի և նվիրյալ ծառայությունը, նախ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց Առաքելական Աթոռում որպես միաբանի և վերջին հինգ տարիների ընթացքում որպես Հարավային Ամերիկայի հայոց հայրապետական պատվիրակի, Տ. Բաբգեն եպիսկոպոսին շնորհում է* արքության պատիվ:

*Հայրապետական սրբատառ կոնդակի ընթերցումից հետո, ամենապատիվ սրբազան պատրիարք հայրը իր քարոզում բարեմաղթություններ է անում, վեր հանելով հոբելյար իր սրբազան աշակերտի արժանիքները որպես տիպար, հոգեկրոն եկեղեցականի, շիտակ ու բարի մարդու։*

*Հավարտ սուրբ պատարագի, սրբազան պատրիարք հոր հանդիսադրությամբ, կատարվում է հոգեհանգստյան հատուկ պաշտոն հոբելյար սրբազանի հոգևոր և մարմնավոր վախճանած ծնողների հիշատակին։*

*Այնուհետև սրբազան պատրիարք հայրը և հոբելյար Տ. Բաբգեն արքեպիսկոպոսը, եկեղեցական թափորով, բարձրանում են առաջնորդարան, ուր հոբելյար սրբազանն ընդունում է հայ և օտար եկեղեցական և պետական պաշտոնական անձանց շնորհավորությունները։*

*Երեկոյան ժամը 9.30-ին, «Հայ կեդրոն»-ի սրահում, Հոբելյանական Հանձնախումբը,*



Գերաշնորհ Տ. Բարգեն արքեպիսկոպոս Ապատյան

ի պատիվ Հոբելյար սրբազանի, կազմակերպում է ընդունելություն ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան Հոր նախագահությամբ։ Ընդունելությունն անցնում է ջերմ, հայրենասիրական մթնոլորտում։

Սեղանը ղեկավարում է պր. Լևոն Տեր-Ավետիսյանը։

Այնուհետև ներկաներից շատերը ողջունում են սրբազան Հոբելյարին ջերմ, սրտագին ելույթներով, որոնց թվում պր. Արմեն Պերկամալին՝ հանուն ազգային կենտրոնական վարչության, Հոգեշնորհ Տ. Հարություն վարդապետ Մուշյանը՝ հանուն Հոբելյանական հանձնաժողովի, պր. Հովսեփ Ցուսուֆյանը՝ հանուն եկեղեցու պայծառության մարմնի, օրիորդ Մանուշակ Մեսրոպը՝ հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու երիտասարդաց կազմակերպության, պր. Ա. Նալբանդյանը՝ հանուն Ուրուգվայի Հ. Բ. Ը. Միության մասնաճյուղի վարչության, պր. Գրիգոր Մուշյանը՝ հանուն Արսլանյան վարժարանի շրջանավարտների միության, պր. Է. Դերձակյանը՝ հանուն Վիսենտե Լոպեսի հայության, տիկին Օֆելյա Իպիշյանը՝ հանուն եկեղեցասեր տիկնանց կազմակերպության. պր. Գևորգ Մուշյանը՝ հանուն «Շարժում» շաբաթաթերթի խմբագրության, պր. Սոկրատ Թերզյանը՝ հանուն «Արմենիա» օրաթերթի խմբագրության, պր. Գրիգոր Կյոնճյանը՝ հանուն «Սևան» շաբաթաթերթի խմբագրության, տիկին Ռամոս Մեխիան՝ հանուն հայ կանանց, և բարեշնորհ Վարդգես սարկավագ Կեոոյանը՝ հանուն սարկավագների խմբի և ուրիշներ։

Հոբելյանական հանդիսության գեղարվեստական բաժնին իրենց շնորհալի մասնակցությունն են բերում տիկին Ռիտա Աճեմյանը արտասանությամբ, օրիորդ Ալիս Օրջանյանը երգով, «Երևան» նվագախումբը և «Գայանե» պարախումբը։

Հանդիսության վերջում խոսք է առնում սրբազան պատրիարք հայրը, օրհնում ներկաներին, բարձրորեն գնահատելով թեմի կողմից ցույց տրված սերն ու հարգանքը՝ Հոբելյար սրբազանի անձի միջոցով դեպի Հայաստանյայց Եկեղեցու արժանավոր հոգևորականը, թելադրելով բոլորին՝ ավելի սերտորեն համախմբվել հայրապետական պատվիրակի շուրջ, որպեսզի նրա անշահախնդիր և նվիրյալ ծառայությունից ավելի մեծ չափով օգտվեն թեմը, եկեղեցին ու ժողովուրդը։

Վերջինը խոսք է առնում Հոբելյար սրբազանը և ասում.

«Մաշած և խեղճ բառ է «շնորհակալություն» բառը, հայտնելու համար իմ ամբողջական զգացումը ձեր խոսքերում, մաղթանքներում և ներկայության համար։

Հուզումնախառն ուրախությունը, որ կըզգամ այսօր, կուզեմ բաժնել ձեր բոլորին հետ։ Որովհետև, ինչպես միշտը, նույնպես և երջանկությունը կարելի չէ ամբողջությամբ կրել. սրտին համար ծանր պիտի ըլլար ընել այդ։ Ու երջանկությունը, որ իմս է և չի՛ գար այն իրողութենեն, որ կստանամ հարգանքի ցույց մը այսօր, այլ քսանհինգ տարիներ առաջ ինձի Աստուծմե տրված շնորհեն, որ կրցա ծառայել ազգիս և Եկեղեցիիս իմովսանն։

Եթե նույնիսկ հաջողություններ ունեցա, գանոնք կպարտիմ մեր ժողովուրդին, անոր գործակցության և հասկացողության։ Այլա-

պես առանձին որևէ անհատ, որքան ալ հանճարեղ և կարող՝ պիտի չարժե բան մը։ Արքության շնորհումը մեր բոլորեն մեր բոլորին տրված վարձատրություն մըն է։

Այսօրվան այս մասնավոր հանդրվանին մեջեն հոգիս նաև կհիշե անցյալի մեջ սիրելի այն դեմքերը՝ ծնողք և ուսուցիչ, որոնք իմ կազմությանս մեջ բաժին ունեցան։ Կզգամ, թե ինչ որ եմ, կպարտիմ անոնց և հիմա հարգանքով և երախտագիտությամբ կխոնարհիմ անոնց հիշատակին առջև։

Ու այն բոլորին հետ կմտածեմ նաև այն ծանրության մասին, որ աստիճանի բարձրացում մը անպայմանորեն կբերե իրեն հետ։ Պետք է կարենամ արդարացնել բոլոր ակընկալությունները։ Ու կհավատամ, որ Աստված զորավիգ պիտի ըլլա ինծի, և մեր գաղութի պատվական հայ ժողովուրդը պիտի համագործակցի նորեն նույն սիրով և հասկացողությամբ, որպեսզի կարենանք իրագործել հավաքական մեր նպատակները։

Շնորհակալություն պատվին համար, որ ընծայաբերեցիք ինծի, զոր կնկատեմ պատիվ՝ ընծայված Հայաստանյայց Ս. Եկեղեցիին, որուն համեստ մեկ պաշտոնյան եմ ես, և որուն փառքին ու պայծառության ծառան միայն։

Երախտագիտություն Երուսաղեմի ամենապատիվ պատրիարք սրբազանին, որ իր ազնիվ խոսքով փայլեցուց այս օրը և խորապես ուրախացուց սիրտս իր բարեկամի և ուսուցչի ներկայությամբ։

Ընդունելությունը վերջանում է ուշ գիշերին նախագահող սրբազան պատրիարք հոր «Պահպանիչ»-ով և Տերունական աղոթքով։

* * *

Հարավային Ամերիկայի հայոց հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Թարգեն սրբազանը, ինչպես նրան այնքան ճիշտ և ամբողջական ձևով բնութագրել է Վեհափառ Հայրապետն Իր սրբատառ կոնդակում, «մեր օրերու հայ հոգևորականության ընտրյալներեն մին» է, «մտքով ու հոգիով արթուն» և «գործերով փայլուն»։

Հոբելյար սրբազանի երիտասարդ կյանքի 25 տարիներն անցել են եկեղեցական, կրոնական, հովվական, վարչական և գրական բեղուն ծառայության ասպարեզներում, ծառայություններ, որոնք այսօր նրան սիրելի են դարձրել և նրա մաքուր ճակատի շուրջ դափնեպսակներ հյուսել։

Հինգ տարի է ահա, ինչ Տ. Թարգեն արքեպիսկոպոս Ապատյանը, որպես ազգիս սիրելի Վեհափառ Հայրապետի խոստումնալից ձեռնասուն եպիսկոպոսներից մեկը, նվիրումով ու ձեռնհասորեն վարում է Հարավային Ամերիկայի հայոց հայրապետական պատվիրակի և առաջնորդի բարձր և պատասխանատու պաշտոնը հոծ, հայկական ավանդություններով կենդանի, ազգային վառ ոգով և հայրենասեր թեմի ծոցում, ինչպիսին է Հարավային Ամերիկայի հայ գաղութը։

Նորին սրբազնությունն իր բարեմույն, քաղցր բնավորությամբ, իր անկեղծությամբ և ամուր, դրական նկարագրով, հոգևորականի իր կոչումով ու ծառայության ոգով արդարորեն շահել է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր վստահությունն ու անձնական համակրանքը, իր թեմի, ժողովրդի սերն ու նվիրումը, հարգանքն ու բարեկամությունը նաև օտար պետական և եկեղեցական անձնավորությունների։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը և Մայր Աթոռի միաբանությունը, այս ուրախ առթիվ, իրենց սրտագին շնորհավորություններն ու բարեմաղթությունները միացնում են Հարավային Ամերիկայի հեռավոր, բայց հյուրընկալ ափերի վրա ապրող իրենց քույրերի և եղբայրների, ողջ գաղութի սիրույն և հարգանքին՝ դեպի բոլորիս սիրելի հոբելյար սրբազանը, մաղթելով նրան երկար կյանք, երջանկություն և արևոտ օրեր։

# ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

*Նոյեմբերի 29-ին, կիրակի օր, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Մայր Տաճարում, կատարում է եպիսկոպոսական ձեռնադրություն և հավատի ու հայրենասիրության սրբալույս մեռոնով օծում ճակատները նորապսակ երկու եպիսկոպոսների՝ Արարատյան հայրապետական թեմի փոխանորդ Տ. Վահան ծայրագույն վարդապետ Տերյանի և Ռումինիայի ու Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանի։*

*Նոյեմբերի 28-ին, շաբաթ օր, Հայ Եկեղեցու առաջին երկու լուսավորիչների՝ Ս. Թադեոսի և Ս. Բարթողիմեոսի տոնի երեկոյան, Իջման Ս. Սեղանի առաջ, կատարվում է նորընծաների հրապարակային «Ընտրութիւն» և ուխտադրութիւն՝ ըստ սահմանի Հայաստանեայց Եկեղեցւոյ։*

*Նոյեմբերի 29-ին, կիրակի օր, Մայր Տաճարում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհաբաշխությամբ, կատարվում են ձեռնադրության և օծման արարողությունները։*

*Հանդիսության արարողապետ-խարտավիլակն է Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը։*

*Վեհարանից զգեստավորված, ամպհովանու տակ, Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է Մայր Տաճար, առավոտյան ժամը 11-ին, և Ս. Ստեփանոսի սեղանի առաջ, կատարում է նորընծաների եպիսկոպոսական ձեռնադրության խորհրդի առաջին մասը, առընթերակայությամբ նորընտիր լուսարարապետ գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանի և Շիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մաշտոց եպիսկոպոս Թաշիրյանի։*

*Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, աղոթքով և օրհնությամբ, շնորհում է մինչև յոթը աստիճանները։*

*Այնուհետև սուրբ պատարագը շարունակվում է Ավագ Սեղանի վրա մինչև Ճաշու գրքի ընթերցումը, որից հետո սկսվում է ձեռնադրության կարգը։*

*«Աղջոյն»-ից առաջ կատարվում է օծման հանդիսավոր և շքեղ խորհուրդը՝ «Աստուածային և երկնային շնորհ» շարականի վեհ հնչյունների տակ։*

*Նորապսակները, եպիսկոպոսական լրիվ զգեստավորման մեջ, կանգնել են Ավագ Սեղանի աջ կողմում, մինչ ձեռնադրող Հայրապետը սրբալույս մեռոնով օծում է նրանց ճակատն ու աջ ձեռքի բութ մատը։*

*Այնուհետև, համապատասխան աղոթքներով, նորօծ եպիսկոպոսներին տրվում են եպիսկոպոսական գավազան և մատանի։*

*Կարդացվում է վերջին Ավետարանը, որից հետո, Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով, ավարտվում է եպիսկոպոսական օծման հանդիսությունը։*

*Վեհափառ Հայրապետը համբուրում է նորապսակների մեռոնադրոշմ ճակատները, օրհնում է և տալիս հայրապետական Իր ներշնչված պատգամն ու հորդորները. «լինել մշակք առանց ամօթոյ, անարատ պահել զանձն»։*

*Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան՝ ընդունելու բազմաթիվ շնորհավորություններ ազգային մեծ տոնի՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 44-րդ տարեդարձի, ինչպես նաև օրվա շնորհաբաշխության բարեբաստիկ առիթներով։*

*Ժամը 4-ին, Վեհարանում, կազմակերպվում է ընդունելություն ի պատիվ օրվա կրկնակի հանդիսությանց և ուրախությանց։*

*Սեղանն օրհնում է Վեհափառ Հայրապետը։*

*Ընդունելության ներկա են Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաքյանը, տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը, Գերագույն Հոգևոր խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամները, թեմակալ առաջնորդները, Մայր Աթոռի միաբանությունը, Երևանի թեմական խորհրդի անդամները, Մայր Աթոռի պաշտոնեությունը,*

Մայր Աթոռի տպարանի տեսուչը, «Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմինը և այլ հրավիրյալներ։

Հյուրերի թվում էին ուխտավորաբար Մայր Հայրենիքում գտնվող պր. Ներսես Գասպարյանը՝ ծանոթ ու սիրված մտավորականը Պլովդիվից (Բուլղարիա), պր. Վահե Աղասյանը Աթենքից, Հ. Բ. Ը. Միության հարգելի նախագահը։

Վեհափառ Հայրապետը առաջին բաժակն առաջարկում է խմել վերածնված Մայր Հայրենիքի փառապանծ տոնի երջանիկ առիթով, հայ ժողովրդի և մեր հայրենի բարեխնամ կառավարության կենացը, բարեմաղթելով է՛լ ավելի բարգավաճում Հայրենիքին, խաղաղություն և երջանկություն մեր ժողովրդին, եղբայրական ժողովուրդների համերաշխ ընտանիքում։

Հարգելի պր. Կ. Դալլաքյանը շնորհակալություն է հայտնում բարեմաղթությունների համար և բաժակը բարձրացնում Մայր Աթոռի և Նրա արժանավոր Գահակալի կենաց արեշատության համար։

Ներկաներից շատերը ջերմ ելույթներ են ունենում՝ նվիրված օրվա կրկնակի հանդիսության նշանակության և խորհրդին, որոնց թվում Տ. Ասողիկ և Տ. Վարգան եպիսկոպոսները, պր. Ներսես Գասպարյանը, պր. Վահե Աղասյանը, պրոֆ. Գ. Մեղնիկյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Գ. Բեքմեզյանը, Արարատյան թեմի թեմական խորհրդի ատենապետ Ս. Արեշատյանը, և վերջում «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը։

Ընդունելության ընթացքում Վեհափառ Հայրապետը հայտնում է, որ Գերագույն Հոգևոր Խորհուրդը իր նոյեմբեր 27-ի նիստում քննության է առել գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսի հրաժարականը լուսարարապետի պաշտոնից առաջացյալ տարիքի պատճառով, և նոր լուսարարապետ է ընտրել գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանին։

Նորին Ս. Օծությունը, լուսարարապետի պաշտոնի սույն փոփոխության առիթով, հայրապետական Իր բարձր գնահատությունն ու գոհունակությունն է հայտնում Տ. Սահակ արքեպիսկոպոսին՝ Նրա երկարամյա և նվիրյալ աշխատանքի համար և շնորհավորում է նորընտիր լուսարարապետ սրբազանին և ջերմ, դրվատալից խոսքերով նշում, որ Տ. Ասողիկ սրբազանը, սիրով և առանց պայմանի, երբեք տարի առաջ ընդունեց Մայր Աթոռում մնալու առաջարկը և այժմ ահա կոչվում է ավելի բարձր և պատասխանատու նոր աշխատանքի։

Բոլոր ներկաները ջերմորեն շնորհավորում են Նորընտիր լուսարարապետ սրբազան հոր նոր պաշտոնը, մաղթելով Նրան քաջառողջություն և արդյունաբեր գործունեություն։

Վերջում Տ. Ասողիկ սրբազանը խորին շնորհակալություն է հայտնում իր անձի հանդեպ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ցույց տված բարձր վստահության համար և հույս է հայտնում, որ, Աստուծո օգնությամբ և ազգիս սիրեցյալ Վեհափառ Հայրապետի բարի աղոթքներով և գործակցությամբ, կաշխատի յուրովսանն ծառայել Մայր Աթոռին։

Սեղանների շուրջ ժամանակն անցնում էր արագ, բայց բովանդակալից և հաճելի հոգևոր, հայրենասիրական մթնոլորտում։

Ոտքի վրա են նորապսակ եպիսկոպոսները, իրենց շնորհակալության և երախտագիտության խոսքն ասելու Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին։

Միաժամանակ այսօր կրկնակի ուխտի օր է նրանց համար։

Եպիսկոպոսական բարձր պաշտոնը, հայրապետական բարձր վստահությունը պարտավորեցնում են. ձեռները դրած մաճի վրա, նրանք պետք է գնան առաջ, «զպա ի յետոյսն մոռացեալք և զյառաջաղէմսն նկրտեալք», Աստուծո, ժողովրդին և հայրենիքին նվիրված, անձնուրաց ծառայության ճանապարհով, լինելու «մշակք առանց ամօթոյ, ուղիղ համառոտել զբանն, նախ առնել և ապա ուսուցանել և պահել զանձն անարատ...»։

Ու խոսում են նորապսակները հավատով, լավատեսությամբ, վերակրկնում ծառայության իրենց ուխտը, խոստումը։

Թո՛ղ միշտ պայծառ ու կանաչ մնա նրանց ճակատների վրա՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնյալ Աջով դրոշմված, մեր նախնյաց հավատի և հայրենասիրության սրբալույս մեռոնը։

Ա՛յս է մեր բոլորի բարեմաղթությունը։

Ընդունելությունը վերջանում է սրտագին մթնոլորտում, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և Տերունական աղոթքով։

# ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԱՆ



*Նորապսակ Տ. Վահան եպիսկոպոս Տերյանը (Գալեմտերյանը), ավազանի անունով Անդրանիկ, ծնվել է 1928 թվականի օգոստոսի 13-ին, պատմական Անտիոքի մոտ, Միջերկրականի ափին, Քեսաբի շրջանի Գալատուրան գյուղում։ Նրա հայրն ու մայրը բարեպաշտ մարդիկ են եղել և իրենց երեխային դաստիարակել եկեղեցասիրությամբ և բարեպաշտությամբ։*

*Փոքր հասակում Անդրանիկը նախնական կրթությունն ստանում է Գալատուրան գյուղի եկեղեցուն կից Մեսրոպյան ազգային ուսումնարանում, որի 7-րդ դասարանն ավարտելուց հետո, 1943 թվականին, դիմում է Անթիլիասի դպրեվանքը՝ հոգևորական դառնալու որոշումով։*

*1945 թվականին Բեյրութում նա տեղեկանում է, որ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը վերաբացվել է և երազում է լինել հայրենիքում ու սովորել Մայր Աթոռի Նորաբաց Հոգևոր Ճեմարանում։*

*1946 թվականին հայրենիք դառնալով, նրան հաջողվում է ընդունվել Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, որի դասընթացն ավարտում է 1950 թվականին։ Դեռևս Ճեմարանի Ա լսարանի ուսանող, նա, Հոգելույս Տ. Գևորգ Զ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, 1949 թվականին սարկավագ է ձեռնադրվում։*

*Հոգելույս Հայրապետը, 1951 թվականին, եկեղեցա-պատմական և աստվածաբանական գիտությունների մեջ խորանալու համար, Անդրանիկ սարկավագին երկու ընկերների հետ ուղարկում է Մոսկվայի ռուսական հոգևոր ճեմարանը, որտեղ նա սովորում է երկու տարի։*

*1954 թվականի սեպտեմբերի 12-ին, Խաչվերացի տոնի օրը, Անդրանիկ սարկավագը կուսակրոն քահանա է ձեռնադրվում Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի ձեռքով, վերանվանվելով Վահան աբեղա։*

*1956—1957 թվականներին, մեկ տարի, Վահան աբեղան վարում է Վրաստանի Հայոց Թեմի առաջնորդական փոխանորդի պաշտոնը։*

*1956 թվականի հոկտեմբերի 6-ին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետից ստանում է վարդապետական աստիճան։*

*1957 թվականի նոյեմբերի 4-ին նշանակվում է Արարատյան Թեմի առաջնորդական փոխանորդ, պաշտոն, որը մինչև այսօր վարում է ձեռնհասորեն։*

*1964 թվականի մայիսի 30-ին Վահան վարդապետն ստանում է ծայրագույն վարդապետական գավազանի իշխանություն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետից, որպես թեզ ներկայացնելով «Ս. Էջմիածնի դպրոցի պատմությունը Դ դարից մինչև Ի դարը»։*

*Վահան վարդապետը մնայուն կերպով աշխատակցել է «Էջմիածին» ամսագրին պատմա-բանասիրական հոդվածներով։ Նա վերջերս անդամ է ընտրված «Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմնի։*

*Վեհափառ Հայրապետը, գնահատելով Վահան ծայրագույն վարդապետի ծառայությունը Արարատյան թեմում, նոյեմբերի 29-ին ձեռնադրեց նրան եպիսկոպոս, միջնորդությամբ Գերագույն Հոգևոր Խորհրդի և թեմական խորհրդի։*

*Նորապսակ Տ. Վահան եպիսկոպոս Տերյանը գտնվում է իր ուժերի զարգացման շրջանում։*

*«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, ջերմորեն շնորհավորելով նրան, վստահություն է հայտնում, որ Տ. Վահան եպիսկոպոսը իր հետագա վարչական և գրական գործունեությամբ կարդարացնի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր վստահությունը և յուրովսանն կծառայի Մայր Աթոռին և Հայաստանյայց Եկեղեցուն։*

## ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՏԻՐԱՅՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻԿՅԱՆ



*Նորապսակ Տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանը, ավազանի անունով Տիգրան, ծնվել է 1930 թվականի մայիսի 24-ին, Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում։ Իր նախնական կրթությունն ստացել է տեղի ազգային Սահակյան և Արգարյան նախակրթարաններում։ Նախնական ուսումն ավարտելուց հետո, 1944 թվականին, նա ընդունվել է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց ժառանգավորաց վարժարանը, որտեղ սովորել է մինչև հայրենիք վերադառնալը։*

*1947 թվականին նա եկել է Հայաստան և իր ծնողների հետ միասին հաստատվել Երևանում։ Նույն տարին ընդունվել է Երևանի օտար լեզուների ինստիտուտի անգլիական բաժնում և սովորել մի քանի ամիս։ Սակայն, իր ծնողների ցանկությունն է եղել, որ իրենց որդին ստանա հոգևոր կրթություն, ուստի և նա թողել է ինստիտուտը, դիմել Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանը, որտեղ և ընդունվել է ու սովորել։*

*1952 թվականին փայլուն հաջողությամբ ավարտելով Հոգևոր ճեմարանի լսարանական բաժինը, սարկավագ է ձեռնադրվում և նշանակվում քարտուղար Հոգևոր ճեմարանի։*

*1955 թվականի ապրիլին, Ծաղկազարդի օրը, Ս. Հռիփսիմեի տաճարում, կուսակրոն քահանա է ձեռնադրվում գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի ձեռքով, վերանվանվելով Տ. Տիրայր աբեղա։*

*Նույն տարվա վերջերին նշանակվում է Բաքվի հայոց հոգևոր հովիվ և թեմական խորհրդի անդամ-քարտուղար։*

*1956 թվականի հոկտեմբերին, Մայր Տաճարում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետից ստանում է մասնավոր վարդապետական իշխանություն։*

1957 թվականին նշանակվում է առաջնորդական տեղապահ Բաքվի հայոց թեմի։

1958 թվականին, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, զատկական տոների առթիվ հովվական այցելության է մեկնում Ռումինիայի ու Բուլղարիայի թեմերը։

1958 թվականի աշնան ընտրվում է Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ, ուր պաշտոնավարում է երկու տարի, ուշադրության արժանի բարեջանությամբ։

1960 թվականին ընտրվում է Բուլղարիայի և Ռումինիայի հայոց թեմերի առաջնորդ, պաշտոններ, որոնք վարում է ցարդ նվիրումով և արդյունավետությամբ, համերաշխ համագործակցությամբ թեմերի պատկառելի թեմական խորհուրդների։

1964 թվականի հոկտեմբերին պարգևատրվում է «Ռումինական Հանրապետության աստղ» շքանշանի 4-րդ աստիճանով։

1964 թվականի նոյեմբերի 29-ին, Մայր Տաճարում, եպիսկոպոս է ձեռնադրվում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ձեռքով, Գերագույն Հոգևոր Խորհրդի միջնորդությամբ և Ռումինիայի ու Բուլղարիայի հայոց թեմական խորհուրդների գրավոր ընծայության թղթերի հիման վրա։

Նորապսակ Տ. Տիրայր եպիսկոպոսը գտնըվում է իր ուժերի և շնորհների ծաղկման շրջանում։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է Տ. Տիրայր եպիսկոպոսին և վստահություն է հայտնում, որ Նորապսակ սրբազանը, իր ապագա եռանդուն ու անձնվեր պաշտոնավարությամբ, միշտ կվայելի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր գնահատությունը և իր թեմերի հավատացյալ ժողովրդի վստահությունն ու հարգանքը։

ԳՐԱԴԱՐԱՆ № 2



# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 8-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գևորգ աբեղա Սերայդարյանը՝ «Մի՛ երկընչիր, միայն հավատա» բնաբանով։*
*Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։*

***

Նոյեմբերի 14-ին, շաբաթ *առավոտյան, Մայր Տաճար այցելեց Աֆրիկա-ասիական համերաշխության Լիբանանի կոմիտեի պատվիրակությունը, Լիբանանի պառլամենտական ղեկավարներից մեկի՝ Ջամալ Ջումբլաթի գլխավորությամբ։*
*Վերջում հարգելի հյուրերին ընդունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը։*

***

Նոյեմբերի 15-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը՝ «Եթե ոք այսպիսի մանկտւոյ ընկալցի յանուն իմ, զիս ընդունի» բնաբանով։*
*Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։*

***

Նոյեմբերի 19-ին, *հինգշաբթի, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, Մայր Աթոռի միաբանության և Ճեմարանի ուսանողության համար դասախոսեց Արտաշես Վրույրը՝ Անիի պատմական հուշարձանների մասին։*

***

Նոյեմբերի 20-ին, ուրբաթ, *Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Ռումինիայի և Բուլղարիայի հայոց բարեջան առաջնորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը, իր արձակուրդը Մայր Աթոռում և իր ծնողների մոտ անցկացնելու համար։*

***

Նոյեմբերի 21-ին, շաբաթ, *«Ընծայումն Ս. Աստուածածնի»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Խորեն վարդապետ Էլլուչյանը։*

***

Նոյեմբերի 22-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։*
*Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։*

***

Նոյեմբերի 26-ին, հինգշաբթի, *Մայր Աթոռ ժամանեց, թեմական գործերով, Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը։*

***

Նոյեմբերի 28-ին, շաբաթ, *«Տօն սրբոց առաքելոցն և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարթողիմէոսի»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։*

***

Նոյեմբերի 30-ին, երկուշաբթի, *Իջման Ս. Սեղանի վրա, եպիսկոպոսական իր անդրանիկ պատարագը մատուցեց Տ. Վահան եպիսկոպոս Տերյանը և քարոզեց «Զաշակերտեցարուք, ես եմ, մի՛ երկնչիք» բնաբանով։*

Դեկտեմբերի 2-ին, չորեքշաբթի, *Երևանում, արվեստի աշխատողների տանը, տեղի ունեցավ խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի ընդլայնված նիստը՝ նվիրված խաղաղության միջազգային շարժման 15-րդ տարեդարձին։ Նիստին մասնակցում էր նաև Վեհափառ Հայրապետը, որը հանդես եկավ խաղաղության նվիրված ճառով։ Նիստում ելույթներ ունեցան նաև խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի նախագահ, գրող Ն. Զարյանը, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը, Արգենտինայի խաղաղության պաշտպանության կոմիտեի անդամ է. Հուլիո Ծոկկոն, գրող Խ. Գյուլնազարյանը և ուրիշները։*

Դեկտեմբերի 3-ին, հինգշաբթի, *Մայր Տաճար այցելեց Արգենտինայի խաղաղության պաշտպանության ազգային կոմիտեի պատվիրակությունը, կազմակերպության նախագահ Սոյսես Գերշմանի գլխավորությամբ։ Հյուրերին ընդունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը։*

Դեկտեմբերի 6-ին, կիրակի, *Մայր Տաճարում իր անդրանիկ պատարագը մատուցեց գերաշնորհ Տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանը և քարոզեց՝ «Ուխտս դիք և կատարեցէք» բնաբանով։*

*Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։*



# ՄՈՍԿՎԱՅԻ ՀՈԳԵՎՈՐ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 150-ԱՄՅԱԿԸ

*Հոկտեմբերի 14-ին լրացավ Մոսկվայի Ռուսական Պատրիարքարանի հովանու տակ գտնվող Զագորսկի հոգևոր ակադեմիայի հաստատման 150-ամյակը։*

*Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսին, հոբելյանական այդ հանդեսի առթիվ, Մոսկվա էր հրավիրել Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին։*

*Վեհափառ Հայրապետը, Երուսաղեմի ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարքի հետ, մեկնում է Մոսկվա Իր շքախմբով, որի կազմում էին Գերագույն Հոգևոր խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը, Երուսաղեմի պատրիարքարանի դիվանապետ հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ Աճեմյանը, Ամենայն Հայոց Կաթողիկոսի գավազանակիր հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը և Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Ա. Գալիկյանը։*

*Մոսկվայի Վնուկովոյի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին և սրբազան պատրիարք հորը դիմավորում են Մոսկվայի միտրոպոլիտ գերաշնորհ Տ. Պիմենը, Զագորսկի մայրավանքի վանահայր հոգեշնորհ Տ. Պիմեն վարդապետը և Մոսկվայի հայոց եկեղեցու ժամանակավոր հովիվ արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Դանիելյանը։*

*Հայ Եկեղեցու սատմերակուցթյանը դիմավորում է նաև ՍՍՌՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի ներկայացուցիչ պր. Սոլովյովը։*

*Օդանավակայանում Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հայրը և դիմավորող բարձրաստիճան հոգևորականները ողջույնի և բարի գալստյան խոսքեր են փոխանակում։ Հայ Եկեղեցու պատվիրակությունը առաջնորդվում է «Լենինգրադսկայա» հյուրանոցը, որտեղ Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարքի անունից կրկնվում է նրա սրտագին հրավերը՝ ներկա գտնվելու հոգևոր ակադեմիայի 150-ամյակի առթիվ տրված հանդիսություններին, որոնց անձամբ գլխավորելու է Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքը։*

*Հոկտեմբերի 14-ին, չորեքշաբթի, առավոտյան ժամը 10-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարք հայրը շքախմբով մեկնում են դեպի Զագորսկի մայրավանքը, որը գտնվում է Մոսկվայից 75 կիլոմետր հեռավորության վրա։*

*Մայրավանքի մուտքի առաջ, Հայ Եկեղեցու պատվիրակությունը դիմավորվում է ջերմորեն ռուս բարձրաստիճան հոգևորականության, ակադեմիայի դասախոսական կազմի և այլ պաշտոնական անձնավորությանց կողմից՝ հանուն Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքի և առաջնորդվում վանքի հատուկ մի հարկաբաժինը հանգստանալու համար։*

*Այնուհետև Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարք հայրը հանդիսավորապես առաջնորդվում են հոգևոր ակադեմիա, որտեղ նրանց սրտաբաց կերպով ընդունում և ողջունում է Ալեքսի Պատրիարքը։*

*Եկեղեցական երեք պետերի միջև տեղի է ունենում ջերմ զրույց սրտագին մթնոլորտում։ Զրույցի ընթացքում Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարք հայրը Ս. Գևորգ զորավարի նկարով փղոսկրյա մի հուշանվեր է հանձնում Ալեքսի Պատրիարքին, որը նա ընդունում է շնորհակալությամբ և սիրով։*

*Ապա Լենինգրադի միտրոպոլիտ Նիկոդիմի առաջնորդությամբ, Հայ Եկեղեցու պատվիրակությունը ծանոթանում է ակադեմիայի 150-ամյակին նվիրված ցուցահանդեսին։*

*Գերաշնորհ Տ. Ալեքսի արքեպիսկոպոսը հյուրերին ծանոթացնում է մայրավանքում գտնվող ռուսական վանքերին։*

*Ահա Ս. Երրորդություն տաճարը, կառուցված 1422 թվականին։ Ուշադրություն են գրավում ԺԵ դարի նկարիչ Անդրե Ռուբլևի սրբանկարները։ Հյուրերը հրավիրվում են այցելելու Ս. Սերգեյի մատուռը, ուր գտնըվում է մեծ սրբի աճյունը և ուր խուռներամ հավատացյալների բազմությունը աղոթում է մի վանականի գլխավորությամբ։*



Զագորսկի Հոգևոր ճեմարանը

*Հայ Եկեղեցու պատվիրակությունը այնուհետև այցելում է եկեղեցու նկուղային հարկը, ուր գտնվում են Ս. Ստեփանոս Նախավկայի աճյունը և մասունքը, ապա Ուսպենսկի (Վերափոխման) տաճարը, կառուցված 1559—1585 թվականներին։ Ուշադրություն է գրավում տաճարի երկնասլաց խաչկալը։ Հյուրերը այցելում են նաև Ս. Հոգեգալստյան եկեղեցին, կառուցված 1476 թվականին, այնուհետև ութհարկանի աշտարակ-զանգակատունը, կառուցված 1741—1769 թվականներին։*

*Հետմիջօրեի ժամը 1-ն էր։ Բոլոր հյուրերը անցնում են հանդիսասրահ։ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարք հայրը տեղ են գրավում Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքի հետ, նախագահության սեղանի շուրջ։*

*Կան բազմաթիվ հյուրեր, հատկապես արտասահմանի Օրթոդոքս Եկեղեցու ներկայացուցիչներ, որոնց թվում Սելանիկի հոգևոր ճեմարանի վերատեսուչը, մի քանի աստվածաբան դասախոսներով։*

*Հանդիսությունը բացվում է Ալեքսի Պատրիարքի օրհնության խոսքով և աղոթքով։*

*Ակադեմիայի 150-ամյա գործունեության նվիրված ընդարձակ զեկուցումով հանդես է գալիս ակադեմիայի մանկավարժական խորհրդի քարտուղար արժանապատիվ Տ. Օստապով ավագ քահանան։*

*Հանդիսության ընթացքում ճեմարանի նախկին շրջանավարտներ, այժմ անվանի հոգևորականներ, ողջույնի և երախտագիտության ջերմ խոսքեր են ասում իրենց սիրելի ճեմարանի հոբելյանի առթիվ։*

*Հանդիսության ժամանակ խոսք է առնում նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը.*

«Հանուն Հայաստանեայց Եկեղեցու, նրա պատմական կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, անձամբ Մեր և Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի անունից, ողջունում ենք Ձեզ և շնորհավորում, սիրելի՛ Սրբազան Պատրիարք Եղբայր Մեր ի Քրիստոս, Ձեր ակադեմիայի 150-ամյա այս հանդիսության առթիվ:

Չափազանց երջանիկ ենք տեսնելով Ձերդ Սրբությանը այսքան քաջառողջ և կայտառ, իբրև քաջ և արթուն Հովվապետ Ռուս Պրովոսլավ մեծ Եկեղեցու:

Ուրախությամբ լսեցինք Ձեր այցելությունը Անգլիա Քենտրբերիի Արքեպիսկոպոսին և Ձեր ողջամբ վերադարձը Ձեր Աթոռը:

Ի սրտե մաղթում ենք Ձեզ երկա՛ր և երկա՛ր կյանք, որպեսզի Դուք, այսուհետև ևս,

Աստուծո կամքով կարողանաք ղեկավարել և հովվել Ռուս Մեծ Եկեղեցուն, որը այնքան մեծ դեր է կատարում նաև խաղաղության պաշտպանության գործում, ծառայելով մարդկության բարօրության գործին»։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը դրվատանքի խոսքեր է ասում Հոգևոր ակադեմիայի գործունեության մասին, որի հովանու տակ, շեշտում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, հաճախ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի շրջանավարտներն էլ են գալիս ծանոթանալու Ռուս Եկեղեցու աստվածաբանության, նրա պատմության, երաժշտության և արվեստին։

Իր օրհնության խոսքի վերջում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ակադեմիային է նվիրում Ս. Էջմիածնի Մայր Տաճարի նկարը, իսկ վերատեսչին, իբրև անձնական նվեր, ոսկե գրիչ։

Հանդիսության վերջում Ճեմարանի եկեղեցում, ուսանողության ուժերով, տրվում է հոգևոր համերգ։

Այնուհետև ճեմարանի վերատեսչությունը, հանդիսության ներկա բոլոր պատվիրակների պատվին, ճեմարանի սեղանատանը, տալիս է մեծ ճաշկերույթ, որն անցնում է ջերմ ու սրտագին մթնոլորտում։

Ժամը 5-ին վերջանում են ակադեմիայի 150-ամյակին նվիրված հանդիսությունները։

Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարք հայրը իրենց շքախմբով հրաժեշտ են առնում ծերունազարդ բայց միշտ կորովի Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքից, ներկա բոլոր բարձրաստիճան հոգևորականներից և վերադառնում Մոսկվա։

ԱՐՍԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԵՐԲԵՐՅԱՆ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
(Անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի)

# ԳՐԻԳՈՐ ՏՂԱ

## Ա.—ԳՐԻԳՈՐ ՏՂԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

*Գրիգոր Տղան գրական ասպարեզ է իջել ԺԲ· դարի վերջին քառորդում Կիլիկիայում և նա այդ շրջանի հայ գրականության աչքի ընկնող և հետաքրքրական դեմքերից մեկն է։ Նրա գրական, եկեղեցական և հասարակական գործունեությունն սկսվում է Ներսես Շնորհալու մահից անմիջապես հետո։ Ներսես Շնորհալին և Գրիգոր Տղան իրենց աշխարհայացքի և ստեղծագործությունների ընդհանուր գծերով շատ նմանություններ ունեն. եկեղեցական միության խնդրում նրանց բռնած դիրքը, գրական ուղղությունը, ստեղծագործական եղանակները, անգամ ոճը, հասարակական-քաղաքական ասպարեզներում նրանց գործունեության նպատակը իրար շատ մոտ են ու հարազատ։ Թեև Գրիգոր Տղան հայ միջնադարի ուշագրավ հեղինակներից է, հաճախ է նրա անունը հիշատակվում մեր ձեռագրերում ու հիշատակարաններում որպես բանաստեղծ, հրապարակախոս և կրոնական-հասարակական գործիչ, սակայն նրա կյանքն ու գրական վաստակները առ այսօր ոչ միայն ամբողջապես, այլ մասնակի կերպով անգամ դեռևս ուսումնասիրության առարկա չեն դարձել։ Գրիգոր Տղան մեր միջնադարի բոլորովին չհետազոտված և մեր հասարակությանը տակավին անծանոթ գրողներից է։ Հայ հին գրականության պատմության հեղինակները (Հ. Գ. Զարբհանալյան, Եղիշե արքեպիսկոպոս Դուրյան, Վ. Փափազյան, Ա. Ջամինյան, Մ. Աբեղյան և ուրիշները) իրենց գործերում միայն հիշում են Գրիգոր Տղայի անունը Ներսես Շնորհալու և Ներսես Լամբրոնացու շարքում, նշում, որ նա գրել է մի ողբ «Վասն առմանն Երուսաղէմի» և մի-երկու թուղթ էլ եկեղեցիների միության վերաբերյալ և ուրիշ ոչինչ։ Ավելի ընդարձակ խոսվում է այս հեղինակի մասին Հ. Մ. Չամչյանի, Հ. Ղ. Ալիշանի, Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի գործերում, որպես միայն եկեղեցական եռանդուն գործիչ և բարեպաշտ ու գործունյա հայրապետ։ Մինչդեռ մեր հին պատմագիրներն ու գրողները (Կիրակոս Գանձակեցի, Սամվել Անեցի, Մատթեոս Ուռհայեցի, Սմբատ Սպարապետ, Վահրամ Րաբունի, Ներսես Լամբրոնացի, Գրիգոր Սկևռացի և ուրիշները) ակնածանքով ու գովասանքով են խոսում նրա գրական և հասարակական գործունեության մասին, որին, Ներսես Շնորհալուց հետո, նշանավոր գրական դեմքերից մեկն են համարում։ Տղայի գրչին են պատկանում բազմաթիվ արձակ թղթեր, տասնյակից ավելի չափածո տարբեր գործեր՝ բարոյակրթական, մանկավարժական, պատմաքաղաքական բովանդակությամբ։ Նա ունի նաև մի քանի մեծ և փոքր պոեմներ, մանկական գրվածքներ և այլն։*

*Այս ուսումնասիրության մեջ աշխատել ենք, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերի ընձեռած նոր տվյալների հիման վրա, ընդգրկել Գրիգոր Տղայի մեզ հայտնի բոլոր արձակ և չափածո գործերը և փորձել ենք վեր հանել դրանց գաղափարական և գեղարվեստական նշանակությունն ու արժեքը։ Նպատակահարմար ենք համարել հեղինակի երկերը բաժանել երկու խմբի՝ արձակ թղթեր և չափածո տարբեր բանաստեղծություններ։ Առաջին խմբի մեջ մտնող այն թղթերը, որոնք վերաբերում են Հայ և Հույն եկեղեցիների միության խնդրին, քննության ենք ենթարկել Գրիգոր Տղայի ազգային-հասարակական գործունեության վերաբերող գլխում, ըստ որում այս թղթերի այն մասերը, որոնք չեն վերաբերում միության խնդրին, քննված են արձակի բաժնում, մյուս թղթերի հետ ընդհանրապես։*

*Չափածո երկերի բովանդակությունն ու բնույթը նկատի ունենալով, բաժանեցինք երեք մասի։*

*Առաջին մասի մեջ մտնում են ծավալով տարբեր մեծ ու փոքր այն բոլոր ոտանա-*

վորներն ու պոեմները, որոնք ունեն կրոնաբարոյակրթական և մանկավարժական բնույթ, իհարկե ոչ բոլորովին զերծ աշխարհիկ կյանքի արտահայտություններից, որի վրա մենք առանձին ուշադրություն ենք դարձրել և ձգտել ցույց տալ, բնագրից բերված փաստերով։ Այս խմբի մեջ մտնող գործերը Գրիգոր Տղայի չափածոյի գերակշռող մեծ մասն են կազմում։

Երկրորդ մասի մեջ մտնում են Սողոմոնի առակների և Ներսես Շնորհալու հետևողությամբ գրված 10—11 ոտանավոր, որոնք ընդհանուր անունով ձեռագրերում կոչվում են «կտակ»։ Այս ոտանավորները վերլուծելու հետ զուգընթաց, վեր ենք հանվել հեղինակի մանկավարժական, բարոյակրթական, դաստիարակչական հայացքները և կրած ազդեցությունը։

Վերջին մասում միայն «Ողբ վասն առմանն Երուսաղէմի» մեծ պոեմն է, որը Գրիգոր Տղայի չափածոյի գլուխ-գործոցն է հանդիսանում։ Նախքան այս պոեմի վերլուծումը, անհրաժեշտ համարեցինք համառոտակի պատմական մի թռուցիկ ակնարկ նետել մեր հին գրականության մեջ եղած ողբերի ժանրի առաջացման, զարգացման և Երուսաղեմի պատմական անցյալի վրա, որոնք սերտորեն կապված են պոեմի էության հետ և հեշտացնում նյութի վերլուծական աշխատանքները։

Գրիգոր Տղայի գրչին պատկանող արձակի և չափածոյի բաժիններում, առանձին նյութի վրա և բնագրերից բերված քաղվածքների համեմատությամբ, ցույց ենք տվել Գրիգոր Նարեկացու և մանավանդ Ներսես Շնորհալու գործերի թողած ազդեցությունը։

* * *

Գրիգոր Տղայի գործերից շատերը տակավին մնում են ձեռագիր վիճակում, որոնք արձակի և չափածոյի ուշագրավ նմուշներ են և արժանի լուրջ հետազոտության։ Գրիգոր Տղան հանդես եկավ որպես գրող բանաստեղծ, որի երկերը պարունակում են գրական և պատմական խոշոր արժեք։ Մեզ հետաքրքրող շրջանում Կիլիկիայում ստեղծված հասարակական, քաղաքական պայմանները, հայկական ինքնուրույն իշխանության առկայությունը, բուն Հայաստանի և եվրոպական երկրների շփումները բարենպաստ հող ստեղծեցին հայ մշակույթի, ազգային արվեստի ու գրականության զարգացման համար։

Արդեն համարյա մի դար էր անցել այն ժամանակից, երբ Ռուբեն Ա-ը Տավրոսի Սև լեռների վրա հիմք էր դրել հայկական ինքնուրույն իշխանության։ Թե՛ Ռուբենը և թե՛ հետագայում նրան հաջորդող Ռուբինյանները մեծ եռանդով աշխատում էին պահպանել և ամրապնդել լեռնային այդ փոքրիկ ազգային իշխանությունը։ Ռուբինյանները Կիլիկիայում հաստատեցին պետական կենսունակ կարգեր, կատարեցին մի շարք բարեփոխումներ՝ իշխանությանը արդիական և քաղաքակիրթ կերպարանք տալու նպատակով։ Սակայն այդ ամենը ձեռք բերվեց երկար տասնամյակների ընթացքում, համառ պայքարների և ծանր ճգնաժամերի գնով։ Գրիգոր Տղայի ապրած ժամանակը համընկնում է Մլեհի (1170—1175), Ռուբեն Բ-ի (1175—1185) և Լևոն Բ-ի իշխանապետության շրջանների հետ, տարիներ, որոնք լի են ազգային ծանր մաքառումներով։ Մլեհի իշխանությունը կարճատև եղավ, միայն 5 տարի։ Հույներն ու խաչակիրները ամեն կերպ ճգնում էին նվաճել Կիլիկիան և վերացնել հայկական իշխանությունը։ Մլեհը ստիպված էր բարեկամական հարաբերությունների մեջ մտնել հարևան նույնիսկ ոչ քրիստոնյա պետությունների հետ՝ երկրի անկախությունը փրկելու համար։

Մլեհի իշխանապետության ժամանակ, Լամբրոնի Օշինյանները ըմբոստացան Ռուբինյանների դեմ։ Սկսվեց ազգամիջյան մի կռիվ։ Թեև Մլեհը շրջահայաց գործիչ էր, քաջարի կռվող և բարեկարգիչ, բայց չկարողացավ երկար մնալ իշխանության գլուխ։ Խաչակիր ասպետների և հունամոլ հայ իշխանների ձեռքով նա սպանվեց դժբախտաբար։ Մլեհին հաջորդեց Ստեփանեի անդրանիկ որդին՝ Ռուբեն Բ-ը։ Վերջինիս տասնամյա տիրապետության շրջանում Կիլիկիան գտնվում էր համեմատաբար խաղաղ պայմաններում։ Լևոն Բ-ին հաջողվեց մաքրել լեռնային և դաշտային Կիլիկիան օտար նվաճողներից և ապահովել իր իշխանության սահմանները։ Այս բարեբեր երկրի աշխարհագրական դիրքը, եվրոպական երկրների հետ ունեցած առևտրական, քաղաքական և մշակութային հարաբերությունները մի կողմից, հայ պետական գործիչների դիվանագետ, շինարար և քաջարի գործունեությունը մյուս կողմից պայմաններ հանդիսացան Ասիայի անկյուններից մեկում ստեղծելու քաղաքակիրթ մի պետություն, ըստ ամենայնի նման եվրոպական ժամանակակից առաջադեմ պետություններին։ Սակայն Կիլիկիան իր ապրած հայկական կյանքով ու հաջողություններով կտրված չէր մայր երկրից՝ բուն Հայաստանից։ Հիրավի, թեպետ այս երկու երկրները աշխարհագրական դիրքով իրարից հեռու էին, թույլ էր նրանց միջև կենդանի կապը, սակայն Մեծ Հայքի հայրենասիրական կյանքը, մշակութային և քաղաքական կապերը գոտեպնդում էին Կիլիկիայի հայ ժողովրդին և զորավիգ հանդիսանում նորանոր

*հաջողությունների համար, թե՛ պետական և թե՛ մշակութային ասպարեզներում։*

*Այն ժամանակ, երբ Լևոն Բ-ը ձեռք էր բերել միջազգային անուն, օրավուր ընդարձակվում էին Կիլիկիայի սահմանները և ամրապնդվում, Արևելյան Հայաստանում էլ, Զաքարյանների օժանդակությամբ, հայ ժողովուրդը սելջուկ բռնակալներից ետ էր վերցնում բռնագրավված հողերն ու քաղաքները և վերականգնում ազգային պետությունը։*

*Զաքարյանների և Լևոն Բ-ի հաջողությունները տեղի էին ունենում միաժամանակ։*

*Կիլիկիայի հատվածը իր պետական, մշակութային և ընդհանրապես ազգային կյանքով միշտ էլ սիրով կապված է մնում մայր երկրի հետ։ Կիլիկիայի ոչ միայն պետական. այլև մշակութային զարկերակն էլ միշտ խփել է բուն Հայաստանի կյանքով։ Զաքարյանների տիրապետությունների ժամանակ, Արևելյան Հայաստանում պայծառանում և իրենց գիտնական վարդապետներով մեծ համբավ են ձեռք բերում Սանահնի, Հաղբատի, Գետիկի, Կայենո, Հաղարծնի և այլ բազմաթիվ վանքեր՝ վանական տարբեր դպրոցներով։ Արևելյան Հայաստանի օրինակով և այդտեղից Կիլիկիա գնացող վարդապետների օժանդակությամբ, այդ կարգի վանքեր ու վանական դպրոցներ հիմնվում ու բազմանում են նաև Կիլիկիայում։*

*Իսկ ի՞նչ էր ներկայացնում հայ գրական կյանքը Կիլիկիայում ԺԲ դարի երկրորդ կիսում, առանձնապես վերջին քառորդում։*

*Սելջուկների արշավանքների հետևանքով, Հայաստանը վերածվել էր ավերակների։ խախտվել և կանոնընթաց հունից դուրս էր եկել երկրի ոչ միայն տնտեսական, այլև նրա հոգեկան ու մտավոր կյանքը։ Աստանդական վիճակի մեջ էր իր ժողովրդի հետ նաև հայոց Կաթողիկոսարանը՝ ժամանակի գրական, մտավոր կյանքի կենտրոնը, որը շուրջ 150 տարի Հռոմկլայում մնալուց հետո, տեղափոխվեց Սիս։ Մի քանի անմատույց վանքեր, որոնք թառել էին ասպատակների ճամփաներից հեռու գտնվող լեռներին կամ ծվարել մութ անտառներում, իրենց գրասեր, գիտնական վարդապետներով, ավարից ու կրակից փրկեցին մեր ազգային մշակույթն ամփոփող մագաղաթե մատյանները, գրեցին նորերը, ընդօրինակեցին ու տարածեցին եղածները։ Զաքարյանների տիրապետության ժամանակ Արևելյան Հայաստանում և Ռուբինյանների օրով Կիլիկիայում այդ վանքերը հանդիսանում էին մեր մշակույթի ու գրականության կենտրոնները, որոնց լույսը քանի գնում այնքան պայծառանում ու տարածվում էր միջնադարյան խավարում։ Այս հաստատությունները միջնադարյան Հայաստանում կոչվել էին ոչ միայն բարեպաշտություն քարոզելու կամ միայն ամրապնդելու համար, այլև դրանք եղել են ժամանակի գիտության, արվեստի ու գրականության վայրեր։ Կիրակոս գանձակեցին պատմում է, թե Արևելյան Հայաստանում Զաքարյանները և որոշ հայ իշխաններ ինչպիսի՛ եռանդով ու արագությամբ վերականգնում էին սելջուկների ձեռքով ավերված վանքերը, կառուցում նորերը և ընդհանրապես լուրջ կերպով զբաղվում վանական-դպրոցական շինարարությամբ. «Եւ այսպէս յաջողեցաւ նոցա ի վերուստ, յաղթութիւն նոցա, զի համբաւ քաջութեան նոցա ել ընդ բազում գաւառս... շինեցան բազում վանորայք, որք ի վաղուց ժամանակէ անտի աւերեալ էին ի հինիցն Իսմայէլի, վերստին նորոգեցան եկեղեցիք, և պայծառացան դաշտք պաշտօնէից, շինեցան և նոր վանորայք, եկեղեցիք, որ ի հնոցն չև էին լեալ վանքս»[1]։*

*Վանքերն ու վանական դպրոցները նույն թափով ու եռանդով ծաղկում էին նաև Կիլիկիայում։ Հիշենք այդ նշանավոր վանքերից մի-երկուսը, որպես գրական կենտրոններ։*

*Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Կիլիկիայում վանական-ուսումնական աչքի ընկնող հաստատություններից է Դրազարկի վանքը, ոչ այնքան հեռու Սիս մայրաքաղաքից։ Այս վանքը գոյություն է ունեցել նախքան Ռուբինյանների իշխանությունը։ ԺԲ դարում Թորոս Ա-ը վերանորոգեց այն, որի համբավը ավելի բարձրացրին այդ վանքի հռչակավոր գիտնականներ Գևորգ, Մեղրիկ և Կիրակոս վարդապետները։ Վերջիններս վանքի դպրոցի աչքի ընկնող ուսուցիչներն են եղել, որոնք միաժամանակ զբաղվել են Հին ու Նոր Կտակարանների ուսումնասիրությամբ և դրա համար էլ, ինչպես հաղորդում է Հ. Ղ. Ալիշանը, վանքի դպրոցը բնորոշվել է որպես «տեղի իմաստասիրաց և ուսումնասիրաց»։ Բացի այդ, Դրազարկը հայտնի է նաև որպես հանգստարան-դամբանատուն։ Այստեղ են թաղված Թորոս Ա, Բ և Գ իշխանները, Ռուբեն Բ-ը, Հեթում Ա-ը, Զապել Ա-ը, Լևոն Բ թագավորի երեք որդիները՝ Ստեփանեն, Ալինախն ու Օշինը, Մեղրիկ, Կիրակոս, Գևորգ վարդապետները և Գրիգոր Տղան։*

*Մշակութային և գրական կենտրոն է եղել Լամբրոնի հայ իշխաններին պատկանող Սկևռա վանքը՝ իր «լսարան» դպրոցով։ Այս վանքը այնքան հին չէ, որքան Դրազարկը։ Օշին իշխանի ջանքերով այն հիմնադրվել է Լամբրոնի բերդի հետ և այնուհետև միշտ ե-*

[1] Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», Երևան, 1961, էջ 163—164 (աշխատասիրությամբ Կարո Մելիք-Օհանջանյանի)։

ահել է Օշինյանների խնամատարության և իրավասության ներքո։ Սկևռա վանքում են կրթվել և դաստիարակվել Ներսես Լամբրոնացին, ապա Գրիգոր Սկևռացին, Գևորգ Երզնկացին, երաժշտագետ Սիմեոն վարդապետը, Թովմաս գեղագիր գրիչը և շատ ուրիշներ։ Վանքի դպրոցն ունեցել է ձեռագրերի և «հարց գործոց» հարուստ մատենադարան։ Այս վանքում իրենց մատենագրական շնորհքով փայլեցին Լամբրոնացու աշակերտներից ողբագիր Խաչատուրը, «Հարանց վարք» գիրքը հավաքող և խմբագրող Գևորգը, ուսուցիչներ Գրիգորն ու Բարսեղը, մյուս Բարսեղ քահանան, Հովհաննեսը և Բարթողիմեոսը, մյուս Գևորգը, Մխիթար և Մարկոս վարդապետները, Ստեփանոս Սկևռացին[3], Ստեփանոս դպիրը և ուրիշ բանասեր և գիտնական շատ վարդապետներ։

Բացի վերոհիշյալ վանքերից, ուսման ու գիտության վայրեր են եղել, ոչ պակաս նշանավոր գիտնականներով, նաև Գռների, Կրակա, Անդրեասյանց և շատ ուրիշ վանքեր։

Թե՛ Արևելյան Հայաստանի և թե՛ Կիլիկիայի վերոհիշյալ վանքերում ու նրանց կից դպրոցներում, կրոնական-աստվածաբանական առարկաների կողքին, դասավանդվում էին նաև գիտություններ, փիլիսոփայություն և արվեստ։ Այնուամենայնիվ կարևոր տեղ էր գրավում գրականության մեջ կրոնա-դավանաբանական ճյուղը, որը զարգանում էր իր տարբեր տեսակներով։ Այս երևույթը բացատրվում է նրանով, որ ԺԲ դարի երկրորդ կեսերին, տակավին Ներսես Շնորհալու ժամանակ, հույներն առաջ քաշեցին միության խնդիրներ (որոնց հետ կապված էին նաև դավանաբանական մի քանի հիմնական հարցեր), և սրանք իրենց արտահայտությունը գտան նաև գրականության մեջ, հաճախ արձակ, երբեմն էլ չափածո ձևերով։ Դավանաբանական արձակը, որպես գրական նոր տեսակ, երևան եկավ մեծ մասամբ թղթերի և նամակների ձևով, որոնց հիմքը դրել էր Շնորհալին։ Այնուհետև, մի կողմից երկրի ներքին կյանքը, մյուս կողմից էլ արևմտյան քրիստոնյա երկրների ու թուրք-արաբական ժողովուրդների հետ ունեցած մերձավորությունն ու շփումը, ինչպես նաև առևտրական և մշակութային կապերը ազդակ հանդիսացան և զարկ տվեցին նաև գրական նոր տեսակների առաջացմանն ու զարգացմանը։

Այս շրջանում, գրականության զուգընթաց, առաջ են գալիս նաև գիտական և օրենսդրական գրվածքներ (Մխիթար Հերացի, Մխիթար Գոշ, Ներսես Լամբրոնացի և ուրիշներ)։ Գրականության և գիտության հարըստացման բնագավառում նկատելի դեր են խաղում նաև թարգմանական գրվածքները։ Վերջիններիս ազդեցության տակ մի կողմից հարստանում էր ազգային ինքնուրույն գրականությունը, մյուս կողմից էլ հայ ժողովուրդը ծանոթանում էր ազգային գիտության ու գրականության։ Թարգմանական ու հարևան ազգերի գրականությանը հաղորդակից լինելու գործին դեռևս ԺԱ դարից Գրիգոր Մագիստրոսը և ապա Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը մեծ տեղ էին տալիս։ Այս ուղղության հետևեցին նաև Գրիգոր Պահլավունին, Ներսես Շնորհալին, Գրիգոր Տղան, հետագա գրողներից Մխիթար Հերացին, Ներսես Լամբրոնացին և Մխիթար Գոշը։

Թարգմանական գրականության մեջ այս դարում բացառիկ մեծ տեղ է գրավում Ներսես Լամբրոնացին. սա թարգմանեց Անդրեաս Կրետացու գրած Հովհաննու Հայտնության մեկնությունը, Նեղոսի «Վասն Պատրիարքական Աթոռոց», Բենեդիկտոսի «Սահմանք կրոնաւորաց» գործերը, Գևորգ Սկևռացու խմբագրած «Հարանց վարք»-ում եղած «Խրատք ճգնաւորաց» մասը և այլն։ Լամբրոնացին չի բավականացել միայն հոգևոր, կրոնական բնույթ կրող գործերի թարգմանությամբ։ Նրա թարգմանությունների մեջ կարևոր են նաև «Բիւզանդական օրէնսգիրքը», «Զինուորական օրէնք» և «Թագաւորօրհնէք» գործերը, որոնք թարգմանվեցին Լևոն Բ թագավորի և Գրիգոր Տղայի խորհրդով։ Բացի այդ ամենից, Լամբրոնացին էր հունարենից և լատիներենից թարգմանում արքունական և հայրապետական թղթերը, որոնք վերաբերում էին միջազգային հարաբերություններին, եկեղեցիների միության խնդիրներին և այլն։ ԺԲ դարի գրականության մեջ ավելի զարգացավ ու տարածվեց մի հին գրական տեսակ ևս, որը կրում էր «Հովվական թուղթ» անունը։ Գրական այս տեսակը սերտորեն կապված էր Կիլիկիայի հայ իրականության հետ։ Հայ ժողովուրդը բաժանված էր երկու մեծ հատվածների՝ արևելյան և արևմտյան։ Ինչպես հայտնի է, Հայրապետանոցը գտնըվում էր Կիլիկիայում։ Ամենայն Հայոց Հայրապետը ի վիճակի չէր կենդանի կապ պահելու ժողովրդի հետ, չէր կարող շրջել ու քարոզել, որովհետև աշխարհագրական և քաղաքական պայմանները արգելք էին հանդիսանում։ Ելնելով այս դրությունից, Կիլիկիայի հայոց հայրապետները, առանձնապես Ներսես Շնորհալին, ապա և նրա հաջորդները, լայն տեղ էին տալիս «Հովվական թուղթ» կոչված նամակներին, որպիսի ձևը հետա-

[3] Ըստ Ստեփանոս Օրբելյանի, Ստեփանոս Սկևռացին իր նախնական կրթությունը Սյունյաց աշխարհում ստանալուց հետո, ինչպես արևելյան վարդապետներից շատերը, գնացել է Կիլիկիա՝ ուսումը շարունակելու։

գայում ավելի գործածվեց ու զարգացավ, որպես գրական նոր տեսակ։

Սկսած ԺԲ դարագլխից, Սարկավագ վարդապետը հայ գրականության մեջ արդեն մտցրել էր առողջ, կենսունակ մի տեսություն, այն է, որ արվեստը պիտի լինի բնական և սերտորեն կապված բնության հետ։ Արևելյան Հայաստանի մեծատաղանդ բանաստեղծի այս տեսությունը նրա կրտսեր ժամանակակիցը՝ մեծ բանաստեղծ Ներսես Շնորհալին ոչ միայն ընդունեց, այլև կիրառեց իր բազմատեսակ ստեղծագործություններում։ Շնորհալին էլ իր հերթին սիրեց ու երգեց բնությունը, գրեց հատուկ բնագիտական մի պոեմ՝ «Յաղագս երկնից և զարդուց նորա» վերնագրով։ Իր բազմաթիվ մանր ու խոշոր արձակ և չափածո երկերի մեջ, նա լայն տեղ տվեց բնությունից վերցրած ուղղակի և այլաբանական պատկերներին։ Հարյուրավոր հանելուկներ նա մշակեց ժողովրդից, բնությունից և տիեզերքից վերցրած թեմաներով՝ դեպի աշխատանքն ու բնությունը մարդկանց մեջ սեր առաջացնելու նպատակով։ Շնորհալին ավելի ևս զարգացրեց Սարկավագ վարդապետի ձեռքով շարականների մեջ մտցրած հայրենասիրությունը։ «Ողբ Եդեսիոյ» աշխատության մեջ և որոշ շարականներում և արձակ թղթերում, Շնորհալին դրսևորեց հայրենասիրություն և իրական կյանք։

Ոչ անհայտ գրական մշակներ են եղել նաև Կարմիր վանքում, Ստեփան Մանուկ գիտնանի ձեռքի տակ դաստիարակված, Ներսես Շնորհալու դասընկերներ Սարգիս Շնորհալին և Իգնատիոս Շնորհալին։

Այդ դպրոցի գրասեր, քերթելու ընդունակություն ու շնորհք ունեցող վարդապետները կոչվում էին Շնորհալի։ Սարգիս Շնորհալին գրական աշխատանքով էր զբաղվում Քարաշիթի վանքում, իսկ Իգնատիոսը՝ Սև լեռան Շափիրի կոչված անապատում։ Գիտնական Ստեփան Մանուկի հանձնարարությամբ և ղեկավարությամբ, այս երկու Շնորհալիները կատարում էին թարգմանական և մեկնողական աշխատանք։

Թե՛ Արևելյան Հայաստանի և թե՛ վերևում հիշված բազմաթիվ վանական դպրոցներն էին հանդիսանում մեր ազգային մշակույթի առաջմղիչ ուժը։ Այդ դպրոցներում, աստվածաբանության և փիլիսոփայության հետ միասին, զարգանում էին նաև գրական կամ աշխարհիկ գիտություններ՝ մաթեմատիկա, տիեզերագիտություն, տոմարագիտություն և այլ առարկաներ։ Որոշ քաղաքներում ու վայրերում բացվել էին նաև աշխարհիկ դպրոցներ, վանքերից և մենաստաններից բոլորովին անկախ, որոնք աչքի ընկնող նորություն էին միջնադարի կրթական համակարգի մեջ։ Գրեթե բոլոր վանքերի դպրոցներին կից կային հարուստ մատենադարաններ հին, արժեքավոր ձեռագրերով ու գրքերով։

Կիլիկիայի գրական, գիտական դեմքերը մի կողմից սերտորեն կապված էին բուն հայրենիքի հարուստ փորձերի ու սովորույթների, իսկ մյուս կողմից էլ ժողովրդի հետ և ստեղծում էին գրական ու գիտական այնպիսի երկեր, որոնք ընդհանրապես արտացոլում էին հայ ժողովրդի կյանքի այս կամ այն կողմը, նրա երազներն ու տրամադրությունները։ Կյանքի և աշխարհայացքի մեջ կատարվում է զգալի տեղաշարժ։ Աշխարհականանում է գիտության և գրականության ոչ միայն բովանդակությունը, այլև լեզուն։ Ռուբինյանների տիրապետության ժամանակ, աշխարհիկ լեզուն մուտք է գործում նաև պետական պաշտոնական գործերում։ Իշխաններն իրենց հրովարտակները, նվիրագրերը, դաշնագրերը և այլ գրությունները գրում էին աշխարհիկ, համարյա թե ժողովրդի խոսած լեզվով։ Գրաբար լեզուն սահմանափակվում է միայն եկեղեցական գրականության և պատմագրության շրջանակներում։ Բանաստեղծները, նույնիսկ գիտնականները, ձգտում էին գրել ժողովրդին հասկանալի լեզվով։ Գրողները մոտենում էին ժողովրդին ու նրա անգիր բանահյուսությանը։ Գրվում էին առակներ, հանելուկներ, խրատական, մանկավարժական մեծ ու փոքր ոտանավորներ, աշխարհիկ թեմաներով պոեմներ, ներբողներ, ողբեր և այլն։ Կրոնական, դավանաբանական և բարեպաշտական գաղափարների կողքին, արտահայտություն են գտնում հայրենիքի և բնության սերը։ Եթե նախընթաց դարերի կրոնական-եկեղեցական գեղարվեստական արձակի և չափածոյի մեջ գրեթե բացակայում էին գրողի անհատականությունը, անձնական ապրումները, ապա այժմ, գրվածքի մեջ երևում էին նաև գրողի հույզերն ու զգացմունքները, նրա ներքին աշխարհը, ձգտումներն ու խոհերը։

Եվ, վերջապես, Գրիգոր Տղայի ժամանակ են ապրել և ստեղծագործել Ներսես Լամբրոնացին, Մխիթար Հերացին, Մխիթար Գոշը, Վահրամ Րաբունին, պատմագիր Մատթեոս Ուռհայեցին և ուրիշներ։

Նախքան Գրիգոր Տղայի գրական ասպարեզ գալը, մենք Կիլիկիայում արդեն ունեինք հարուստ գրականություն, որի գլխավոր ներկայացուցիչը և ուղղություն տվողը հանդիսանում է մեծ բանաստեղծ Ն. Շնորհալին։

Ահա ա՛յդ ժամանակ և գրական ա՛յդպիսի մի միջավայրում էր, որ հրապարակ եկավ Գրիգոր Տղան։

(Շարունակելի)

Ա. ՍԱՄՎԵԼՅԱՆ
Հայաստանի Պետական պատմության թանգարանի կրտսեր գիտական աշխատող

# ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆ
## (Ծննդյան 100-ամյակի առթիվ)

*Երվանդ Լալայանը հայագիտության ավագ սերնդի այն ներկայացուցիչներից մեկն է, որը մեծ երախտիք ունի և գիտական լուրջ ավանդ է ներդրել հայ ազգագրության պատմության մեջ։ Հարուստ ու բազմազան է Լալայանի թողած ժառանգությունը։ Նույնքան հարուստ ու բազմազան են նրա գործունեության շրջանակները՝ ազգագրագետ, բառիս լայն առումով, հնագետ, խմբագիր, հրատարակիչ, մանկավարժ, թանգարանագետ։*

*Դարերի խորքից եկող մեր ժողովրդի կենցաղն ու սովորույթները, հավատքն ու մշակույթը դարձել են նրա հետաքրքրասիրության նվիրական առարկան։ Ժողովրդի ընդերքից եկող այդ անմշակ ժառանգությունը Լալայանը հավաքել, դասակարգել ու գրի է առել, դարձնելով այդ բոլորը հանրամատչելի գիտական արժեքներ։ Համառ ու տևական է եղել Լալայանի գիտահետազոտական գործունեությունը. եթե դրան ավելացնենք նրա հետևողականությունը, ապա միանգամայն պարզ կդառնա, թե ինչպիսի ծանր պայմաններում, համարյա միայնակ, նա կարողացել է կարճ ժամանակամիջոցում կատարել մի ամբողջ գիտական ինստիտուտի աշխատանք։*

*Այսուհանդերձ, չի կարելի ասել, թե ազգագրությունը իբրև գիտություն սկզբնավորվում է Լալայանով։ Մեր իրականության մեջ, մինչև Լալայանը եղել են երախտաշատ գիտնականներ, որոնք նույնպես զբաղվել են ազգագրությամբ (Աբովյան, Թաստամյան, Ախվերդյան, Սրվանձտյան, Խալաթյան, Աղայան, Րաֆֆի, Պռոշյան և այլն), սակայն նրանց կատարած ազգագրական աշխատանքները աչքի էին ընկնում միակողմանիությամբ, չկար միասնական ծրագիր և առաջնորդող գիտական ուղղություն։ Լալայանը առաջինն էր, որ տքնաջան աշխատանքի միջոցով կարողացավ հավաքել ու գրի առնել հայ ազգագրությանը վերաբերող նյութերը։ Նա այդ ընթացքում մշակեց ու հարստացրեց նաև հայ բանահյուսությունը հնագիտական ու մարդաբանական հարցերի հետ, ազգագրության համար ստեղծելով որոշակի սիստեմ։ Միաժամանակ նա լայն ընդգրկում տվեց հարցերի մշակմանը։ Լալայանը շատ լավ էր գիտակցում, որ առանց այդ «սև աշխատանքի», չէր կարելի վեր հանել աշխատավոր ժողովրդի ստեղծած ազգային դարավոր կուլտուրան, թափանցել նրա կենցաղի հինավուրց ծալքերի մեջ։*

*Հայ ժողովրդի կենցաղի բազմակողմանի ուսումնասիրության, ժողովրդական բանահյուսության հավաքման ու գրառման գործին Լալայանը մոտենում էր ոչ որպես սառը արձանագրող, այլ որպես ակտիվ հետազո-*

տող, գիտնական ու գեղագետ։ Իր դրառումները նա կատարում էր խստապահանջությամբ, շեշտը դնելով աշխատավորության բարքերի վրա. մի հանգամանք, որը մինչև Լալայանը սակավ էր արժանացել հետազոտողների ուշադրությանը։ Հարկ է նշել, որ նա իր գործունեության ճանապարհին հանդիպում է մի շարք դժվարությունների։ Նյութական միջոցների բացակայության վրա, ավելանում են հետամնացության պատճառով հարուցվող դժվարությունները։ Խուլ գյուղական բարքերը՝ կանանց չխոսկանությունը, օտար տղամարդու մոտ չերևալը, խոր ամոթխածությունը, վախն ու կասկածը մեծամեծ դժվարություններ են ստեղծում գյուղից-գյուղ շրջող Լալայանի առջև։

Պակաս դժվարություն չէր հարուցում հայ իրականության բազմաբարբառայնությունը։ Օրինակ, ֆոլկլորային նյութեր (հեքիաթ, երգ, պարերգ) գրի առնելիս, նա միշտ աշխատում էր հավաքել տվյալ շրջանին յուրահատուկ բարբառով, հարազատ մնալով բարբառային նրբերանգներին։

Լալայանի գիտական մոտեցման մի կարևոր և գնահատելի կողմն էլ այն է, որ նա չի սահմանափակվել միայն հայ ժողովրդի կենցաղի ուսումնասիրությամբ։ Նրան հետաքրքրել են նաև Հայաստանում ապրող ասորի, քուրդ, ռուս աղանդավոր բնակչության կյանքն ու կենցաղը։ Նրա այդ ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս ընթերցողին, հետազոտողին գաղափար կազմելու նաև այդ ժողովուրդների պատմական անցյալի մասին և ծանոթանալու նրանց սովորույթներին ու կենցաղին։

Դժվար է ամենայն մանրամասնությամբ գրել Լալայանի մասին, քանի որ դժվար է նույնիսկ պատկերացնել այն ահռելի աշխատանքը, որ նա կատարել է մեր սերնդին անծանոթ ծանր պայմաններում, սակայն նա հասավ իր նպատակին, գիտությանը իր խոսքն ասելով և թողնելով հարուստ ու բազմակողմանի ժառանգություն։

Խոսել Երվանդ Լալայանի մասին՝ նշանակում է խոսել Լալայան ազգագրագետի, հնագետի, մանկավարժի, թանգարանագետի, մանավանդ խմբագիր-հրատարակչի մասին։

Երվանդ Լալայանը ծնվել է 1864 թվականին Ալեքսանդրապոլում (Լենինական)։ Նրա հայրը ծնված է եղել Շուշիում, պապը՝ Շուշու Թաղլաթ գյուղում։ 1881 թվականին Լալայանը ընդունվում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը և ավարտում է այն 1885 թվականին, ապա մեկնում Շվեյցարիա և ուսումը շարունակում Ժընևի համալսարանի հասարակագիտական բաժնում։ Ժընևից հետո, 1894 թվականին, նա մեկնում է Վիեննա և Մխիթարյան միաբանության հարուստ մատենադարանում խորամուխ լինում հայագիտության մեջ։ Սակայն այդ չի խանգարում, որ նա մասնագիտանա նաև բնագիտության ու մարդաբանության մեջ։ Վիեննայից հետո Լալայանը մեկնում է Փարիզ և հաճախում մարդաբանական դասընթացներին։ Կարճ ժամանակից հետո բացահայտվում են Լալայանի կարողությունները և Փարիզի մարդաբանական ընկերությունը, գնահատելով նրա բացառիկ առաջադիմությունը, ընտրում է նրան թղթակից անդամ։ 1895 թվականի մայիսին, երիտասարդ, բայց արդեն հարուստ գիտելիքների պաշարով Լալայանը մարդաբանական ընկերության առջև կարդում է իր անդրանիկ ուսումնասիրությունը, արժանանալով ունկնդիրների հավանությանը։ Այս հաջողություններից ոգևորված, Լալայանը մեկնում է Լոզան, մասնակցում մանկավարժական դասընթացներին, փայլուն կերպով հանձնում է քննությունները և ստանում մանկավարժի վկայական։ Զինված ազգագրական, բնագիտական և մանկավարժական բարձր գիտելիքներով, նա վերադառնում է հայրենիք և շուրջ 12 տարի աշխատում Ներսիսյան դպրոցում որպես ուսուցիչ։



Երվանդ Լալայան

*Դեռևս ուսումնառության առաջին տարիներից, Լալայանի մեջ արթնանում է սեր դեպի ազգային գրականությունը, ազգային կյանքն ու ժողովրդական բանահյուսությունը, և որ ամենից կարևորն էր, նրա մեջ հղանում է «Ազգագրական հանդես» հիմնելու գաղափարը։ Ձեռնարկելով հրատարակչական մի այդպիսի ծավալուն աշխատանք, նրան հարկավոր էր նյութեր հավաքել այդ ուղղությամբ։ Հաղթահարելով բազմապիսի դժվարություններ, նրան հաջողվում է 1896 թվականին լույս ընծայել «Ազգագրական հանդես»-ի առաջին գիրքը, որը շարունակվում է մինչև 1916 թվականը։*

*Այսպիսով, նրա ձեռնարկած համառ ու տևական աշխատանքի շնորհիվ, հայ ընթերցող հասարակության սեղանին է դրվում 26 ստվարածավալ գիրք։ Լալայանին հաջողվում է «Ազգագրական հանդես»-ի շուրջը համախմբել ազգագրությամբ զբաղվող գրեթե բոլոր գիտական ուժերին, ուսումնասիրողներին։ Հանդեսին թղթակցում էին ժամանակի խոշորագույն դեմքերը՝ Մ. Աբեղյանը, Ս. Մալխասյանը, Թ. Թորամանյանը, Խ. Սամվելյանը, Լեո, Ս. Լիսիցյանը, Կ. Վարդապետ Կոստանյանը, Ս. Զելինսկին, Հ. Աճառյանը, Գ. Լևոնյանը, Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը և ուրիշներ, թղթակցում էին նաև Լոնդոնից ու Վենետիկից, Վիեննայից ու Վանից, Փարիզից ու Երուսաղեմից։ «Ազգագրական հանդես»-ի առաջին գրքի հրատարակումով արդեն հայտնի է դառնում Լալայանի աշխատանքի ու ծրագրի թափը։ Զրավարարվելով ձեռք բերած հաջողություններով, Լալայանը որոշում է հիմնել նաև «Ազգագրական ընկերություն»։ 1899 թվականին Լալայանը խնդրում է Մկրտիչ կաթողիկոսի միջնորդությունը ընկերություն հիմնելու համար[1]։ Ստանալով համապատասխան աջակցություն, 1900 թվականի նոյեմբերին Թիֆլիսում հիմնադրվում է «Հայոց ազգագրական ընկերություն»-ը։ Թե ինչպիսի գործունեություն ու ծրագիր է ունեցել ընկերությունը՝ մեր նպատակադրման շրջանակներից դուրս է, սակայն հարկ ենք համարում նշել, որ շնորհիվ Լալայանի ձեռք առած միջոցառումների, այսօրվա ուսումնասիրողի ձեռքի տակ Հայաստանի պետական պատմության և արվեստի ու գրականության թանգարանների արխիվներում ամբարված են շուրջ 1000-ից ավելի փաստաթղթեր ու նամակներ։ Իբրև լրացում անհրաժեշտ է նշել, որ ընկերություն հիմնելուն նպաստել է նաև Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանի ու Խալաթյանի կազմած «Հայ ազգագրության ծրագիր»-ը, որով և առաջնորդվել է Լալայանը։ Երախտագետ աշակերտը չի մոռանում իր երախտավոր ուսուցչին. «Ես ազդվեցի Խալաթյանցի ծրագրից,— գրում է Լալայանը,— և ինքս ինձ նվիրեցի ազգագրության»։ Եվ իրոք, մանկավարժական աշխատանքին զուգընթաց, ամռան ամիսներին Լալայանը շրջում է Հայաստանում և Հայաստանից դուրս գտնվող հայաբնակ գավառներում։ Նրան հաջողվում է այցելել Արևմտյան Հայաստան, շրջագայում է Վասպուրականում, Տարոնում և ուսումնասիրում ու գրի է առնում այնտեղի հայերի կյանքը և ամբարում ազգագրական հարուստ տեղեկություններ։ Այս շրջագայությունների ընթացքում հավաքած առատ նյութերը Լալայանին հնարավորություն են տալիս հետագայում ամբողջացնելու իր ուսումնասիրություններն ու տպավորությունները։*

*Պատմության թանգարանի դիվանում են գտնվում նաև Լալայանի օրագրության ձեռագրերը, որոնք հարուստ ու բովանդակալից նյութեր են պարունակում նրա կյանքի ու գիտական գործունեության վերաբերյալ։ Նրա օրագրություններից մեկում կարդում ենք, թե ինչպես երկու շաբաթվա ընթացքում միայն թուրքահայ փախստականներից հավաքել է ու գրի առել բազմաթիվ փաստեր, նրանց կենցաղի ու սովորությունների մասին նյութեր, որոնց ընդհանուր քանակությունը հասնում է 847-ի։ Այս ամենի մեջ առանձին տեղ է գրավում մշեցիների ազգագրության վերաբերյալ հավաքած նյութերը։ Շրջագայությունների ընթացքում մեծ ազգագիրը հանդիպել է բազմաթիվ զրկանքների և մի քանի անգամ փորձության է ենթարկում իրեն, սակայն իբրև գործի սիրահար, երբեք չի հուսահատվում ու հավաքում է այն ամենը, ինչ պետք էր իրեն և հայագիտությանը։ Եթե չլիներ Լալայանի տոկուն համառությունը, ապա ազգագրական շատ ու շատ արժեքներ այսօր անդարձ կորած կլինեին մեզ համար։ Նրա ուսումնասիրությունները ոչ միայն ազգագրական են ու ֆոլկլորային, այլև մարդաբանական, տեղագրական, հնագիտական, որոնք հմուտ ազգագրագետի ձեռքի ու ջանասիրության արգասիքն են հանդիսանում։ Նրա անմիջական ղեկավարությամբ ստեղծվել է «Ազգագրական ընկերություն»-ը, որը նպատակ է ունեցել տարածել նաև մարդաբանական գիտություն հայ իրականության մեջ։ «Մարդաբանական գրադարան» խորագիրը կրող հրատարակության առաջաբանում Ե. Լալայանը հետևյալն է գրում. «Թերթերի մեջ սփռված առանձին լույս տեսնող ազգագրական հոդվածներն արդեն ապացուցում են, որ հայ ազգն էլ է զարթնել խոր քնից և ցանկանում է կատարել գի-*

[1] «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1899 թ., № 4, էջ 283։

*տության խոսքը։ Նա կամենում է ճանաչել յուր ազգային հատկությունները, որի վրա էր հիմնելու իր ազգային զարգացումը։ Մեր այս գործը այդ զարգացման արդյունք է, և մեր կոչումը՝ այդ գործին գիտական ուղղություն տալը և աշխատողների մեջ միություն մտցնելը»[2]։ Հայկական հուշարձանները լայն հասարակությանը ծանոթացնելու նպատակով, «Ազգագրական ընկերությունը» որոշում է արշավ կազմակերպել դեպի Անի։ Անի գնացողների առաջին շարքում էր նաև Երվանդ Լալայանը։ Նա Անի էր գնում արդեն ոչ թե իբրև ազգագրագետ, այլ իբրև հնագետ։*

*1906 թվականին Լալայանը որոշում է գրի առնել «Սասմա ծռերը», Նոր-Բայազետի բարբառով, որի համար մեկնում է Նոր-Բայազետի գավառի Ղշլաղ գյուղը։ «Սասմա ծռեր»-ի այդ փոքրիկ վարիանտում պատկերված են հայ ժողովրդի կենցաղը, միջնադարի պատմական անցքերի վիպական արձագանքները և ժողովրդական հերոսի էպիկական սխրանքները։*

*1906—1908 թվականներին Լալայանի գործունեությունը նշանավորվում է նրանով, որ նա ձեռնարկում և Սևանի ավազանում պեղում է շուրջ 500 դամբարան։ Լալայանը պեղումներ է կատարել նաև Քյուլ-Թափայում, Նախիջևանի, Կարմրավանքի շրջակայքում և Օրդուբադում, 1915 թվականին՝ Շրեշ բլուրում և հեռավոր Նուխիում։ Սովետական շրջանում, 1927 թվականին, երբ նա թանգարանի հնագիտական բաժնի վարիչ էր, պեղումներ է սկսում Կոտայքում, Էլարում, Բաշ գյուղում և Ջրվեժում, որտեղ հայտնաբերում է կավանոթներ, տարբեր տեսակի մետաղյա իրեր, օբսիդիանից զանազան տեսակի գործիքներ և զարդեր։ Առաջինը Լալայանն էր, որ Էջմիածնի մոտ (1915 թ.), Շրեշ բլուրում և Էլար գյուղի մոտ պեղումներ կատարելիս, հայտնաբերած դամբարաններից երևան հանեց մի շարք իրեղեն ապացույցներ, զարգացած նոր քարե-դարյան և էնեոլիթյան դարաշրջանի մշակույթին վերաբերող։ Սևանի ավազանում պեղումներ կատարելիս, նա բազմաթիվ բրոնզյա իրերի և մեծ մասամբ սև գույնի կավանոթների հետ հայտնաբերում է մի զարդարուն փայտյա սայլ։ Պեղումներ կատարելուց հետո, Լալայանի համար անհրաժեշտություն է դառնում պեղած նյութերը ոչ միայն պահպանել, այլև ցուցադրել։ Ըստ էության, սա ավելի դժվարին խնդիր էր, քան պեղումներ կատարելը։ Լալայանը Թիֆլիսում, Ազգագրական ընկերության կից, հիմնում է մի փոքրիկ թանգարան։ Այդ նյութերը հետագայում, 1921—1922 թվականներին, նա փոխադրում է Երևան, որին ավելանում են Նոր-Նախիջևանի թեմական դպրոցի, ինչպես նաև Էջմիածնի թանգարանի նյութերը, որով և հիմնադրվում է Հայաստանի պատմության թանգարանը։*




«Ազգագրական հանդես»-ի տիտղոսաթերթեր

*Լալայանը մեկ տարվա ընթացքում կատարել է նույնիսկ մի քանի շրջագայություններ։ Նա սիրում էր լինել գյուղացիների մոտ, լսել նրանց զրույցները իրենց կենցաղի, կյանքի և սովորույթների մասին։ Նա ջանասիրությամբ է հավաքել նաև ժողովրդական առակները։*

*1921—1922 թվականների ձմռանը, Կովկասի հայոց ազգագրական ընկերության հիմնադիր ու ղեկավար Ե. Լալայանի ջանքերով, Թիֆլիսից Երևան է փոխադրվում նաև ընկերության հարուստ հայագիտական գրադարանը՝ պատմա-ազգագրական թանգարանի հայագիտական և ազգագրական գույքը։ Երևան է տեղափոխվում նաև հայկական ձեռագրերի հավաքածուն։ Լալայանը մեծ ջանք է գործադրել, որպեսզի հավաքի հայկական ձեռագրերը և հրատարակի թե՛ դրանց ցուցակները և թե՛ բնագրերը։ Այս մասին ծրագրային հանգամանալից գրառումներ կան նրա ձեռագիր ժառանգության մեջ։*

---

[2] «Ազգագրական հանդես», Շուշի, 1895 թ., գիրք Ա, էջ 6։

*1922 թվականի գարնանը հիմնադրվում է Հայաստանի պետական պատմության թանգարանը, իր հնագիտական և ազգագրական բաժիններով։ Այս ամենապատասխանատու բաժինների համար վարիչ է կարգվում բազմավաստակ Երվանդ Լալայանը, որը մինչև իր կյանքի վերջը պատվով վարում է իր գործը, անընդհատ հարստացնելով թանգարանը նորանոր նյութերով։*

*1910 թվականին գտնվելով Վանում և Վասպուրականում, Լալայանը որոշում է կազմել մի առանձին հատոր, նվիրված Հայաստանի այդ հնագույն նահանգի ազգագրական տեղեկություններին, ինչպես նաև ձեռնարկում է գրել առանձին ուսումնասիրություն Շատախի և Մոկսի մասին։ Այդ իսկ պատճառով, նույն թվականին նա լինում է Հայոց Ձոր գավառում և հավաքում է մեծ քանակությամբ հարուստ նյութեր։ Ջարմանալի աշխատասեր և բեղմնավոր գրչի տեր գիտնական էր Լալայանը։ Ուշագրավ է, որ նույնիսկ այդ նույն, 1910 թվականին, նա սկսում է մշակել նաև Ապարանում իր հավաքած նյութերը։*

*Նրա գրչին են պատկանում 35-ից ավելի առանձին աշխատություններ։ Նրա ընդգրկումը նույնքան մեծ էր, որքան մեծ էր հայկական գավառների քանակը և բռնած տարածությունը՝ Ջավախք, Վարանդա, ողջ Զանգեզուր, Սևանի ավազան, Բուլանըխ, Գուգարք։*

*Նրա «Ջավախքի բուրմունքը»[3] խորագրով ժողովածուն իր մեջ ընդգրկում է գլխավորապես ժողովրդական բանահյուսության նվիրված նյութեր, կենցաղային երգեր, պարերգեր, կյանքի պատկերներ և այլն։*

*Վարանդա[4] գավառի մասին աշխատությունը Լալայանը գրել է 1897 թվականին։ Սա իր մեջ պարունակում է Շուշի քաղաքին վերաբերող մի շարք արժեքավոր տեղեկություններ, ինչպես և գյուղերի, դաշտերի ու գետերի, կլիմայի, ժողովրդի և նրանց սովորությունների ու արհեստների մասին հարուստ ու բազմապիսի նյութեր։*

*Գանձակ[5] գավառի հայկական նշանավոր գյուղերը նկարագրելիս, Լալայանը անդրադառնում է հայ մելիքություններին, մելիքների իրավունքներին, գյուղացիների վիճակին և այլն։*

*Գողթն[6] գավառի մասին իր աշխատությունը Լալայանը գրել է հայկական տառերի գյուտի 1500-ամյա հոբելյանի նախօրեին։ Գրքի առաջաբանում հեղինակը գրում է, որ ինքը ներշնչվել է Մեսրոպ Մաշտոցին Գողթնում ներկայացնելու գաղափարով։ Լալայանի ցանկությունն է եղել ամենից առաջ սկսել Գողթան երգերից, որովհետև հայոց հնագույն հեթանոս, մտավոր կյանքի հայելին համարում է Գողթան երգերը։ Գողթան Գինեվետ գավառը հարուստ է եղել նաև քրիստոնեությունն ընդունվելուց հետո հորինված երգերով ու զրույցներով, որոնց վերհանման անհրաժեշտությանն էլ անդրադարձել է Լալայանը։*

*Ցանկանալով լրացնել ու կորստից ազատել Վասպուրական նահանգի ազգագրությանը վերաբերող նյութերը, Լալայանը որոշում է ճանապարհորդություն կատարել նաև այն վայրերում, ուր կային այդ ընդարձակ նահանգից դուրս եկած գաղթականական օջախներ։ Նա լինում է Ալեքսանդրոպոլում, Կարսում, Կաղզվանում, Երևանում և Վաղարշապատում։ Օգտվելով առիթից, նա միաժամանակ հարուստ նյութեր է հավաքում և տեղի ընիկների մասին, որոնք լրացնելու էին նրա ընդարձակ ծրագրի բաց մնացած էջերը։ Այս և նախկինում հավաքած նյութերի հիման վրա, նա 1912 թվականին հրապարակում է իր «Ծիսական կարգերը հայոց մեջ» աշխատությունը[7]։*

*Բորչալուի[8] մասին իր աշխատությունը գրելիս Լալայանը իր ուսումնասիրությունների հետ մեկտեղ օգտագործում է նաև այն հատուկտոր տեղեկություններն ու հավաքած նյութերը, որոնք թե՛ անտիպ էին և թե՛ տպագրված։ «Որովհետև Բորչալուի մասին հատուկ գրածներ չեն եղել,— գրում է հեղինակը,— այլ զանազան տեղեկություններ, խառն կերպով ցրված հայ և վրաց մատենագիրների և հետագա հեղինակների աշխատություններում», Լալայանը նկատի ունի Ալեքսանդր Երիցյանի, Ջեյինսկու, Եզնիկ քահանայի և այլոց գրառումները։ Այդ ամենը հնարավորություն են տվել նրան կազմելու գյուղական անցքերի «...մի սովար օրագրություն, որոնք վերաբերում էին այդ շրջանի ազգագրությանը»[9]։*

*Դեռ նոր էին հրապարակվել Լալայանի այս աշխատությունները, երբ հայ մամուլում («Մուրճ», 1892 թ., № 7—8, 1904 թ., «Մշակ», 1898 թ., № 231, 1904 թ., № 85, «Նոր-Դար», 1892 թ., № 10, էջ 162, «Տարազ», 1898 թ.,*

[3] «Ջավախքի բուրմունքը», Հավաքեց՝ Ե. Լալայան, Թիֆլիս, 1892 թ.։

[4] «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1897 թ., գիրք Բ։

[5] «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1899 թ., գիրք Ե, էջ 213։

[6] Ե. Լալայան, «Գողթն», Թիֆլիս, 1907 թ., էջ 5։

[7] «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1912 թ., գիրք 22, էջ 197։

[8] «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1901 թ., գիրք 7—8։

[9] Ե. Լալայան, «Բորչալու», արտատպված «Ազգագրական հանդես»-ից, Թիֆլիս, 1901 թ., գիրք 7—8։

*№ 30—31, էջ 675, «Արարատ», 1903 թ., № 7, էջ 645, «Ազգագրական հանդես», 1898 թ., № 3—4) քննադատական հոդվածներ են տպագրվում Լալայանի ուսումնասիրություն-ների մասին։ Սակայն հեղինակը անպատաս-խան չի թողնում դրանց, մանրամասն, փաս-տացի օրինակների հիման վրա ապացուցում է իր կատարածի ճշմարտությունը[10]։*

*1913 թվականին Լալայանը հրապարակում է «Վասպուրականի ազգագրությունը և նշանա-վոր վանքերը»[11] վերտառությամբ ուսումնա-սիրությունը, ապա կազմում ու հրատարա-կում է «Վասպուրականի հայերեն ձեռագրաց» հարուստ ցուցակը։ Նրա կազմած «Վասպու-րականի հայերեն ձեռագրաց» ցուցակը ոչ միայն մատենագրական, այլև լեզվաբանա-կան, պատմական, ազգագրական և գեղար-վեստական արժեք ունի։ Ցուցակում ընդ-գրկված գրքերից շատերը հայկական ջար-դերի ժամանակ թաքցված են եղել եկեղեցի-ների գաղտնարաններում տարիներ շարու-նակ և խոնավությունից փչացել ու բորբոսնել են։ Լալայանը մեծ վարպետությամբ կարո-ղացել է կորստից փրկել այդ արժեքները և ապա կազմել է մատենագրական մի ստվար աշխատություն, որն իր նշանակությունը չի կորցրել նաև մեր օրերում։*

*Հետագա տարիներին, մինչև իր կյանքի վերջը, չնայած իր պատկառելի տարիքին, Լա-լայանը կատարել է մի շարք այլ պեղումներ, ինչպես նաև գրի առել ու կազմել հայ տնայ-նագործական արվեստի ու հայկական հե-քիաթներին վերաբերող հավաքածուներ։ Ըն-թերցողին հայտնի են նրա «Մարգարիտներ» խորագրով հայ ժողովրդական հեքիաթների եռահատոր հավաքածուն։ Հիշատակության արժանի են նաև նրա ֆոնդում պահվող Երևա-նի, Սանահնի, Օձունի, Դսեղի, Քանաքեռի բարբառով գրի առած հեքիաթաշարը[12]։ Այս տարիներին նրա գրած գործերի մեջ առանձ-նապես ուշագրավ են «Աղթամարի կաթողի-կոսություն», «Անտիպ ժամանակագրու-թյուն», «Կարնո գավառ» և այլ ձեռագիր գոր-ծեր։*

*«Արագ էր Լալայանը իր պրպտումների մեջ, ընդարձակ ծավալ էր իր ծրագիրը, ընդգրկող ազգ, աշխարհ, քաղաքակրթություն,— այս-պես է բնորոշել նրան Հ. Ներսես Ակինյանը։— «Լալայանը եղևաց իբրև ազգագիր,— շարու-նակության մեջ ասում է նա,—հրավիրելով իր ուշադրությունը դեպի հայ ժողովրդական կենցաղը, արծարծելով հարգանք հանդեպ հայ անտիպապաշտ հավատքին, անգիր բա-նահյուսությանը»[13]։*

*Լալայանի շուրջ կես դար տևած գիտական գործունեության հիմնական առանցքը եղել է հայկական բազմահարուստ կենցաղի ու մշա-կույթի վերհանումը, ուսումնասիրությունը։ Նախ և առաջ նրան զբաղեցնում էին հայ գյուղացու կենցաղը, նիստուկացը, նրա նյութական և հոգևոր մշակույթի դարավոր գանձերը, հնուց մնացած վերապրուկները։ Տարիներ շարունակ նա բաց չէր թողնում Հա-յաստանի գավառներն ու գյուղերը շրջելու և ոչ մի առիթ։ Այդ գործում նա իր կյանքը վտանգի ենթարկող մի բացառիկ կամավոր հերոս էր։*

*Եվրոպական կրթության տեր այդ մտավո-րականը գիտակցում էր, որ առանց աշխա-տավոր տարեց մարդկանց, ծերունի ասա-ցողների հետ զրուցելու, հեքիաթ պատմող-ներին անձամբ լսելու, հնարավոր չէ գիտա-կան բարձրարժեք գործեր ստեղծել։ Այդ առ-թիվ նա «Ազգագրական հանդես»-ի առաջին գրքի առաջաբանում գրում է. «Մեր կոչումը այժմ նյութեր հավաքելու մեջ է, որովհետև դրանց պակասության պատճառով գիտական ուսումնասիրությունները անհնարին են»[14]։*

*Որևէ գավառի ուսումնասիրությունը տալու համար, նա սկսում է տեղագրական, վիճա-կագրական տեղեկություններով, ապա ըստ կարգի շարադրում է՝ բնակարան, զգեստ, կերակուր, խմիչք, կենցաղ, զբաղմունք, ըն-տանեկան բարք, սովորույթ, հավատք, գիր, արվեստ և վերջապես ժողովրդի բանավոր գրականություն։ Նրա աշխատություններից շատերը արժանացել են մրցանակների. «Հայկական արձանագրությունների ժողովա-ծու»-ն արժանացել է Լազարյան ճեմարանի մրցանակին, «Գանձակի գավառ»-ը և «Բու-լանըխ»-ը՝ Սահակ Մեսրոպյան, իսկ «Նոր-Բայազետի գավառ»-ը պսակվել է Ղուկասյան մրցանակով։*

*Լալայանի կյանքում պակաս տեղ չի գրա-վել նաև նրա երկարամյա մանկավարժական և հասարակական բեղմնավոր գործունեու-թյունը։ Մանկավարժական աշխատանքին զուգրնթաց, նաև ունեցել է և բուռն կազմա-կերպչական գործունեություն։ Նա էր, որ առաջին անգամ Թիֆլիսում հայ ազգագրա-կան ընկերությունը կազմակերպեց ու ղեկա-վարեց երկար տարիներ, իր շուրջը հա-մախմբելով հայ մտավորականության և հա-սարակական գծերի մի հեղինակավոր միություն։ Միաժամանակ ինքը ակտիվորեն*

---

[10] «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1898 թ., գիրք Գ։

[11] «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1913 թ., գիրք 23-րդ։

[12] *Հայաստանի պատմության թանգարանի դիվան, Լալայանի արխիվ, գործ 47։*

[13] «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1931 թ., № 3—5, էջ 289—304։

[14] «Ազգագրական հանդես», Շուշի, 1898 թ., գիրք Ա։

մասնակցել է մշակութային զանազան ընկերությունների ու կազմակերպությունների աշխատանքներին Թիֆլիսում, հետագայում և Երևանում։ «Ազգագրական հանդես»-ից բացի, նա աշխատակցել է «Տարազ», «Մշակ», «Մուրճ», «Նոր-դար» և այլ թերթերի ու ամսագրերի։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց և խաղաղ կյանքի հնարավորություն ստեղծվելուց հետո, Լալայանը իր ամբողջ գիտական ժառանգությամբ փոխադրվեց Երևան և անցնելով աշխատանքի, մտքից չէր հանում իր ազգագրական շրջագայությունը և հնագիտական պեղումների կենցաղ դարձած նպատակները։ Նրան հաջողվում է Կոտայքում պեղումներ կատարել, շատ ուշագրավ արդյունքով։ Շուտով, անսպասելի հիվանդությունը (կաթված) նրան զրկում է ֆիզիկական շարժում աշխատանքի հնարավորությունից և 1931 թվականի փետրվարին Լալայանը վախճանվում է 67 տարեկան հասակում։

Հայ ազգագրության բնագավառում մինչև Երվանդ Լալայանը աշխատել են մի քանի հայտնի գործիչներ, որոնցից պարտավոր ենք նշել նախ ամենապայծառ ինքնաուս երախտավորին՝ Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանին, Տեր-Ալեքսանդրյանին և ապա այն բոլոր հայտնի անուններին, որոնց նպատակը չի եղել հատուկ զբաղվել ազգագրությամբ, բայց արժեքավոր նյութեր են թողել։ Երվանդ Լալայանը առաջինն էր, որ հայ ազգագրությունը հանեց տնայնագործական շրջանակներից և այն դարձրեց հասարակական մշակութային կյանքին կարևորություն ներկայացնող առարկա։ Շուրջ երեք քառորդ դար մեզանից առաջ նախագծեց իր անելիքը ժամանակի, գիտության վերջին խոսքով ու սկզբունքներով։ Նա ձեռնարկեց մի անմահ գործ և չորս տասնամյակի ընթացքում թողեց մի այնպիսի հարուստ ժառանգություն, որ, ինչպես վկայում են մասնագետները, կարող էր կատարել միայն մի ամբողջ գիտական հիմնարկություն։ Ազգագրության որ բնագավառն էլ որ վերցնենք, առանց Երվանդ Լալայանի թողած ժառանգության, հնարավոր չէ մի անթերի գործ սկսել։ Նրա ժառանգությունը բաղկացած է հրապարակված ու լայն ճանաչում գտած ավելի քան 70 աշխատություններից և նույնքան էլ անտիպ գործերից, թեև վերջիններից մեր ձեռքն են հասել միայն 50-ը, այն էլ ոչ ամբողջական վիճակում։

Երվանդ Լալայանի բեղմնավոր գիտական ժառանգությունը, նրա հավաքած, գրի առած նյութերը չեն կորցնի իրենց նշանակությունն ու թարմությունը գիտության համար և կապրեն այնքան, որքան կա ազգագրական գիտությունը, որքան պետք է ապրի հայ աշխատավոր ժողովուրդը։

ԴՈԿՏ. ՆՇԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# ԷԼԱՄԱՑԻՔ ԵՎ ԻՐԵՆՑ ԼԵԶՈՒՆ

*Քաղվածաբար կուզեմ ներկայացնել էլամներու և իրենց ինքնահատուկ լեզվի մասին ծանոթացումի հոդված մը, զոր 1928-ին խմբագրած եմ «Ջեխական համայնագիտարան»-ի համար, յուսահոգի ուսուցչիս՝ դոկտ. Պետրժիխ Հրոզնիի թելադրությամբ։*

*Էլամ երկրի և ժողովուրդի մասին բավական լայն տեղեկություն կուտան մեզի աքքադյան (հին բաբելոնական), ասորական և էլամական սեպագրությունները, որոնք գտնված են հնագիտական պեղումներու ընթացքին։ Հին պարսիկները այս երկրին Հուվաճա անունը տված են, որ սանդրեածին, տեղարնիկս կնշանակե ու կապրի ցարդ գործածվող Խուզիստան երկրանունին մեջ։ Էլամներու երկիրը կգտնվեր Զագրոշի լեռնաշխարհը, Եփրատի և Տիգրիսի[1] գետաբերանին հարավ-արևելյան կողմը։ Էլամի թագավորության մայրաքաղաքն էր Շուշա կամ Սուսա, այժմ Շուշ։ Հին ժամանակները, 3-րդ հազարամյակին, էլամները ինքնուրույն և բարձր մշակույթի մը տեր եղած են, բայց հետզհետե նաև այս հնարամիտ ժողովուրդը ենթարկված է մշակութապես սումերացիներու տիրական ազդեցության, առնելով անոնց վանկանշաններն բաղկացող սեպագրությունը և կարգ մը ուրիշ արվեստներ ու արհեստներ։*

*Էլամները իրենց ինքնահատուկ և տարօրինակ լեզուն նշանակելու համար նախապես պատկերանման գծային գիրեր գործածած են, որոնք սումերական, հեթական և եգիպտական մեհենագրոշմներեն շատ ավելի հին են և անոնց հետ որևէ կապ չունին։ Նախկին ուսուցիչս՝ Պ. Հրոզնի ինծի պատմեց, որ 1936-ին Երևան գտնված ժամանակ տեսած է 1925-ին Հայաստանի զանազան կողմերը, մասնավորապես Սևանի լիճին շուրջ բարձրացող ապալեր սարերուն քարանձավներուն մեջ Ա. Քալանթարյանի կողմե հայտնաբերված գծային ժայռագրությունները, որոնք մասամբ մը նման են էլամներու կողմե ասկե մոտավորապես 4 560 տարի առաջ գործածվող պատկերագրությանց։ Ըստ Քալանթարյանի, Հայաստանի մեջ գտնված գծային գիրերը մնացած են 4-րդ հազարամյակեն (մ. թ. ա.)։ 3-րդ հազարամյակին էլամացիք գործածած են այս գծային պատկերագրերը մեծ ու պստիկ քարե սալերու, կավե պնակիտներու և կոթողներու վրա։ Էլամները ընդունած են 2-րդ հազարամյակի երրորդ կիսուն սումերական ծագում ունեցող սեպագրությունը հին բաբելոնացիներու միջոցավ և դարերու ընթացքին բավական մեծ փոփոխության ենթարկած են զայն, իրենց լեզվին հնչական կանոններուն հարմարցնելու համար։ Բևեռագրությունը կիրարկած են էլամները միջազգային դիվանագիտական հարաբերությանց մեջ, մինչդեռ գծային զարդարուն պատկերագրերը գործածած են միայն իրենց հայրենիքին՝ Էլամի մեջ քանդակներու և ուրիշ հիշատակարաններու վրա, իբրև զար-*

[1] Եփրատի Բաբել անունը Փուրատտու (Purattu) է, որ հիշատակված է հեթական բևեռագրությանց մեջ (Keilschrifttexte aus Boghazköi 1 № 1 obv., տող 6, 7, 9, 18, 30, 47 և ուրիշ տեղ)։ Եփրատը սումերերեն կոչված է Buranunu, եբրայերեն Prat և արաբերեն էլ-Ֆուրաթ։

դագիր։ Մինչև հիմա հազիվ կարելի եղավ 60 պատկերագիր վերծանել։

Այս գծային մեհենագրոշմներու կիրառումը տևած է մինչև Աքամենյան շրջանը։

Կարգ մը արևելաբաններ՝ Հ. Վինգլեր, Թորկ, Ֆրանկ, Հյուսինգ, նշանավոր կովկասաբան Ն. Մառը, Նեմիրովսկին և Մառի հավատարիմ աշակերտը՝ Մեշչանինով, որ քաջարար պաշտպանեց իր ուսուցչի տեսությունը անհատի պաշտամունքի ժամանակ, վերծանման փորձեր կատարեցին երկլեզվյան (էլամերեն—աքքադերեն) արձանագրությանց վրա, բայց այնքան ալ մեծ հաջողություն չունեցան։

Էլամերենի կազմն ու կառուցվածքը շատ ինքնահատուկ ու միաժամանակ հետաքրքրական են. գոյականները անհոլով են և բայերն ալ չեն խոնարհվիր։ Անձերն ու իրերը, եզակին ու հոգնակին և երեք դեմքերը հետադաս մասնիկներով և դերանուններով կզանազանվին. օրինակ՝ շա-կ «որդի եմ», սունկի-պ «թագավոր անոնք»—«թագավորներն» և այլն։ Էլամերենը շատ հարուստ է բայարմատներու կրկնումներով և բայական բաղադրություններով. օրինակ՝ նուտա-նուտ, «գործել, ընել»։ Ինչպես կերևի,—կ «ես»,—ռ «նա» և -պ «անոնք» հետադաս դերանունները մեծ դեր կկատարեն էլամերենի քերականական կառուցվածքին մեջ։ Այս հետադաս դերանուն-մասնիկները մեծ նշանակություն ունին նաև սումերերենի, խուրրերենի, հեթերենի, խալդերենի, վրացերենի և մասամբ ալ հայերենի մեջ. օրինակ՝ սա, դա, նա ցուցական դերանունները հայերենի մեջ գոյականներու կկցվին, կրճատվելով այս դերանուններուն ա ձայնավորը, օրինակի համար ձիս (նախամայր ձի սա), ձիդ (ձի դա) և ձին (ձի նա)։ Ակնա և Խոտնավվելի գավառաբարբառին մեջ դեռ պահված է սա, դա, նա դերանուններու վերջին ձայնավորը. օրինակ՝ հուսա, հուդա, հունա (հոս, հոդ, հոն)։ Ինչպես կտեսնենք, մեր ռամիկ (ժողովրդական) լեզուն ավելի հին ու նախնական ձևեր պահած է իր մեջ քան մեր գրաբարը։

Էլամերենը, որ այսօր միայն իբր համր լեզու գոյություն ունի, մեծ ազդեցություն գործած է իրանական լեզուներու վրա, ըլլա իր բառականական կազմով, ըլլա իր բառամթերքով։

Այս առեղծվածային լեզվին ազգակցության հարցը մինչև այսօր բոլորովին ճշտված չէ։ Երկու գերման արևելաբաններ՝ Օպպերտ և Վայսբախ, նախապես էլամերենը սկյութերեն կարծեցին, բայց հետո հաստատվեցավ, որ այս ենթադրությունը սխալ է։

Էլամերենը ընդամենը 16 նշանագիր՝ 5 ձայնավոր և 11 բաղաձայն, գործածած է։ Լերկերը՝ պ, տ, կ հաճախ լծորդած են միջակները՝ բ, դ, գ և թավ՝ փ, թ, ք հնչյուններու, ճիշտ այնպես ինչպես աքքադերենի, հեթերենի և սեպագիր գործածող ուրիշ փոքրասիական լեզուներու մեջ։

Աքքադի արքաները՝ Լագաշցի Գուդեան, Ուրի երրորդ հարստության իշխանները, ինչպես Սարգոն Ա (2 700 Ք. ա.), Նարամ-Սին (շուրջ 2 500 Ք. ա.) և իրենց հաջորդները, քանիցս պատերազմի ելած են էլամներու դեմ, բայց այս քաջամարտիկ ցեղին հետ չեն կրցած գլուխ ելլել։ Միջագետքի սումերացի ժողովուրդը հարատև կռիվներու ընթացքին այն աստիճան կտկարանա, որ 2 100-ին (Ք. ա.) էլամացիներու կողմե կհաղթվի և կիյնա էլամ արքաներու գերիշխանության տակ։ Համմուրաբիի ժամանակ (18-րդ դար Ք. ա.) բաբելոնացիք թեև կհաջողին իրենց պետական անկախությունը վերահաստատել, բայց էլամներու հզոր թագավորը՝ Շատրուկ Նախունտե վերջ կուտա Բաբելաստանի անկախության, ավար առնելով անոր հոգեկան և նյութական կուլտուրայի մնացորդները։

Բաբելաստան մոտավորապես 60 տարի էլամներու տիրապետության տակ մնալե ետք, Նաբուգոդոնոսոր Ա-ի (1146—1123 Ք. ա.) օրով կտիրանա իր քաղաքական անկախության, բայց Ասորեստանի խելառ արքան՝ Ասուր բանիպալ (669 Ք. ա.) միանգամ ընդմիշտ վերջ կուտա էլամներու թագավորության, գրավելով անոր մայրաքաղաքը՝ Շուշան։

6-րդ դարուն (Ք. ա.) էլամներու բարգավաճ երկիրը կգրավվի Աքամենյաններու կողմե և Սասանյան շրջանին կդառնա Իրանի մեկ գավառը, որ այսօր Խուզիստան կկոչվի։

Իսկ Մեծն Կյուրոս[2] էլամի տերն ու տիրականը դարձավ, իր արձանագրությունները երեք լեզուներով (իրաներեն, բաբելոներեն և էլամերեն) խմբագրել տվավ։ Էլամներու լեզուն արձանագրված է, համ ուրիշ ճիշտ խոսված է Խուզիստանի մեջ մինչև ԺԲ դար Քրիստոսե հետո և նոյված է խուզերեն։

---

[2] Աքամենյան հարստության հիմնադիր Կյուրոսի փառապանծ անունը հին պարսկերեն Կուրուշ, էլամերեն-բաբելոներեն Կուրաշ, սուրբ գրական Կորեշ, առաջին էլամական ծագում ունի և էլամերեն «հովիվ» կնշանակե։

✻✻✻✻✻✻

Ս. ՔՈԼԱՆՋՅԱՆ

# ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

## (ԺԷ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՑ ՄԻՆՉԵՎ Ի ԴԱՐԻ ՍԿԻԶԲԸ)

*Հայկական հնագույն գաղթավայրերի պատմության մեջ իր արժանի տեղն ունի նաև Տրանսիլվանիայի հայ գաղութը, որի առաջացման ակունքները հասնում են մինչև Ժ—ԺԱ դարերը։ Այդ դարերից սկսած մինչև ԺԷ դարը Տրանսիլվանիայում հայեր են ապրել և այնտեղ հայկական գաղութ և թեմ է գոյություն ունեցել։ Այդ ապացուցվում է «հայ»* (armean, ormen), *«հայկական», ինչպես և հայերեն այլ բառերից կազմված տրանսիլվանյան տեղանուններով և բազմաթիվ հայ անձնավորությունների հիշատակությամբ։ Սակայն երկար դարերի ընթացքում Տրանսիլվանիայի հայերը կա՛մ ձուլվել են տեղական ժողովուրդների մեջ և կամ գաղթել այլ վայրեր և այդ պատճառով էլ ԺԷ դարի կեսին նրանց թիվը շատ նոսրացած պետք է լիներ։ Նույնպես, 1654 թվականին Մոլդովայից Տրանսիլվանիա անցնող հայ գաղթականությունը չնայած մի քանի քաղաքներում հաստատվեց, այնուամենայնիվ շատ փոքր նշանակություն ունեցավ և պատմության մեջ մնաց «փոքր գաղթականություն» անունով։*

*Տրանսիլվանահայ հիմնական մեծ գաղութը կազմավորվեց սկսած 1672 թվականից, երբ մեծ թվով հայեր հարևան Մոլդովայից գաղթեցին Տրանսիլվանիա։ Հայերը ժամանակի ընթացքում տարածվեցին Տրանսիլվանիայի բազմաթիվ քաղաքներում, ավաններում և անգամ գյուղերում։ Ցրված լինելը եթե մի կողմից՝ հայերի խաղացած դերի շնորհիվ ցույց էր տալիս նրանց տեսակարար կշիռը, չնայած իրենց փոքրամասնությանը, երկրի կյանքում, ապա մյուս կողմից ազգային դիմագծի պահպանման տեսակետից այն շատ վատ էր։ Բանն այն է, որ ցրվածությունը նպաստում էր իրենց ազգային ինքնությունը անհամեմատ շուտ կորցնելու ընթացքին։ Այս տեսակետից շատ ավելի կենսունակ եղավ Տրանսիլվանիայի հայերի կյանքը իրենց նշանավոր կենտրոններում։ Առավել կարևոր հանդիսացան տրանսիլվանահայերի կառուցած հայաքաղաքները՝ Գեռլան (լատիներեն՝* Armenopolis, *գերմաներեն՝* Armenierstadt, *հունգարերեն՝* Örményvaros, *նաև* Szamosújvár) *և Եղիսաբեթուպոլիսը (լատիներեն՝* Elisabethopolis, *գերմաներեն՝* Elisabethstadt, *հունգարերեն՝* Erzsebetváros, *այժմ՝ Դումբրըվեն)։ Տրանսիլվանիայի հայերի երկրորդական կենտրոններից էին Ջուրջովը (այժմ Գեորգեն) և Սեպվիզը (այժմ Ֆրումոասա)։ Ինչպես Մոլդովայում, այնպես*

էլ Տրանսիլվանիա գաղթելուց հետո, հայերը, բացի հոգևոր իշխանությունից, ունեցան նաև քաղաքային ինքնավարական հիմնարկներ, ինչպես իրենց քաղաքապետ-դատավորը, քաղաքային վարչությունները 12 ծերերի խորհրդով, դատարանով և հարյուրոց ժողովով, արհեստագործական, առևտրական և հոգևոր եղբայրությունները և այլն։ Ավելի քան 300 տարի Մոլդովայում հայերը իրենց ինքնուրույն նշանակալից կյանքը ունենալուց հետո, նրանց հետնորդները շուրջ 200 տարի էլ Տրանսիլվանիայում կարողացան պահպանել իրենց հայկական երանգը, միևնույն ժամանակ նաև կարևոր դեր խաղալով հյուրընկալ երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում։ Սակայն հայերը իրենց ինքնուրույնությունը հեշտ միջոցներով չեն պահպանել, այլ դարավոր պայքար են մղել ամեն տիպի խորթ և անհարազատ հակազդեցությունների դեմ։ Այսպիսով Տրանսիլվանիայի հայերի պատմության ցարդ համարյա մոռացության մատնված, սակայն ամենաբնորոշ երևույթներից էր նրանց մղած համառ ու երկարատև պայքարը հանուն իրենց ազգային ինքնուրույնության պահպանման, որը հատկապես արտացոլվեց իրենց հնավանդ սովորույթներին և հայրենի ավանդություններին ամուր կառչած լինելու հանգամանքով։

Եթե ցարդ մասամբ բավարար չափով են ուսումնասիրված Լեհաստանի հոծ հայ գաղութի բռնի դավանափոխ լինելու պատմությունը և նրա տխուր հետևանքները, ապա պետք է նկատել, որ մինչև այժմ էլ համարյա շարունակում են ստվերի տակ մնալ Տրանսիլվանիայի հայության դավանափոխության նույնքան տխուր շարժառիթները և նույն ժամանակ ավանդապահ հայերի մղած պայքարը վերջինիս դեմ։ Այդ անշուշտ նրանից է, որ ցարդ չի գրված Տրանսիլվանիայի հայ գաղութի ամբողջական պատմությունը, իսկ նրա երկու հայաքաղաքների մասին գրված մենագրություններն էլ, չնայած իրենց փաստական հարուստ տվյալների, ոչ միայն չեն բացահայտել հայերի միջև լատինամոլության դեմ մղված պայքարը, այլ, ընդհակառակը, սքողելով այն, դավանափոխությունը համարել են «անհրաժեշտություն», իսկ կաթոլիկության առաջին տարածիչ Օքսենտ Վրզարյանին՝ «երկրորդ Լուսավորիչ»։ Այստեղից էլ մինչև այժմ մեր պատմագրության մեջ տիրում է այն թյուր կարծիքը, ըստ որի Տրանսիլվանիայի հայերը հեշտությամբ են դավանափոխ եղել և կամ նույնիսկ սկզբից ևեթ կարծես միացած են եղել Հռոմեական եկեղեցու հետ։ Ահա թե ինչու հայ գաղութների պատմության անվանի մասնագետ, պատմաբան-բանասեր Արշակ Ալպոյաճյանը հարց էր հարուցում գրել Տրանսիլվանիայի հայոց պատմությունը «աննախապաշար ոգիով»[1]։

Տրանսիլվանիայի հայերին դավանափոխ անելու գործում կարևոր դեր են ստանձնել Լվովի հայ կաթոլիկ թեմը՝ Վարդան արքեպիսկոպոս Հունանյանի գլխավորությամբ և բնիկ մոլդովացի հայ Օքսենտ Վրզարյան վարդապետը։ Սակայն նրանց հաջողությունը շատ չնչին կլիներ, եթե վերջիններիս թիկունքին կանգնած չլինեին Ավստրիայի կայսրը, պապը և Տրանսիլվանիայում գործող կաթոլիկ բարձր հոգևորականությունը։ Կաթոլիկության տարածումը Տրանսիլվանիայում Ավստրիական կայսրության համար քաղաքական և տնտեսական մեծ նշանակություն ուներ։ Նա մի կողմից Տրանսիլվանիային տեր դառնալու ճանապարհին աշխատում էր երկրի ներսում իր համար վստահելի հենարան ստեղծել, իսկ մյուս կողմից էլ, հայերի և մյուս ժողովուրդների հնավանդ սովորույթները արմատախիլ անելով, ուզում էր նրանց ձուլել։ Ինչ վերաբերում է Կաթոլիկ եկեղեցուն, նա հայերին բռնի կաթոլիկացնելու միջոցով ձգտում էր տեր դառնալ մի հարուստ թեմի և հայերից հլու քարոզիչներ պատրաստել, ինչպես հարևան Մոլդովայում, այնպես էլ այն վայրերում գտնվող հայերին ևս «դարձի» բերելու համար։ Սակայն Տրանսիլվանիայի հայերի պայքարը հիշյալ քարոզչության դեմ շատ ուժեղ է եղել։ Նույնիսկ այն ժամանակ, երբ կաթոլիկությունը Տրանսիլվանիայում հաղթանակած է համարվել, որոշ թվով հայեր կրկին վերադարձել են հնավանդ հայադավանությանը, իսկ կաթոլիկության հավատարիմ մնացած հայերն էլ մեծ մասամբ ձևականորեն են ընդունել այդ։

Երբ, ի վերջո, չտոկալով կատարված սպառնալիքներին և բռնություններին, հայերը ստիպվել են դավանափոխ լինել, շուրջ երկու հարյուր տարի նրանք անընդմեջ պայքար են մղել լատինամոլության դեմ։ Ավանդապահ հայերը, թեև բռնի կաթոլիկացված, սակայն ջերմեռանդորեն աշխատել են ոգի ի բռին պահպանել հայ ծեսը, հին տոմարը, հայկական հնավանդ սովորույթները։ Ոչ պակաս երկարատև է եղել նաև հայերի մղած անընկճելի պայքարը իրենց երբեմնի հայկական ինքնուրույն եպիսկոպոսությունը վերականգնելու համար։

Տրանսիլվանիայի հայերի կողմից իրենց ազգային ինքնուրույնության պահպանման համար մղած այդ երկարատև պայքարի բացահայտման և վեր հանման նվիրված մի փորձ է ահա ներկա ուսումնասիրությունը։

---

[1] 1962 թվականի փետրվարի 6-ին մեզ գրած նամակից։

## 1. ԼՎՈՎԻ ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿ ԹԵՄԸ ԻԲՐԵՎ ԿԱԹՈԼԻԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ՀԵՆԱԿԵՏ ՄՈԼԴՈՎԱՅԻ ԵՎ ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՄՈՏ

Նախքան Լվովի հայ կաթոլիկ թեմի ստեղծումը, կաթոլիկական քարոզչությունը Ռումինիայում անձամբ գլխավորում էր պապը։ Կաթոլիկական քարոզչությունը ներկա Ռումինիայի սահմաններում ապրող հայերի մոտ շատ հին պատմություն ունի։ Բացի այն, որ դեռ 1399 թվականին Բոնիֆակիոս պապը (1389—1404) հրամայում է Տրանսիլվանիայի Բրաշով քաղաքում գտնվող տանհավատներին, ընդ որս նաև հայերին կաթոլիկացնել[3], հետագա դարերում ևս լատին միսիոներները հաճախակի հանդես էին գալիս նաև Մոլդովայի հայերի մոտ և անում ամեն ինչ, նրանց Պապական եկեղեցու գիրկը մղելու համար։ Այսպես ուրեմն, 1582—1586 թվականներին Մոլդովայում էր գտնվում Մանչինելլի անունով լատին քարոզիչը[4], որը 1582 թվականին այցելում է նաև Յաշի հայոց եկեղեցին և փորձում է նրանց դավանափոխանել։ Նա նկարագրում է, թե հայերը համեմունքի հարուստ վաճառականներ էին[5]։ 1636 թվականին մի հայ կաթոլիկ միսիոներ Ռեմոնդի անունով, գործում է Յաշում և հանդիպում է բազմաթիվ տարբեր ժողովուրդների, որոնց մեջ հիշում է նաև հայերին[6]։ Չենք կասկածում, որ այդ միսիոները ևս սկսել է շարունակած լիներ իր նախորդից սկսված հայերին կաթոլիկության մղելու փորձերը։ 1646—1649 թվականներին Մոլդովայում հանդես է գալիս Բանդինուս Մարկուս խտալացի քարոզիչը։ Նա իր ուղեգրության մեջ մանրամասն կանգ է առնում նաև Մոլդովայի հայաշատ քաղաքների վրա, նշում է Սուչավայի, Յաշի, Ռոմանի, Վասլույի, Գալացի, Բըրլատի մեջ ապրող հայերի թվի մասին, նրանց ունեցած նյութական բարգավաճ վիճակի, Սուչավայի հայոց առաջնորդանիստ վանքի գեղեցիկ լինելու և այլ հարցերի մասին[6]։ Հայերով խորապես հետաքրքրվող միսիոները անկասկած պետք է, որ զբաղված լիներ նաև նրանց կաթոլիկացնելու գործով։

Այս բոլորից հետո, երբ ստեղծվեց Ռումինիայի հարևան Լվովի հայ կաթոլիկ թեմը, պապի համար այն դարձավ գլխավոր հենակետ, մինչև այդ Մոլդովայի հայերին կաթոլիկացնելու անհաջող փորձերը հաջողությամբ պսակելու համար, մանավանդ, որ Լեհաստանի և Մոլդովայի այդ երկու հայ գաղութները իբրև եղբայր էին համարվում, ավանդաբար իրենց համարելով նույն Անի քաղաքից գաղթողներ։ Նրանք համարյա նույն բարբառով էին խոսում և դարեր շարունակ զոդված էին տնտեսական, եկեղեցական և մշակութային սերտ կապերով։ Եթե նախորդ քարոզիչները օտար լատին հոգևորականներ էին, ապա այժմ փոխվում էր հանգամանքը, հարևան Լեհաստանի հայ գաղութը կկարողանար Մոլդովա ուղարկել հայերենագետ լատին և մասնավորապես հայ կաթոլիկ հոգևորականներ, որոնք նույնիսկ կարող էին ազգակցական կապերով էլ կապված լինել մոլդովացի հայերի հետ։

Մենք տեսնում ենք, որ ահա այս շրջանին Մոլդովայում գործում է հայտնի Ալոյիսիոս Պիդուն (Louis Marie Pidou), որը Կղեմես Գալանոսի հետ Լվովում հիմնադրել էր հայերի համար պապական դպրանոց 1664 թվականին։ Նա Գալանոսի մահից հետո, 1666 թվականին, դարձել էր այդ դպրանոցի ղեկավարը։ 1669 թվականին Պիդուն ևս, մեկ առ մեկ այցելելով Մոլդովայի հայկական եկեղեցիները, փորձում է հայերին կաթոլիկացնել։ Նա իր թողած հիշատակարանում ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Մոլդովայի հայոց այդ շրջանի թեմական կյանքի պատմության մասին[8]։ Ինչպես գրում էր Պիդուն, բաց անելով պապական դպրանոց, նա հույս ուներ, որ աշակերտներ կկարողանա ունենալ նաև Մոլդովայի հայերից[9], և այդ միջոցով նրանից պայթեցնելով հայ գաղութի միասնությունը, հնարավոր կլիներ հեշտացնել Մոլդովայի հայերին կաթոլիկության մղելու գործը։

Այսպիսով, Պապական եկեղեցու ձեռքին կարևոր զենք էր դառնում Լեհաստանի նորաստեղծ հայ կաթոլիկ թեմը, Արևելյան Եվրոպայում մնացած ավանդապաշտ հայերին կաթոլիկության մղելու համար։ Լվովի արքեպիսկոպոսությունը իր կաթոլիկական քարոզչությունն առաջ էր տանում երկու ուղղությամբ. առաջինը և ամենավճռականը ուղղված էր Տրանսիլվանիա ապաստանած մոլդովացի հայերի դեմ, իսկ երկրորդը՝ Մոլդովայում դեռևս ապրող, սակայն թվով փոք-

[3] „Anuarul Institutului de Istorie nationala din Cluj„, IV, 1929, p. 201.

[3] Lucian Predescu, „Enciclopedia Cugetarea", Bucureşti, 1940, p. 511.

[4] Hurmuzaki, „Documente...", XI, p. 115.

[5] N. A. Bogdan, „Oraşul Iaşi", 1913, Iaşi, p. 338.

[6] V. A. Urechea, „Codex Bandinus„, „Analele Academiei Române", XVI, 1893—1894.

[7] Հ. Ս. Անասյան, «Հայկական Մատենագիտություն», Ա, Երևան, 1959, էջ 419։

[8] Տե՛ս «Ռոնի միութիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ», ի Ս. Պետերբուրգ, 1884, էջ 1041 և այլն։

[9] Նույն տեղում, էջ 12։

բացած ու անկազմակերպ վիճակում գտնվող հայերի գեմ։

Այս կապակցությամբ անհրաժեշտ է, սակայն, նշել, որ Լվովի հայ թեմի առաջնորդական աթոռի հետ Մոլդովայի հայերի կապերը շատ հին և խոր արմատներ են ունեցել 1365 թվականին, երբ ստեղծվեց Լվովի եպիսկոպոսական Աթոռը, Մոլդովայի հայերը դեռևս սակավաթիվ լինելով, շուտով անա այդ թեմի իրավասության տակ դրվեցին։ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերից մեկում հիշվում է Հովհաննես արքեպիսկոպոսը, որ 1379 թվականին Սիս գնալով, Կոստանդին կաթողիկոսից ձեռնադրվել էր արքեպիսկոպոս «ամենայն Ռոսաց և Ալախաց աշխարհին»[10], այսինքն առաջնորդ Արևմտյան Ուկրաինայի և Մոլդովայի հայերի։ 1384 թվականին Մոլդովայի իշխան Պետրու Մուշատը (1378—1393) Մոլդովայի հայերին ենթարկում է Լվովի հայ եպիսկոպոսի իրավասությանը[11]։

Մոլդովայի Ալեքսանդրու Չել Բուն (Բարի) իշխանը (1400—1432) մեծ թվով հայեր է հրավիրում Մոլդովա և նրանց մի շարք արտոնություններ է շնորհում։ Դարձյալ նա է, որ 1401 թվականին Սուչավայում հիմնադրում է առաջին հայկական թեմ, Մոլդովայի հայերին հանձնելով Հովհաննես եպիսկոպոսի իրավասությանը[12]։ Թեև հետագայում էլ երբեմն Մոլդովայի հայերը ենթարկվում էին Լվովի հայկական թեմին, բայց ավելի ուշ, հատկապես ԺԶ—ԺԷ դարերին, վերջնականապես մերթ Սուչավա և մերթ էլ Յաշ մայրաքաղաքներն են, որ դառնում են հայերի առաջնորդանիստ կենտրոնները։ Գլխավորապես այդ է պատճառը, որ հետագայում, երբ Նիկոլ Թորոսովիչը լեհական արքունիքի օգնությամբ սկսեց Լեհաստանի հայերի բռնի կաթոլիկացման գործը, Մոլդովայի և Վալաքիայի հայերը, լինելով Լվովից անկախ, կարողացան հետ մղել կաթոլիկական ոտնձգությունները և երկար դարեր պահպանել իրենց լեզուն ու հայրենի ավանդությունները։ Ոչ պակաս նպաստավոր է նաև այն հանգամանքը, որ Մոլդովայի հայերը ապրում էին ուղղափառ դավանության պատկանող մի երկրում։

Խիստ ուշագրավ է, սակայն, այն, որ դեռևս 1627 թվականին Մելքիսեդեկ անարժան կաթողիկոսը Նիկոլ Թորոսովիչին, բացի Լեհաստանի հայերից, նաև առաջնորդ էր նշանակել Մոլդովայի և Վալաքիայի հայերին[13]։ Անհրաժեշտ է նշել, որ արծաթասեր Մելքիսեդեկի որոշումը միակը չէր, որ Նիկոլին ենթարկել տար նաև Ռումինիայի ներկա սահմաններում ապրող հայերին, այլ որ Ուրբանոս Ը պապը ևս Նիկոլին և նրա հետնորդներին տալիս է կրելու նույնպես Վալաքիայի և Մոլդովայի հայերի եպիսկոպոս տիտղոսը[14]։ Որ իսկապես Նիկոլը այդ պաշտոնն է ստացել, այդ հաստատվում է նաև նրա կողմից զանազան ձեռագրերում և տարբեր ժամանակներում գրված հիշատակագրություններով։ Այսպես, օրինակ, Նիկոլը 1629 թվականին ստորագրել է հետևյալ կերպ. «Նիկողայոս Թորոսեանց արքեպիսկոպոս Լէվայ աթոռակալ և Պուղտանաց երկրի (իմա՛ Մոլդովայի) առաջնորդ և ամենայն Լեհաց թագաւորութեան, որ կան բնակեալ հայկազուն սեռից...»[15]։ Դեռևս 1658 թվականին Նիկոլը գրում էր իրեն մասին իբրև «Պուղտանայ երկրի հայոց առաջնորդ»[16]։

Այսպիսով, Նիկոլին տալով այդ պաշտոնը, մեկ նպատակ էր հետապնդվում՝ Լեհաստանում կաթոլիկության ձեռք բերած հաջողությունները տեղափոխել նաև մոլդովական հողում։ Այս արդեն Պապական եկեղեցու կողմից կիրառված նոր գործելակերպ էր, աշխատանքի մի նոր եղանակ, քանի որ, ինչպես տեսանք, մինչ այդ դարեր շարունակ Մոլդովայում ապրող հայերին կաթոլիկացնելու փորձերը անհաջողությամբ էին վերջացել։ Այժմ նաև Մոլդովալաքիայի «առաջնորդ» տիտղոսով, Նիկոլի և նրա համախոհների միջոցով, ավելի հեշտ էին կարծում հաջողության հասնել, մանավանդ որ այսպիսով կարելի էր կարծել, որ արտաքուստ վերականգնած էին համարվում Լվովի Աթոռի ավանդական իրավունքները Մոլդովայի հայերի նկատմամբ։ Սակայն մի բան պարզ է, որ Նիկոլի և նրա հաջորդ Նիկոլականների կրած տիտղոսները նաև իբր Մոլդովայի հայերի եպիսկոպոս, հաջողություն ունենալ չէին կարող, քանի որ, ինչպես ասացինք, Մոլդովայի հայոց թեմը արդեն վաղուց ինքնուրույն

[10] Մատենադարանի ձեռ. № 1527, էջ 7ա, 667բ և Լ. Ս. Խաչիկյանի «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1950, էջ 529։

[11] Gr. Goilav, „Bisericile armene de prinţările române„, Bucureşti, 1912, p. 5.

[12] P. P. Panaitescu, „Hrisovul lui Alexandru cel Bun, pentru episcopia armeana din Suceava", extras din „Revista istorica română". Bucureşti, 1935.

[13] Դիմ. Տան, «Արևելյան հայք ի Բուքովինա...», Վիեննա, 1891, էջ 81։

[14] Chr. Lukacsi, „Historia Armenorum Transilvaniae", Viennae, 1859, p. 68, 139.

[15] Հ. Հ. Տաշյան, «Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», Վիեննա, 1895, էջ 692։

[16] Նույն տեղում, էջ 923։

էր դարձել Լվովից և ուներ իր սեփական հոգևոր առաջնորդները։ Այստեղից էլ կարծում ենք, որ պետք է վերանայել Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի այն կարծիքը, ըստ որի, երբ Նիկոլի հաջորդ Վարդան Հունանյանը իր Աթոռը հայտարարեց Էջմիածնից անկախ և Հռոմի Եկեղեցու հետ միացած, իբր անջատեց իրենից նաև Մոլդովայում, Վալաքիայում և Բուկովինայում ապրող հայերին, քանի որ Լվովի Աթոռը, ըստ Օրմանյանի, ընդհանուր առաջնորդություն էր բոլոր արևմտյան գաղթականների համար[17]։ Իրականում պետք է նկատել, որ Լվովի Թեմը Նիկոլի ժամանակ արդեն իբրև ընդհանուր առաջնորդություն սոսկ աշխարհագրական նշանակություն ուներ և Նիկոլը իրեն իբրև Մոլդովայի հայոց առաջնորդ հիշատակած տարիներին (1627—1658), ինչպես նաև հետո էլ Մոլդովայում գրված ձեռագրերում, մենք գտնում ենք հիշատակված Մոլդովայի հետևյալ հոգևոր առաջնորդներին. 1624—1630 թ. թ.՝ հայտնի գրիչ և ծաղկող Ղազար Բաբերդացուն, 1640—1643 թ. թ.՝ Անդրեաս արքեպիսկոպոսին, 1646—1652 թ. թ.՝ Մինաս վարդապետին, 1654—1655 թ. թ.՝ Անտոն եպիսկոպոսին, 1659—1669 թ. թ.՝ Սահակ եպիսկոպոսին և 1672—1676 թ. թ.՝ Մինաս Ջիլիֆտար օղլու Եվդոկիացի եպիսկոպոսին։

Այսպիսով, Մոլդովայի հայ Թեմը, ունենալով իր ինքնուրույն թեմական առաջնորդությունը, Նիկոլ Թորոսովիչի և նրա հաջորդների կողմից նաև իբր Մոլդովայի հայոց առաջնորդ կրած կեղծ տիտղոսը, լոկ անվանական էր դառնում և այս խորամանկ ձևով հայերին կաթոլիկացնելու ջանքերը հաջողություն ունենալ չէին կարող։ Ավելացնենք դարձյալ, որ Նիկոլի նման ձախորդության է մատնվում նաև Անտոն եպիսկոպոս Սեբերքոյենցի փորձը, որն սկզբնական շրջանում երկար ժամանակ իբրև այցելու, 1645—1655 թվականներին, ձեռնադրություններ էր կատարել Մոլդովայի դանազան հայկական եկեղեցիներում և վանքերում, սակայն ավելի ուշ՝ 1660 թվականին, նա արդեն Լվովում գործակցում է Նիկոլ Թորոսովիչին և մասնակցում են միասին, Լվովի կաթոլիկ արքեպիսկոպոսի գլխավորությամբ, Լուցք քաղաքի եկեղեցու համար, Ստանիսլավ Ցուբըլոյ անունով անշուշտ օտար հոգևորականին իբր եպիսկոպոս օծելուն։ Ահա այստեղ է, որ բացի Լվովի ֆռանկաց արքեպիսկոպոս Հովհաննես Դառնովսքիից, որը գլխավոր ձեռնադրողն էր, նա հիշում է նաև «Տէր Նիկողայոս Թորոսեանց»-ին իբր «արքեպիսկոպոս Հայոց՝ Լովանո» և ապա «ես Անտոն Սեբէքքոյենց. եպիսկոպոս հայոց Պողտանայ և վարդապետ...»[18]։ Այս հիշատակարանից պարզ երևում է, որ Նիկոլը ճարահատ փոխել էր իր գործելու եղանակը և Մոլդովայի հայերի առաջնորդ լինելու անվանական իր տիտղոսը շնորհել էր, երկար ժամանակ Մոլդովայի հայերի կյանքին քաջածանոթ, և մի ժամանակ նույնիսկ այդ թեմի առաջնորդ դարձած մի անձնավորության՝ Անտոն Սեբերքոյենց եպիսկոպոսին, որն իր այդ հանգամանքներով ավելի հեշտ կարող էր հաջողության հասնել, քան ինքը՝ Նիկոլը։ Սակայն այս վերջինի թեկնածությունը ևս դատապարտված էր ձախողության կրելու, քանի որ Անտոն եպիսկոպոսը Լվովում դառնալով Նիկոլի համախոհներից մեկը, պետք է որ արդեն իսկ գժտված լիներ Մոլդովայի հայերի հետ և իբրև առաջնորդ կրած նրա տիտղոսը ոչ մի արժեք այլևս չէր ներկայացնում։ Մեր այս կարծիքը հաստատվում է հատկապես նրանով, որ Մոլդովայի հայոց թեմը արդեն 1659—1669 թվականներին իբրև հոգևոր առաջնորդ ուներ Սահակ եպիսկոպոսին[19]։ Կաթոլիկական քարոզչությունը դարձյալ ոչ մի օգուտ չբերեց նաև Նիկոլի տեղակալ Հովհաննես Քարամատանանենցի կամ Քերումովիչի կրած «եպիսկոպոս Պուղտանիոյ» (իմա՝ Մոլդովայի) անունը, քանի որ, ինչպես ճիշտ նկատել է Տանը[20], նույնիսկ Լվովի վարժարանի տեսուչ Պիտուն հիշյալ Քերումովիչի «առաջնորդության» շրջանում Մոլդովայի հայոց թեմի առաջնորդ էր հիշում Հակոբ կաթողիկոսից ձեռնադրված 50-ամյա վերոհիշյալ Սահակ եպիսկոպոսին, և որը 20 քահանա ուներ իր իրավասության տակ։

Այսպիսով, կաթոլիկացած հայ հոգևորականների կողմից իրենց նաև Մոլդովայի հայերի առաջնորդ կոչելը բոլորովին խորամանկ ու կեղծ մի միջոց էր և արվում էր այդ հայերին կաթոլիկացնելու դիտավորությամբ։ Սակայն, քանի որ նախ Մոլդովայի հայերը լավ էին կազմակերպված, և երկրորդ, որ Մոլդովական պետությունը հունադավան էր և վերջապես երրորդ, որ Մոլդովայի հայ ազգաբնակչությունը քաջատեղյակ էր Լեհաստանում ապրող իրենց եղբայրակիցների ճակատագրին և հնարավորության սահմաններում Մոլդովայի հայկական քաղաքները ուկրաինացի ավանդապաշտ հայերի համար էլ մխիթարության կենտրոններ էին դարձել, հետևաբար դավանափոխության հարցը Մոլդովայում հաջողություն ունենալ չէր կարող։ Կան փաստեր, որ բազմաթիվ հայեր Լեհաս-

---

17 Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, «Ազգապատում», Բ, էջ 2653—2654։

18 Հ. Հ. Տաշյան, Նշված աշխատությունը, էջ 776։

19 Ս. Քոլանջյան, «Գեռլա Հայաքաղաքի ձեռագրերի ցուցակ» (անտիպ)։

20 Տե՛ս. Տան, Նշված աշխատությունը, էջ 86։

տանից գալիս էին Մոլդովայի սահմանամերձ քաղաքները և կատարել էին տալիս իրենց երեխաների մկրտությունը և կամ բերում էին իրենց ննջեցյալներին և թաղում հնավանդ ծեսով[21]։ Իսկ երբեմն էլ նույն հայերը գալիս էին մշտական բնակություն հաստատելու Մոլդովայի հողում, իրենց եղբայրակիցների մոտ, որոնց հետ դարեր շարունակ իրենց պապերը հարազատ էին զգացել և մշակել էին տնտեսական և մշակութային սերտ կապեր։

Սակայն պատկերը այժմ փոխվում էր, երբ 1672 թվականին և հետո Մոլդովայից հայերը սկսում են գաղթել Տրանսիլվանիա։ Լվովի հայ կաթոլիկ արքեպիսկոպոսությունը ժամանակավոր կերպով կանգ էր առնում կաթոլիկական քարոզչությամբ արշավելու Մոլդովայում դեռևս մնացած հայերի վրա և ամբողջ ուժը կենտրոնացնում էր Տրանսիլվանիայի հայերին կաթոլիկացնելու գործին։ Կաթոլիկական քարոզչության համար Տրանսիլվանիայում երկու նպաստավոր հանգամանք կար, նախ այն, որ հայերը ցիրուցան և պաշտպանության կարոտ էին, իսկ երկրորդ, որ նրանք գտնվում էին այնպիսի մի երկրում, որը շուտով մաս էր կազմելու կաթոլիկական քարոզչության մեծ զորավիգ հանդիսացող Ավստրիական կայսրության։ Ահա թե ինչո՛ւ ԺԷ դարի վերջում Հայաստանում երկարամյա կաթոլիկական քարոզչության մեծ փորձ ունեցող և Նիկոլի հաջորդ Վարդան Հունանյանը, որը ուշի-ուշով հետևում էր Մոլդովայի հայերի գաղթին դեպի Տրանսիլվանիա, հասած գտավ այն վայրկյանը, երբ անհրաժեշտ էր հնարքներ մտածել և ամբողջ ուժով խոյանալ Տրանսիլվանիա գաղթած հայերի վրա և մեկ թափով նրանց ընդունել տալ կաթոլիկությունը, և ապա միայն վերսկսել բուն Մոլդովայում մնացող հայերի վաղուց սկսված սակայն անհաջողության մատնված կաթոլիկության մղելու գործը։

Պետք է նշել սակայն, որ Լվովի հայ կաթոլիկ թեմի և ընդհանրապես հռոմեական քարոզչության այս շրջանի պատմության համար մեծ գյուտ էր Օքսենտ Վրզարյանի անձնավորությունը։ Նա բնիկ մոլդովացի հայ էր և որդին էր բոդոշանցի հայ վաճառականի և այդ քաղաքի հայոց դատավոր Լուսիկ Վրզարյանի։ Վրզարյանը դեռ շատ վաղ հասակում, հավանաբար դարձյալ Լվովի միջոցով, ընկել էր կաթոլիկության գիրկը, տասնչորս տարի (1670—1684) Հռոմի Ուրբանյան քարոզչական դպրոցում սովորելուց հետո, դարձել էր հոգևորական և որպես կաթոլիկ քարոզիչ ուղարկվել էր Տրանսիլվանիա՝ իր հայրենակիցներին կաթոլիկացնելու առաքելությամբ։ Այդտեղ էին գաղթել Բոտոշանից նաև իր ծնողները և քարոզչության գործը նա սկսեց առաջին հերթին իր տնից։ Նա էր, որ, ինչպես գրում է Ըստկարյանը, «Մինաս ճեռծվածող (ընդգծումը մերն է—Ս. Ք.) եպիսկոպոսը Հռոմա եկեղեցվո գոգը դարձուց»[22]։ Այս շրջանում արդեն ամեն տեղ զգացվում է Լվովի հայ կաթոլիկ թեմի գերագույն իշխանությունը։ Մինասի մահից հետո, Վարդան Հունանյանը 1687 թվականին գրած մի թղթով Վրզարյանին Տրանսիլվանիայի հայոց եպիսկոպոսի փոխանորդ և տեսուչ էր նշանակել։ Քիչ անց, ինչպես կտեսնենք, Ալեքսանդր Ը պապը նրան Տրանսիլվանիա գաղթող հայերի վրա առաքելական փոխանորդ և երեսփոխան անվանեց, իսկ հետո, 1691 թվականին, Հունանյանի մոտ Լվովում եպիսկոպոս ձեռնադրվեց և որից հետո, ինչպես գրում է նույն Հունանյանը իր «Առ Ուդոկիացիս» թղթում, «և գնացեալ ի Տրանսիլուանիայ զհայս անդէն եղեալս միաբանեցոյց ընդ Սրբոյ Եկեղեցւոյն Հռոմայ»[23]։ Որ իսկապես Տրանսիլվանիայի հայերին կաթոլիկության մղելու գործում ղեկավար դեր է խաղացել Լվովը, այդ երևում է նաև Տրանսիլվանիայի հայերի կյանքին քաջատեղյակ Ստեփանոս Ռոշքայի իր ժամանակագրության մեջ թողած տողերից, ուր, խոսելով Նիկոլ Թորոսովիչի մահվան մասին, գրում է նաև հետևյալը. «...Զի երկարաձիգ ամաց ժամանակամբն՝ երկիցս ի Հռովմ, երկիցս յարենեկս երթալով, զազգ մեր Հայոց ի Լեհաստանն՝ ի հնազանդութիւն Սուրբ Մօր Եկեղեցւոյն Հռովմայ դարձոյց. յորմէ և ի Մաճառս (իմա՝ Տրանսիլվանիա—Ս. Ք.) և յայլ տեղիս ուղղափառութիւնն սփռեցաւ...»[24]։

Նույն շրջանում, դարձյալ Լվովում, Հունանյանի մոտ է որ, Մոլդովայի հայերի ավագերեց Եղիա Մնտրուլը դավանափոխ է լինում, այլոց հետ միասին։ Հունանյանը այդ մասին գրել է. «Ի նոյնում ամի (իմա՝ 1691) տէր Եղիայ Սէչովցի, Մնտրուլ անուանեցեալ, աւագ քահանայ ընդ ամենայն երկիրն Պուղտանաց, առաջի իմ արար զդաւանութիւն... աստ ի Լէօպոլիս»[25]։

---

[21] «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ», հրտ. Մեսրոպ վարդապետ Նշանյան, Երուսաղեմ, 1915, էջ 385, 588։ —«Բուն միութիւն հայոց...», էջ 89, 112, 192։

[22] Վ. Վ. Ըստկարյան, «Եկեղեցական պատմութիւն...», Վիեննա, էջ 384։

[23] Հ. Ղ. Ալիշան, «Կամենից, տարեգիրք Հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ հաւաստուքեալ յաւելուածովք», Վենետիկ, 1896, էջ 128։

[24] Նույն տեղում, էջ 143։

[25] Նույն տեղում, էջ 128։

Նույնպես, պատմաբան Ն. Յորգան, նշելով հիշյալ սուչավացի Եղիա, կոչեցյալ Մնտրով ավագերեցի այլ 8 պատվիրակների հետ դավանափոխ լինելու մասին, ինք ևս հաստատում է, որ Լվովի Թեմը իրենից կախման մեջ էր պահում Տրանսիլվանիայի հայերին[26]։

Նկատի ունենալով Հունանյանի դերը,— «ինչպես նաև ուրիշ մեկ քանի ապացույցներ,— գրում է գնոլացի Ոսկարյանը,— կվկայեն որ Դրանսիլվանիայի հայերը Լեմբերգի հայ արքեպիսկոպոսի իրավասության տակն էին[27]։ Սակայն Լվովի իշխանությունը միայն այսքանով չէր վերջանում. հայտնի է, որ Նիկոլը, Թեատինյան հոգևորականները, ինչպես նաև Հունանյանը, Քերիմովիչը և ուրիշներ Լեհաստանի հայերին կաթոլիկացնելուց հետո, սկսել էին նաև սրբագրել հայ եկեղեցական բոլոր գրքերը, նրանցից մի քանիսին բոլորովին մերժելով, ուղղակի թարգմանել էին լատիներենից։ Ահա Լվովի նախաձեռնությամբ սրբագրված և կամ նոր կազմված այդ եկեղեցական գրքերն են, որ մուտք էին գործում նաև Տրանսիլվանիայի հայաշատ քաղաքների կաթոլիկական եկեղեցիները։ Տրանսիլվանիայի Գեռլա, Եղիսաբեթուպոլիս (այժմ Դումբրըվեն), Կլուժ և Ֆրումոասա քաղաքներում մեզ հանդիպել են բավական թվով ձեռագրեր, որոնք կա՛մ արտագրվել են Լվովում, Կամենիցում, Ստանիսլավովում և կամ ընդօրինակվել են այդ վայրերում գրված ձեռագրերից։ Ինչպես գրում է Հ. վարդապետ Գաբրիելյանը, «Լեհահայոց ծիսարանը կամ Մաշտոցը ծայրե ի ծայր նոր թարգմանություն է լատիներենե։ Խորհրդատետրն այսպիսի վիճակի չհասավ, սակայն վերջ ի վերջո հասավ հանգչյալ այնպիսի կերպարանքի մ՚որ խառնուրդ մըն է մեր սովորականին և Միսալինս»[28]։ Ստեփանոս Ռոշքան, որ մի ժամանակ այցարար էր Տրանսիլվանիայի հայոց, 1730 թվականի դեկտեմբերի 6-ի նամակով, ուղղված Խաչատուր վարդապետին, ծանուցանում է, թե հիշյալ ծիսարանը արդեն գործածության մեջ էր Լեհաստանի և Տրանսիլվանիայի հայերի մոտ[29]։ Զբավականանալով այդքանով, քիչ հետո կտեսնենք, թե Լվովի Թեմը, երբ վերսկսեց Մոլդովայում ապրող հայերին կաթոլիկության մղելու փորձերը, սրբագրված զանազան եկեղեցական գրքեր մեծ հնարքներով կարողացավ մուծել նույնիսկ Մոլդովայի հայոց եկեղեցիներից ներս։

## 2. ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱՅԻ ՀԱՅԵՐԻՆ ԴԱՎԱՆԱՓՈԽ ԱՆԵԼՈՒ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ (1684—1690 Թ. Թ.) ԵՎ ԱՎԱՆԴԱՊԱՀ ՀԱՅԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ

Տրանսիլվանիա ապաստանած հայերը 1672—1686 թվականների ընթացքում, 14 տարի շարունակ, ազատ էին դավանելու իրենց կրոնը։ Այս շրջանի պատմության մասին թանկագին մի փաստաթուղթ է հանդիսանում հայերի կողմից 1693 թվականին Լեոպոլդ կայսրին ներկայացված հուշագիրը։ Այստեղից հայտնի է դառնում, որ հայերը սկզբնական շրջանում խնդրել էին, որ իրենց օրապահիկը ճարելու համար առևտրի ազատություն տրվի և, նկատի առնելով նաև իրենց նյութական ծանր վիճակը, մեկ-երկու աղոթատեղի շնորհվի։ Տրանսիլվանիայի եպիսկոպոսական տեղապահ Սեբելեբին խոստացավ այդ բոլորը կատարել, եթե «իրենց հավատքին ճիշտ քննությանն ետև հայտնի երևա, որ հռոմեական կաթուղիկե կրոնը կդավանին»։ Հայերը, պահպանելու նպատակով իրենց հայրենի սովորությունները, ինչպես ասված է հուշագրում, ստիպվեցին թաքցնել իրենց «հերձվածող» լինելը։ Այն ժամանակ երկու մատուռ տրվեց իրենց, մեկը Ջուրջովում, իսկ մյուսը՝ Ցիկում, այն պայմանով, որ հայերը սրանից հետո էլ «ջերմեռանդ կաթուղիկե ուղղափառներ պիտի մնան»[30]։ Ահա այս ժամանակ է, որ Տրանսիլվանիա է ժամանում բնիկ բոտոշանցի Օքսենտ Վրդրեսկուլ, կամ Օքսենտ Վրդարյան կաթոլիկացած հայ վարդապետը, գաղթող հայերին կաթոլիկության մղելու դիտավորությամբ։ Նա մերձավորներից էր Լվովի առաջնորդ Վարդան Հունանյանի և իր ուսումը ստացել էր Հռոմի Ուրբանյան վարժարանում։ Ինչպես նշված է վերոհիշյալ հուշագրում, Օքսենտը հասնելով Ջուրջով, հայերի «հերձվածող» լինելու գաղտնիքը հայտնել էր Տրանսիլվանիայի եպիսկոպոսական տեղապահ Սեբելեբինին։ Տեղապահը այդ լսելով, հայերին գործածության համար տրված երկու մատուռները հետ վերցրեց Օքսենտի ձեռքով։ Նույն հուշագրության մեջ ասված է. «Ավքսենտիոս... Աստուծո այգվույն մեջ այնպիսի եռանդով գործեց, որ վեց տարվան մեջ, այ-

[26] N. Iorga, „Armenii si Românii: o paralelă istorica...", 1914, p. 69.

[27] Վ. Վ. Ոսկարյան, նշված աշխատությունը, էջ 385։

[28] Հովսեփ վարդապետ Գաբրիելյան, «Սրբազան պատարագամատոյցք Հայոց..., հրատարակեալ հանդերձ յաւելուածովք ի Հ. Յակովբոսի վարդապետէ Տաշեան», Վիեննա, 1897, էջ 594—595։

[29] Նույն տեղում։

[30] Գ. Գովրիկյան, «Հայք յեղիսաբեթուպոլիս Դրանսիլուանիոյ, 1780—1835», Բ, Վիեննա, 1899, էջ 154։

սինքն 1684- են 1690, Տրանսիլվանիո այլ և այլ տեղերը սփռված բոլոր հայերը հանդիսությամբ Հռոմեական եկեղեցիին հարեցան...»[31]։ Վրզարյանը իր այս գործունեության համար կաթոլիկական աղբյուրներից անվանվել է անգամ «երկրորդ լուսավորիչ»։ Ահա թե ի՛նչ է գրված եղիսաբեթուպոլսի հայոց եկեղեցու մի գնդի մեջ զետեղված հիշատակարանում. «Երկրորդ լուսաւորչի մը պես երեւան ելավ Ավքսենտիոս Վրզարյան և հայոց փոքրիկ հոտը՝ հավատքի լույսին մեջ սկսավ զվարճանալ ու կուրության մրութենեն արձակվիլ»[32] (ընդգծումը մերն է—Ս. Ք.)։

Ընտկարյանը ևս մեծարելով Վրզարյանի այս «գործը», գրում է. «Զարմանալի անձնանվիրությամբ (ընդգծումը մերն է—Ս. Ք.), հոնտեղվան հայոց դարձին սկսավ աշխատիլ, և զանոնք ամբողջ Հռոմա եկեղեցվո հետ միաբանեց...»[33]։

Այս հուշագրում, որն ըստ Գ. Գովրիկյանի, «անշուշտ Ավքսենտիոս Վրզարյանին թելադրությամբը՝ մանավանդ թե գործակցությամբ գրված է առ Լեոպոլտոս կայսր»[34], առաջին հայացքից շատ հեշտ և խաղաղ է պատկերված Տրանսիլվանիայի հայերի կաթոլիկացման գործը։ Տրանսիլվանիայում կաթոլիկության տարածման նույն խաղաղ ոճը կզացվում է նաև այդ կապակցությամբ Վ. Հունանյանի և Ս. Ռոշքայի ԺԸ դարի սկզբին թողած տողերից և որոնք քիչ առաջ մեջ բերեցինք։ Նոր պատմագրության մեջ ևս շտապ և խաղաղ կերպով է պատկերվել Տրանսիլվանայի հայերի մոտ կաթոլիկության «հաղթանակը»։ Ընտկարյանը գրել է. «Տրանսիլվանիայի հայք Մոլդովայեն եկած ըլլալով, հերձվածող էին, իրենց Հռոմա եկեղեցվո հետ միաբանությունն յոթնասնեբորդ դարուն վերջերն եղավ։ Եվ կամ Վրզարյանը «զանոնք (իմա՝ Տրանսիլվանիայի հայերին) ամբողջ Հռոմա եկեղեցվո հետ միաբանեց...»[35]։ Հ. Ղ. Ալիշանը ևս գրում է, որ Տրանսիլվանիայի հայերը, «ի վերջ կոյս ԺԷ դարու միաբանեալք ընդ Հռովմէականս»[36]։ Մ. արքեպիսկոպոս Օրմանյանը ևս, հետևելով ընդունված կարծիքին, գրել է. «Արդեն կազմակերպյալ չէին նոր գաղթականները և Ավստրիո կայսրության պաշտպանության ալ կկարոտեին, ուստի շատ դյուրավ կատարվեցավ հունգարահայերուն դավանափոխությունը (ընդգծումը մերն է—Ս. Ք.)»[37]։

Որոշ գիտնականներ էլ ոչ մի խոսք չեն գրել Տրանսիլվանիայի հայերի կաթոլիկացման մասին։ Այս կապակցությամբ բավականանում ենք միայն հիշատակել Փ. Տուռնըբիզ օտար հայագետի գործը, որտեղ խոսելով հանգերձ կաթոլիկական քարոզչության մասին, ինչպես Հայաստանում, այնպես էլ հայ գաղութներում և հատկապես Լեհաստանում, ոչ մի բառ չի նվիրում Տրանսիլվանիայի հայերին, միայն աշխատության վերջում մի տեղ գրում է, որ 13 000 հայ կաթոլիկներ կան հին Ավստրո-Հունգարիայում[38]։ Այստեղից էլ սակավիմաց որևէ ընթերցող գուցե կկարծի, թե Ավստրո-Հունգարիայի, ներառյալ նաև Տրանսիլվանիայի հայերը, արդեն իսկ ի սկզբանե կաթոլիկ են եղել։

Սակայն իրականում փաստերը ցույց են տալիս, որ Տրանսիլվանիա գաղթող հայերը և իրենց ղեկավարները երկար ու համառ պայքար են մղել կաթոլիկական քարոզչության դեմ։ Վիեննայի Մխիթարյան գիտնական բնիկ գեռլացի Հ. Գ. Գովրիկյանը, որը մեծ վաստակ ունի Տրանսիլվանիայի հայերի պատմությունը ուսումնասիրելու գործում, տեղի հայերի կաթոլիկացման շուրջ գրում է, որ Օքսենտը Հռոմից անցել էր Տրանսիլվանիա «այն բացորոշ կամոք, որ Մոլդավիայեն հոն գաղթող ազգայիններուն ուղղափառության ճշմարտությունները ճանչցրնե։ Իր այս դիտման ամենեն առաջ և ամենեն ավելի ընդդիմացավ Մինաս Զիլիֆտար օղլու եպիսկոպոսը»[39]։ Որ հայերը ծայր աստիճան ընդդիմացել էին Վրզարյանին ու դիմել նույնիսկ Տրանսիլվանիայի կառավարությանը, այդ երևում է նաև Հ. Գ. Գովրիկյանի հետագա տողերից. «Իրենները՝ զինք իբրև խաղաղության վրդովիչ ու հավատքի խռովարար Դրանսիլվանիո կառավարության ամբաստանեցին։ Բայց չվախցավ, սկսած գործեն ետ չկեցավ, չորս տարի անսվաղ գործեց բանիվ և գործով։ Վերջապես իր աշխատությունը վարձատրվեցավ, այնու՝ որ նույնիսկ անոնք՝ որոնք իր ամենեն մեծ թշնամիներն էին ի մեջ այլոց Մինաս քահանայից բազմությամբ մը հայտնեցին իր առջևը թե Ուղղափառ եկեղեցին դառնալու կփափաքին»[40]։

---

[31] Գ. Գովրիկյան, Նշված աշխատությունը, էջ 157։

[32] Նույն տեղում, էջ 78։

[33] Վ. Վ. Ընտկարյան, Նշված աշխատությունը, էջ 384։

[34] Գ. Գովրիկյան, Նշված աշխատությունը, էջ 150։

[35] Վ. Վ. Ընտկարյան, Նշված աշխատությունը, էջ 384։

[36] Հ. Ղ. Ալիշան, «Սիսական, տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի», Վենետիկ, 1893, էջ 468։

[37] Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, «Ազգապատում», Ա, Կ. Պոլիս, 1914, սյունակ 1820։

[38] Փ. Տուռնըբիզ, «Հայաստան և հայ եկեղեցական պատմությունը», Վենետիկ, 1980, էջ 161։

[39] Գ. Գովրիկյան, «Դրանսիլուանիո հայոց մետրոպոլիսը կամ Նկարագիր Գերլա հայաքաղաքի ի գիր և ի պատկեր», Վիեննա, 1896, էջ 119։

[40] Նույն տեղում։

(Շարունակելի)



# ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

## ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

**Հայկական սովետական հանրագիտարան.**— Վերջերս Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահությունը քննության առավ «Հայկական սովետական հանրագիտարան»-ի հրատարակության հետ կապված մի շարք հարցեր և ընդունեց համապատասխան որոշում:

Հանրագիտարանը հրատարակվելու է հայերեն լեզվով և բաղկացած է լինելու 10 ստվար հատորներից: Առաջին հատորը լույս է տեսնելու 1967 թվականին, իսկ 10-րդ հատորը՝ 1972 թվականին: Խմբագրման և հրատարակման բոլոր աշխատանքները ղեկավարելու է գիտությունների ակադեմիայի նախագահությունը, որին կից ստեղծվելու են 25 տարբեր խմբագրություններ՝ ըստ բնագավառների: Խմբագրությունները ղեկավարելու են տարբեր մասնագիտության ականավոր գիտնականներ:

Ավելի քան մեկ տարի է, ինչ սկսվել են հանրագիտարանի բառացանկը կազմելու աշխատանքները: Արդեն կայմված է սկզբնական տարբերակը, որը պարունակում է շուրջ 15 000 բառ:

**«Ազդարար»-ի 170-ամյակի առթիվ.**— Այս տարի լրացավ հայ առաջին պարբերականի՝ «Ազդարար»-ի հրատարակության 170-ամյակը: «Ազդարար»-ը սկսել է լույս տեսնել 1794 թվականին Հնդկաստանի Մադրաս քաղաքում և իր ժամանակին կարևոր դեր է խաղացել հայ հասարակական մտքի զարգացման գործում:

Տարեդարձի առթիվ տեղի ունեցավ Երևանի մամուլի աշխատողների համաքաղաքային ժողով: Գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի ավագ գիտական աշխատող Մ. Մխիթարյանը հետաքրքրական զեկուցում կարդաց հայ առաջին պարբերականի մասին: Նա հանգամանորեն կանգ առավ «Ազդարար»-ի հիմնադրման պատմության վրա, ցույց տվեց «Ազդարար»-ի դերն ու նշանակությունը հայ հասարակական մտքի զարգացման ասպարեզում և դրվատեց նրա խմբագիր Հարություն քահանա Շմավոնյանի գործունեությունը:

**Մատենագիտական ուղեցույց.**— Երևանի Ալեքսանդր Մյասնիկյանի անվան պետական գրադարանի հրատարակությամբ լույս է տեսել «Մատենագիտություն հայկական մատենագիտության» աշխատությունը:

Այս արժեքավոր աշխատությունը, որը խնամքով ու խղճմտորեն կազմել են գրադարանի մատենագիտության բաժնի աշխատողները, կոչված է ուղեցույցի դեր կատարելու մատենագիտությամբ զբաղվողների համար: Գրքի արժանանիքներից մեկը մատենագիտական նյութերի առատությունն է: Նրանում զետեղված են մատենագիտական գրեթե բոլոր ցանկերը, որոնք մինչև այժմ հայտնի են եղել մեր մատենագրության մեջ:

**«Հայ աստղագիտության պատմությունը».**— Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս է տեսել Բենիկ Թումանյանի «Հայ աստղագիտության պատմությունը» արժեքավոր աշխատությունը: Գրքի առաջաբանը գրել է ակադեմիկոս Վ. Համբարձումյանը, որը նշում է, թե այս աշխատությունը կգայի ավանդ է հայ ժողովրդի պատմության մեջ: Բնականաբար այս աշխատությունը հեղինակի երկարամյա ուսումնասիրությունների արդյունք է, հիմնված Մատենադարանի ձեռագրերում պարունակվող հարուստ նյութերի վրա:

Հեղինակը մասնավոր տեղ է հատկացրել հայ աստղագիտության խոշորագույն դեմքերին՝ Անանիա Շիրակացուն (Է դ.) և Հովհաննես իմաստասերին (ԺԱ դ.): Առանձին գլուխներ են նվիրված հայկական տոմարին, աստղագիտական գործիքներին, աստղային քարտեզներին: Տրված են Մատենադարանում պահվող աստղագիտական բովանդակությամբ ձեռագրերի ցանկը և նրանց մանրամասն նկարագրությունը:

**Հովհաննես Հովհաննիսյանի ծննդյան 100-ամյակը.**— Հայաստանի գրական հասարակայնությունն ու մամուլը լայնորեն նշեցին հայ քնարերգության ականավոր դեմքերից մեկի՝ բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի

ծննդյան 100-ամյակը: Հանրապետության քաղաքներում, մի շարք բարձրագույն գիտական և ուսումնական հաստատություններում տեղի ունեցան գրական հանդեսներ ու դասախոսություններ՝ նվիրված տաղանդավոր բանաստեղծի կյանքին ու գրական գործունեությանը:

Նոյեմբերի 23-ին Երևանի օպերային թատրոնում տեղի ունեցավ հանդիսավոր հոբելյանական երեկո, որին ներկա էին կառավարական հոբելյանական հանձնաժողովի անդամները, գրողներ, արվեստագետներ, գիտնականներ և մեծ թվով հանդիսականներ: Հանդիսավոր նիստը բացեց գրող Ստեփան Զորյանը: Նա իր համառոտ ելույթում որվատեց Հովհաննես Հովհաննիսյանի դերը հայ բանաստեղծության վերածննդի գործում, վեր հանեց նրա բանաստեղծությունների խորը ժողովրդականությունը:

Այնուհետև բանասիրական գիտությունների թեկնածու Արամ Ինջիկյանը բանախոսեց Հովհաննես Հովհաննիսյանի կյանքի և գրական գործունեության մասին: Երեկոյի վերջում տեղի ունեցավ ճոխ համերգ:

**Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանում.**— Անցել է մեկ տարի, ինչ Ավետիք Իսահակյանի առանձնատունը, որտեղ նա ապրել է իր կյանքի վերջին 10 տարին, վերածվեց թանգարանի: Տուն-թանգարանի տնօրեն է նշանակված բանաստեղծ Սուրեն Վահունին:

Մեկ տարում տուն-թանգարանն այցելել է ավելի քան 15 000 մարդ, այդ թվում բազմաթիվ սփյուռքահայ և օտարերկրյա տուրիստներ: Այն դարձել է Երևանի դպրոցականների և ուսանողների սիրելի վայրերից մեկը: Այստեղ նրանք ծանոթանում են մեծ բանաստեղծի կյանքին ու գրական գործունեությանը, լսում ժապավենի վրա առնված նրա կենդանի խոսքը, լսում Իսահակյանի բանաստեղծություններով հորինված երգեր:

Թանգարանը հետզհետե ճոխանում է նոր նյութերով ու փաստաթղթերով: Մեկ տարվա ընթացքում թանգարանը ստացել է Ավետիք Իսահակյանի բազմաթիվ լուսանկարներ, ձեռագրեր և նամակներ: Թանգարանի աշխատողները եռանդուն կերպով մշակման են ենթարկում Իսահակյանի ձեռագրերը, որոնք հետագայում հանձնվելու են տպագրության:

**Գիտական մեծ համագումար Երևանում.**— Հոկտեմբերի 22-ից մինչև 28-ը Երևանում տեղի ունեցավ Ի. Պ. Պավլովի անվան համամիութենական ֆիզիոլոգիական ընկերության 10-րդ համագումարը: Համագումարին ժամանել էին ավելի քան 1 000 գիտնականներ Սովետական Միության տարբեր վայրերից, ինչպես նաև արտասահմանյան մի շարք երկրներից:

Ներածական հակիրճ խոսքով համագումարը բացեց սովետական ականավոր ֆիզիոլոգ, ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Էզրաս Հասրաթյանը:

Համագումարում լսվեցին ու քննության առնվեցին շուրջ 500 զեկուցումներ՝ ֆիզիոլոգիական գիտության տարբեր ճյուղերի վերաբերյալ: Հայաստանի ֆիզիոլոգներից համագումարին մասնակցեց 57 մարդ: Նրանցից շատերը հանդես եկան գիտական հաղորդումներով և զեկուցումներով:

Գիտական հարցերի քննարկումից բացի, համագումարը լսեց ընկերության կենտրոնական խորհրդի հաշվետվությունը վերջին 5 տարվա գործունեության մասին և ընտրեց նոր խորհուրդ, իսկ վերջինս իր կողմից ընտրեց ընկերության նախագահությունը:

**Նոր թանգարան.**— Երևանում բացվել է գիտությունների ակադեմիայի կենդանաբանության ինստիտուտի թանգարանը: Ցուցափեղկերում դասավորված խրտվիլակների միջոցով ցուցադրված են Հայաստանի կենդանական աշխարհի գրեթե բոլոր ներկայացուցիչները՝ ձկներ, սողուններ, թռչուններ, կաթնասուններ և այլն:

Ջրային կենդանիների բաժնում ցուցադրված են Հայաստանի լճերում և գետերում եղող շուրջ 30 տեսակի ձկներ: Ցուցադրված են նաև երկկենցաղ կենդանիների նմուշներ: Գրեթե ամբողջովին ներկայացված են Հայաստանում տարածված սողունները՝ թվով 41 տեսակ, այդ թվում ահագին մեծությամբ թունավոր օձեր: Հարուստ է թռչունների բաժինը, այստեղ կան հազվագյուտ կովկասյան մայրահավեր և արծիվներ, ինչպես նաև բազմապիսի գիշատիչներ: Կաթնասունների բաժնում կան թանկարժեք մորթատու կենդանիներ՝ քարակզաքիս, ջրասամույր, աքիս, փորսուղ և այլն:

Թանգարանն ավարտվում է Հայաստանում տարածված կրծողների ցուցադրությամբ:

**Հետաքրքրական աշխատություն.**— Հայաստանի ակադեմիայի հրատարակությամբ լույս է տեսել «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» աշխատության երկրորդ հատորը:

Հատորը պարունակում է հետաքրքրական նյութեր հայ և հարևան ժողովուրդների պատմության, պատմական աշխարհագրության, հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքի վերաբերյալ: Նյութերը քաղված ու թարգմանված են ԺԶ—ԺԸ դարերի թուրք պատմագիր-տարեգիրների երկերից: Գիրքն ունի հավելված, ընդարձակ ծանոթագրություններ և թուրքական մի շարք պաշտոնական փաստաթղթերի թուրքերեն տեքստերը:

**Աղվանական գրերի վերծանումը.**— Համաձայն մեր պատմիչների, աղվան ժողովուրդը, որը վաղուց ի վեր գոյություն չունի, իր պետականության շրջանում ունեցել է սեփական գիր և գրականություն: Պատմական աղբյուրները վկայում են, որ աղվանական գրերը ևս ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը: Սակայն աղվանական գրականության ոչ մեկ նմուշ մեզ չի հասել:

Երևանի պետական մատենադարանում պահպանվում է մի ձեռագիր, որի մեջ ժամանակին հայտնաբերվել էր աղվանական այբուբենը: Սակայն այդ այբուբենը երկար ժամանակ պետք չէր գալիս, որովհետև չէր գտնվում աղվաներեն լեզվով որևէ գրություն՝ կարդալու համար: Հետագայում, երբ գտնվեցին աղվաներեն արձանագրություններ, եղած այբուբենով հնարավորություն չեղավ դրանք կարդալու, որովհետև այբուբենի տառանիշերը խիստ աղավաղված էին ընդօրինակությունների ժամանակ:

Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Գարեգինի Աբրահամյանը, երկար տարիների պրպտումներից հետո,

կարողացել է աղվանական այբուբենի աղավաղված տառանիշների հնչական արժեքները վերականգնել: Այնուհետև, հիմք ընդունելով ուտիերեն լեզուն, պրոֆ. Ա. Աբրահամյանը կարողացել է վերծանել աղվանական մի արձանագրություն, որը տեղեկություններ է պարունակում 640 թվականին կառուցված մի աղոթատան մասին:

**Գրականության և արվեստի թանգարանում.**—Երևանի գրականության և արվեստի թանգարանը վերջերս Նոր Նախիջևանից ստացավ գրող և թարգմանիչ Սահակ Մյասնիկյանի արխիվի մեկ մասը (Ս. Մյասնիկյանը հայտնի պետական գործիչ և մտավորական Ալեքսանդր Մյասնիկյանի եղբայրն էր):

Արխիվը պարունակում է արժեքավոր նյութեր Նոր Նախիջևանի հայ գաղութի, ինչպես նաև Ղրիմի հայերի պատմության վերաբերյալ: Կան հետաքրքրական հուշագրություններ Նոր Նախիջևանի հայոց թեմական դպրոցի պատմության, Ռ. Պատկանյանի, Ալ. Մյասնիկյանի, Մարիետտա Շահինյանի, բժիշկ Քեչեկի, հասարակական գործիչ Գրիգոր Չալխուշյանի և ուրիշների մասին: Արխիվում կան մեծ թվով նամակներ՝ գրված ժամանակի նշանավոր մարդկանց կողմից Սահակ Մյասնիկյանին:

**Հայաստանի պետական երգչախմբի շրջագայությունը.**—Հոկտեմբերի վերջերին Հայաստանի պետական երգչախումբը մեկնեց երկարատև շրջագայության: Խումբը, ղեկավարությամբ Հովհաննես Չեքիջյանի, համերգներով հանդես եկավ Էստոնիայում, Լատվիայում, Լիտվայում, Լենինգրադում: Այնուհետև համերգներ են տրվելու Մոսկվայում, Հյուսիսային Կովկասի մի քանի հայաշատ քաղաքներում և Բաքվում:

Համերգների համար երգչախումբը պատրաստել է 8 տարբեր ծրագրեր, որոնք կազմված են հայ, ռուս և արևմտա-եվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններից: Զգալի տեղ են գրավում Կոմիտասի, Եկմալյանի, Կարա-Մուրզայի, Էդվարդ Միրզոյանի և ուրիշների ստեղծագործությունները: Շրջագայության ժամանակ համերգներին մասնակցում են Սովետական Միության ժողովրդական դերասանուհի Գոհար Գասպարյանը, Հայաստանի Հանրապետության վաստակավոր դերասանուհի Գոհար Գալաչյանը, հռչակավոր դաշնակահար Իոխելսը (Մոսկվա) և ուրիշներ: Երգչախումբը հանդես կգա նաև տեղական սիմֆոնիկ նվագախմբերի հետ:

**Պոլսահայ դաշնակահարի համերգները Երևանում.**—Անցյալ հոկտեմբերին սփյուռքահայ հայրենակիցների հետ մշակութային կապի հայկական ընկերության հրավերով Երևան այցելեց պոլսահայ երիտասարդ դաշնակահար Հիրման Միսքչյանը: Նա ծանոթացավ Երևանի երաժշտական կյանքին, եղավ մշակութային հաստատություններում: Երաժիշտը հատուկ այցելություն տվեց Վազգեն Ա Վեհափառ Հայրապետին:

Մշակութային կապի ընկերությունը Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում կազմակերպեց երիտասարդ դաշնակահարի համերգը Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ: Հ. Միսքչյանը հաջողությամբ կատարեց Գրիգի կոնցերտը դաշնամուրի համար և մի շարք այլ ստեղծագործություններ:

Մասնագետները բարձր գնահատական տվեցին Հ. Միսքչյանի կատարողական արվեստին: Դահլիճը ջերմորեն ընդունեց երիտասարդ դաշնակահարին:

**Ժողովրդական ստեղծագործության ցուցահանդես.**—Երևանում, ժողովրդական ստեղծագործության տանը, բացվել է ինքնուս արվեստագետների ստեղծագործությունների ցուցահանդես:

Ցուցադրված են բազմաթիվ նմուշներ՝ փորագրություններ փայտի և քարի վրա, պղնձյա և արծաթյա գեղեցիկ իրեր մանրանկարչական զարդերով: Կան նաև նկարչական հետաքրքրական գործեր և քանդակներ:

Ժողովրդական ստեղծագործության տունը մեծ աշխատանք է կատարում ինքնուս արվեստագետների հետ, օգնելով, որպեսզի նրանք ավելի կատարելագործեն իրենց ստեղծագործական վարպետությունը: Ժողովրդական ստեղծագործության շատ նմուշներ ցուցադրված են Երևանի, Մոսկվայի և Լենինգրադի թանգարաններում:

**Հետաքրքրական թվեր.**—Վերջին 5 տարում, այսինքն 1959-ից մինչև 1963 թվականը ներառյալ, Երևանում կառուցվել են 900 000 քառակուսի մետր տարածությամբ բնակարաններ, այսինքն 3 անգամ ավելի, քան նախորդ 5 տարիներին: 33 000 ընտանիքներ ստացել են նոր բնակարաններ:

Նույն ժամանակամիջոցում կրկնապատկվել է քաղաքին մատակարարվող ջրի քանակը: Այժմ յուրաքանչյուր շնչին օրական գալիս է 193 լիտր ջուր, չհաշված արդյունաբերական կարիքների համար օգտագործվող ջուրը: Ջրմուղի ցանցը ավելացել է 153 կիլոմետրով:

Երևանի կոյուղու ներկա ցանցի կեսից ավելին ստեղծվել է 1959—1963 թվականների ընթացքում: Աշխատանքները շարունակվում են նույն թափով: Այժմ կառուցվում են կոյուղու նոր գծեր և կեղտաջրերի մաքրման կայան:

Ամեն տարի (վերջին հնգամյակում) Երևանի հանրակրթական դպրոցների առաջին դասարաններն են ընդունվում 15 000—20 000 մանուկներ: Քաղաքում այժմ գործում են 206 մանկապարտեզներ և մանկամսուրներ:



# ՑՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

## № 208

### ԱՒԵՏԱՐԱՆ

**Թերթերը՝** *307։—* **Պրակները՝** *27, յուրաքանչյուրը 12 թերթից, որոնցից ԻԶ՝ 4, Ա՝ 9, Բ և Դ՝ 10, Ա և Ը՝ 11 թերթից են։—* **Մեծությունը՝** *19,7×15,2×6 սմ.։—* **Նյութը՝** *դեղնած և կեղտոտած, երբեմն հաստ և երբեմն էլ բարակ մագաղաթ։ Միայն ձեռագրի վերջին մասը, թ. թ. 256—307, թուղթ է։—* **Կազմը՝** *մաշված կաշեպատ ստվարաթուղթ։—* **Պահպանակները՝** *սկզբից և վերջից մեկական հաստ կապույտ թուղթ։—* **Վիճակը՝** *բավարար։ Միայն վերջից թերի է և հիշատակարանը ընկել է։ Ցարագործ մի ձեռք ձեռագրից կտրել է Մատթեոս, Մարկոս և Հովհաննես ավետարանիչների նկարները։ Մնում է միայն Ս. Ղուկասի նկարը (թ. 155բ)։—* **Գրությունը՝** *միասյունի։—* **Դատարկ թղթեր՝** *չունի։—* **Տողերը՝** *23։—* **Գծումները՝** *ճնշումով։—* **Գիրը՝** *բոլորգիր։—* **Զարդագրությունը՝** *ձեռագիրն ունի բավական գեղեցիկ համաբարբառներ, խորաններ, կիսախորաններ, լուսանցազարդեր, թռչուններ, կենդանիներ, ծառեր, ծաղիկներ, սրբեր և գմբեթներ։ Կան նաև բազմաթիվ թռչնագրեր, զարդագրեր և ձկնագրեր, ինչպես նաև մեկական հատ հրեշտակագիր (թ. 12ա), գազանագիր (թ. 99ա) և կենդանագիր (թ. 156ա)։—* **Գրիչը՝** *անհայտ։—* **Պատվիրատուն՝** *անհայտ։—* **Ծաղկողը՝** *անհայտ։—* **Ժամանակը՝** *ԺԵ—ԺԶ դարեր։—* **Վայրը՝** *անհայտ։—* **Ընծայությունը՝** *Վեհափառ Հայրապետի Հարավային Ամերիկա այցելության առթիվ, 1960 թվականի սեպտեմբեր ամսին, ձեռագիրը նվեր է տրվել Արգենտինայի Կորդոբա քաղաքի բնակիչ ադանացի Երվանդ Քիրիշյանի կողմից։*

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

*Թ. 243բ— Ո՜վ եղբարք, այս ցանկն պակաս էր, նոր գրեցի։*

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թ. 1ա.— (Կա 14—15 բառ հայատառ տաճկերեն, որի մի մասը անընթեռնելի է)։*

*Թ. 150ա.— Սիթէմ ոնէյր խոմը։*

*Թ. 162ա.— Տ տարեթարձ կաղանդ։*

*(Ձեռագրի վերջին պահպանակին կպած է մի թուղթ, որի վրա գրված է հետևյալը)։*

*Սոյն նուիրատու Երուանդ Քիրիշեան ծնած է Ադանա 1901-ին, մօր կողմէ Տապանճեան, իսկ հօր կողմէ Քիրիշեան գերդաստանէն։*

*Երուանդ Քիրիշեան 1909-ին, Ադանայի ջարդին զոհ տալով իր ծնողքը և մեծ եղբայրը, որը կը մնայ մանուկ հասակին մէջ և կը յանձնուի իր քրոջ Տիկին Լուսածին Մահտեսեանի խնամքին։ Նա իր նախնական կրթութիւնը ստացած է Ադանայի Ֆրանսական դպրոցին մէջ։ Կիլիկիոյ պարպումին կ'երթայ Յունաստան և ուրկէ 1927-ին կուգայ վերջնականապէս հաստատուելու Հարաւային Ամերիկա—Արժանթին—Գորտոպա քաղաքը, ուր կ'ընտրէ իր կեանքի ընկերը՝ օրիորդ Ագաւնի Պոզաճեան հօր կողմէ, իսկ մօր կողմէ Գէօքէլեան, որը նոյնպէս Ադանացի և իր նախնական կրթութիւնը ստացած է տեղւոյն ազգային կեդրոնական վարժարանին մէջ։ Սոյն երջանիկ ամոլը կողք-կողքի տալով կը կերտեն իրենց փայլուն ապագան և այժմ կը սպասեն այն բախտաւոր օրուան երթալու Մայր Հայրենիք, հոն անցնելու համար իրենց կեանքի վերջին օրեր և երջանիկ օրերը։*

*4 սեպտեմբեր 1960—Արժանթին—Գորտոպա։*

*Երուանդ Քիրիշեան։*

*Հայրին անունը Սարգիս Քիրիշեան, մայրին անունը Օէքէա Տապանճեան—Քիրիշեան։*

*Ագաւնիին մայրին անունը Մայրամ Գէօքէլեան, հայրին անունը Սահակ Պոզաճեան։*

## № 209

### ԱՒԵՏԱՐԱՆ

**Թերթերը՝** *343 (341+թ. թ. 5ա և 305ա)։—* **Պրակները՝** *29, յուրաքանչյուրը 12-ական թերթից, ի բաց առյալ ԻԸ՝ 6 և ԺԴ՝ 13 թերթից են։—* **Մեծությունը՝** *18,1×13,6×6,3 սմ.։—* **Նյութը՝** *դեղնած հասարակ թուղթ։—* **Կազմը՝** *կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով զարդեր են նկարված։ Կազմի կաշվի մի մասը պատռված է, իսկ բռնիչներից մեկն ընկել է, մնում է միայն մեկ հատը։ Կազմի առաջին երեսին ամրացված են բազմաթիվ զամեր, մի խաչ և չորս ու թանկարժեք քարեր (15 սմ. երկայնքով)։—* **Պահպանակներ՝** *չունի։—* **Վիճակը՝** *բավարար, սակայն թղթերը տեղ-տեղ ցեցակեր են։—* **Գրությունը՝** *միասյունի։—* **Դատարկ թղթեր՝** *չկան։—* **Տողերը՝** *18—19։—* **Գծումները՝** *ճնշումով։—* **Գիրը՝** *բոլորգիր։—* **Զարդագրությունը՝** *ձեռագրում կան բավական գեղեցիկ համաբարբառներ, խորաններ, կիսախորաններ, լուսանցազարդեր, խաչեր, թռչուններ, կենդանիներ, ծառեր, ծաղիկներ, զարդագրեր և թռչնագրեր։ Կան մարդագլուխ թռչուններ (թ. թ 186բ և 244բ), ինչպես նաև չորս ավետարանիչների մեծադիր գեղեցիկ նկարները՝ թ. թ. 12բ, 103բ, 160բ և 263բ։—* **Գրիչը՝** *Դավիթ աբեղա։—* **Պատվիրատուն՝** *անհայտ։—* **Ծաղկողը՝** *Մանվել։—* **Ժամանակը՝** *1463 թ.։—* **Վայրը՝** *հավանաբար Հաղբատի վանք։—* **Ընծայությունը՝** *սույն ձեռագիրը, գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանի ձեռամբ, Բոմբեյի եկեղեցուց 1958 թվականին նվեր է բերված Մայր Աթոռի ձեռագրատան։*

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

*Թ. 10ա.— Զանպիտան ծառայս զուտանուն Դաւիթ աբեղայս յիշեցէք ի Քրիստոս։*

---

* *Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № Ը—Թ-ից։*

*Թ. 103բ.— Զմանուէլ նաղաշ յաղաւթս յիշայ աղաչեմ ով սուրբ ընթերծողք։*

*Թ. 159բ.— Զստացաւղ Սուրբ Աւետարանիս զԴաւիթ աբեղայս և զապաշխարող զմայրն իմ զՄուլքիչիհան և զբարեպաշտ ծնաւղսն իմ և զեղբարսն իմ և զայլ արեան մերձաւորք իմ յիշեցէք ի Տէր Յիսուս Քրիստոս մաքուր աղաւթիւք։ Ամէն։*

*Ընդ նմին և զիս զմեղաւոր գրիչս զսուտանուն զսեացեալ հոգով և տառապեալ մարմնով զԴաւիթ աբեղայս, ով որ յիշէքդ յիշեալ լիցիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս։ Ամէն։*

*Թ. 263բ.— Զաւետարանս յորժամ կարդայք զնաղաշ Մանուէլ մի՛ մոռանայք։*

*Թ. 264ա.— Ո՞վ սուրբ ընթերձողք, զծառայ ձեր նաղաշ Մանուէլ յաղօթս յիշեցէք, աղաչեմ։*

*Թ. 338բ.— Փա՜ռք և պատի՜ւ գոհացողական փառաւորութեամբ, փառաւորեցելոյն խոկութեամբ, անհաս վեհի, և անկարաւտ հզաւրի, Հաւր անսկզբնականի և Որդւոյ սկզբնակցի* (թ. 339ա) *և Սրբոյ Հոգոյն գոյակցի, յամենայն գոյացելոց և ի բնաւից արարածոց յերկնաւորաց և յերկրաւորաց, յիսկէից և յանիսկէից, այժմ և միշտ և յաւիտեանս զաւիտենից։ Ամէն։*

*Իսկ չորից աւետարանչացն խորհուրդ բազմաւրինակ տեսանի։ Զի ոմանք ասեն թէ չորից Աւետարանացն են, չորք անկիւնք արարածոց՝ արևելք, արևմուտք, հիւսիս, հարաւ, պարտ էր համասփիւռ քարոզել զԱւետարանն։*

*Իսկ ոմանց հաճոյ թուեցաւ ըստ չորից մշտահոս գետոցն՝ յադենական աղբերէն յառաջ խաղացեալ սո տիեզերաց առոգումն։ Եւ անուն միոյն Փիսոն, Բ՝ Գեհոն, Գ՝ Տիգրիս, Դ՝ Եփրատէս, և սոցա գոլով նմանապէս թուով ուռճացեալք ի* (թ. 339բ) *կենդանական աղբերէն, ոռոգանել զպասքեալ միտս մարդկային բնութեանս։*

*Նոյն օրինակ ըստ տեսութեանն Եզեկիէլի, քառակերպեան աթոռոյ՝ մարդ, առիւծ, եզն, արծիւ։ Զանմարմնոցն Տէր տեսանելով բազմեալ ի փառացն աթոռ իմանալի ցուցմամբ, զխնամս բոլոր բնութեանս զակնարկումն, որ աստուածապէս ի տիրաբար բերմամբ նշանակէ զլինելն առ ի հողածինս հոգեղինացն անմահից, զմահկանացուս առնել հաղորդս։ Եւս և ի զերակատար հանել ի փառս։ Վասնզի փառաց թագաւորին Քրիստոս փառակիցն Հաւր և Հոգւոյն զմերս առնելով բնութիւն. ինքեան միացոյց աստուածութենէ, ուսուցանելով, մի դաւանել Որոհ որ յԱստուծոյ Հաւրէ և որ ի Մարի*(թ. 340ա)*ամայ Սրբոյ Կուսէ անճառ միութեամբ զոր աւետարանականն ուսուցանեն բանք մինչ ի կատարած, անպակաս և անյաւելուած հաւանութեամբ հաւատահաստատ կարգաւք ի նոյն յարելով յառաջելաւանդն քարոզութիւնն, որ զաստուածախաւսն վարդապետութիւն ի դրոշմեալ զսակաւս ի բազմացն, առ ի հաւատալ թէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ, ըստ վեհին Յովհաննու հաւատալ և զկեանսն յաւիտենական ընդունել յանուն նորա։*

*Ուստի և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ ոմն Դաւիթ քահանայ, և էր ի յարքայանիստ Տուփխիստ, ընդ հովանեաւ և հրաշափառ կաթուղիկէ ծիրանէոր Սուրբ Աստուածածնիս և բազմահաւատ սրբոց։*

*Ի հայրապետու*(թ.340բ)*թեան Տեառն Զաքարիայ կաթողիկոսի, և յառաջնորդութեան Տեառն Ղուկաս Հաղբատայ արհեպիսկոպոսի։ Եւ ի թագաւորութեան վրաց Գիաւրգոս, և ի թվականին Հայոց ՋԺԲ (1463 թ.), և ի քրաւնիկոնն ԾԾ ապրիլի ԻԹ, Զատկի շաբթին, որ զսէ Զատիկ արարտք, հինգշաբաթ աւրն Ռ (1000) թուրք մարդ էր եկեալ ի լաւճին ի ջրի դարին յետե թարել Ի (20) ձիաւոր էր եկեալ խաբով դղլղան զհաւճայ այս տաւարն տարել և ձէն ընդաւ ի քաղաքս թէ քիչ հեծել է ի քաղաքէս, ԲՃ (200) լաւ տղամարդիկ ի դուրս ելան յետե է ինչ ուր ի լաւճին, ի ջրի էնդեհն գնացին, հետեակ դադրած, նետերն հատած, և անարաղ, և անսլեհ, անկասկածի, իմ մեղացն* (թ. 341ա) *և իմ չար գործոցն և մեծ հեծելն ի դուս էին եկեալ և երկու դիմաց բոլորեալ, և ի սուր քաշել, և զամենոց գլուխն տարել։ Վա՜յ ինձ զէն աւուր սուգն, զլացն, ո՞վ կարէ բերան պատմել, որ զէն տղայմարդիքն անգլուխ և մերկ բերէին դասու ի դաս հէնց որ ոչ ով զիւր մեռելն չկարէր ճանաչել. և զայն աւուր լացն զողբն ոչ ով չի կարել պատմել. վա՜յ ինձ Ռ բերան։ Քրիստոս Որդին Աստուծոյ Սուրբ Աւետարանիս բարեխաւսութեամբ զիւեանց հոգին էն սուրբ նահատակաց ու արեամբ ներկեալ մարտիրոսացն դասակից ու պսակակից արասցէ։ Ամէն, ամէն։*

*Եւ զսուտանուն Դաւիթ քահանայս որ զԱւետարան*(թ. 341բ)*ս գրեցի մի բերան Աստուած ողորմի հրամայեցէք և Աստուած թողու զմեղքն և զձեր յանցանքն։ Ամէն։ Զի խոշորութեան և սղալանաց գրոյս անմեղադիր լերուք, զի կայր մեր այս չափ, դառն և դժար մահտարաժամիս և կոտորումն Զատկի հինգշաբթիս, ախ վա՜յ, ախ վա՜յ։ ինչ անեմ գերիս։*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թ. 1ա.— Ես Ճահսվարս, որդի Մուրադին, գնեցի զՍուրբ Աւետարանս ի հալալ արդեանց իմոց յիշատակ ինձ և ծնողաց իմոց. հաւրն իմոյ Մուրադին, և*

մայրն իմոյ Աստուածատրին և եղբարսն իմոյ Ծաղամբարիշին և կենակցին իմոյ Սա... վհանին, և հարսն իմոյ ...նաթարյին, և որդոցն իմոց Վէլիջանին և ...ին, և դստերն Գաւհարշատին և Շահ...ին, և հարենղբարսն իմոյ Ծաղուրին, և ......, որդոցն Մէլիքզատին, Թաճիկին, ....... Մէլքսեթին, և ամենայն արեան մերձաւորաց իմոց, և ավի հարենղբարորդուն իմոյ ....... կաւ- դայ և ի ձեռն ...... տուէ ողորմիս վերագրեալ ննջեց ......և այլք որք հանդիպ... այսմ աստուածաշունչ... կարդալով կամ աւրինակելով յիշեսջիք ... այլ յաղաւթս ..... դատաւոր Սուրբ Աւետարանիս զՇահվարն և զիւր ննջեցեալսն և Աստուած զձեզ յիշէ ի միւս անգամ գալստեանն ..... և զայս Սուրբ Աւետարանս ավի յիշատակ Մելքիսէթ սարկաւագին. որ ոք որ յիմոց կամ յիմ ազգական ..... անէ կամ առնու չանայ նա մեր մեղացն Տէր լինի .... ակաւ Աստուծոյ, Աստուած ողորմի։

Բ. 1ա.— Փա՜ռք ամենասուրբ Երրորդութեան։

ՋԺԱ—1462 Բ.— Մ. էջս. 19—12—27, 18 Բոմբէյ։

Ես Ծակոր ժամարար ծառայ եմ Աստուծոյ Թուականին ....է Համիրայ ամսոյն ԻՋ-ումն ...գիրս։ Յիշատակ է Սուրբ Աւետարանըս ժահղասի Յէրապետի որդի Տէր Զաքարիային։ Աստուած չար նիաթէ և չար աչէէ անպատրաստ...... Ամէն։ Մեղա՜յ Աստուծոյ։

Բ. 2ա.— Ես Դաւիթ ս. գնեցի զՍուրբ Աւետարանս ի հալալ արդեանց իմոց յիշատակ ինձ և ծնողաց իմոց հայրն իմո Մէլիքօշին և մայրն իմոյ Արզուին, եղբաւրն իմոյ Մարգարին, Գալըստին և Մուրադշին և իմ քուերն Նաթարին և Թուրվանդին, և փեսին իմո Վարդանին և իւր որդոցն Միրիջանին, Բէգիջանին, Քաւթարին, Մէհրաբին, հարսին իմո Հասասփարիմին և խանդումին և իմ թոռներուն Արազրգին և Վարդագիզին։ Եւ այլ արեան մերձաւորաց իմոց մեծի և փոքու։ Եւ այլք ով ոք հանդիպիք յայսմ Աստուածաշունչ Սուրբ Աւետարանիս կարդալով կամ աւրինակելով։ Յիշեցէք ի մաքրու..... յաղաւթս ձեր զիս և զ...... յիշէ ի Տէր միւսանգամ գալստեան .... Հայր մեր երկինքս ....

Բ. 3ա.— (Կա Բոմբեյի Հայոց եկեղեցու կնոր կնիքը)։

St. Peter's Armenian Church.
Bombay. Erected 10 Oct. 1796.

(Նույն կնիքը կնքված է նաև հետևյալ էջերում.— 12ա, 13ա, 46ա, 71ա, 103ա, 129ա, 160ա, 204ա, 251ա, 263ա, 294ա, 332ա, 340ա և 341բ)։

Բ. 3բ.— Ես աւացի ի վերա....

Բ. 4ա.— Փա՜ռք ամենասուրբ Երրորդութեան Հաւր և Որդոյ։ Ես Դաւիթս գնեցի Սուրբ Աւետարանս ի հալալ արդեանց ինձ և ծնողաց իմոց, հայրն իմոյ Մէլիքշին և մայրն իմոյ Արզուին, եղբայրն իմոյ Մարգարին, Գալըստին և Մուրադշին, և իմ քուերն Նաւթարին և Թուրվանդին, և փեսին իմոյ Վարդանին, և իւր որդոցն Միրիջանին և Բէկիջանին, Քաւթարին, Մէհրաբին, և հարսին իմոյ Հասասփարիմին և խանդումին և իմ թոռներուն Արազնին և Վարդազգին, և այլ արեան մերձաւորաց, մեծի և փ... Ծաւիրանաւ։ Ամէն։ Հայր մեր որ յ... ի Հայրն իմ որ բնակ։

Բ. 5ա.— Գրեցաւ յիշատակարանըս ձեռամբ Ծակոբ ժամարարիս ի Թուականին ՌՃԼԱ (1682), փոքր Թուականն ԿԷ Համիրայ ամսոյն ԻՋ. որն պատկեր երկուշաբթի։

Ես ձեթ Տէր ըՄսեփաննոսի, թոռն Տէր Առաքելի որդի Տէր Ծակոբս եկի գնգա. Թվինն ՌՃԽԱ (1692), փոքր թիվն ԿԷ-ումն Նաղար ամսոյն ԻԵ, որն Սուրբ խաչ կիրակին էր որ գիրս գրեցի։ վերջ գրոյս։

Դարձեալ յիշեցէք զվերչին յիշատակ Սուրբ Աւետարանիս զԱստուածատուրն, և զկողակից Եխսանն, և որդի Ինչիլն, և դուստրն Մարամտաւրին, և եղբայրսն Սիմոնն և զԹուրոսն և կողակից Շուշանն, և դստերն Բէկզին և զՄարինոսն։ Գրեցաւ թիվս փոքր ՌՃԼԷ (1688) Համիրայ մասումն վերջ։

Բ. 5բ.— Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Յէրապետն և որդին Նորայ Տէր Զաքարին և զմայրն իմ Դաստագուլն, և իմ հարենղբայր Ամիրջանն, Ղազարն, Մարգարն և Սահակն, և Գասպարն, Ղարախանն, Մկրտիչն և Փանոսն, որ եա Զ լիտր ցորէն, Շաուռին որ ետ էլ Զ լիտր ցորէն, Կիրակոսն եա Զ լիտր ցորէն։ Այս ցորէնս տվին էս Աւետարանըս առին իւրեանց հոգոյն յիշատակ տվին ի դուռն ԺԲ Առաքելոցն ի ձեռն Յէրապետի որդի Տէր Զաքարիս որոյ..... օրհնութեամբ եղիցի։ Ամէն .... ՌՃԺԸ (1669) յունվարի մին։

Բ. 8բ.— Փա՜ռք ամենասուրբ Երրորդութեան և մի աստուածութեան, անուն և անզուգական անձառութիւն և մի անբաժանելի միասնական Սուրբ Երրորդութեան՝ Հաւր և Որդոյ և Սուրբ Հոգոյն յաւիտեան։ Ամէն։ Արդ. ըստացաւ ուղղափառ և. մարգարտալշար Սուրբ Աւետարանս հալալ վաստակոց իւրոց յիշատակ յիւր և իւր ծնողացն։ Ես Զաւրապը գնեց յիշատակ ինձ և իմ ծնողաց իմոց Ներսէսին, և մայրն իմոյ Թանդարին, և եղբարն իմոյ Շահզուլոսն, և Ոսբին վարժէլն և Մակիտին, և Բագիկին, և կողակցին իմոյ Անթառամին, և Միտինին, և Ոսքասարին, և յետի կին իմ Զարգարին, և որդուն իմոյ Յոսստէփանին, և դստեր իմոյ Թանտարին, Լամանտուխին, Արգմինտուխին, Նազլուին և Քիշմիշին, (բ. 9ա) և հարսին իմոյ Ոսկուն, և եղբոր որդուն իմոյ զԱրսէլին, և հարսն իմոյ Գուլլահանին, Թուրվանտին, և եղբաւր դստերն իմոյ Դոլյաբտուխին, Թամարին, Զամանին և տղին Սարգիսին, և Ամիրասրգիսին, և հարսին իմոյ Դովլաթին, և որդուն Նորայ Ղոյտուրալուն, Երալուն, Նուրալուն, և զիս անարժան, փծուն, եղկելի և մեղաւոր զԹարուրս ի քարեաց և փարթամս ի չարեաց, գէտինս և զոչինչս սարգաւագաց որ չեմ նման սարգաւագաց, զիշերն բնով եմ յղբացած, զուրկ և թարուր ի սաղմոսաց, և առն անկեալ աղաչեմ զձեզ, ո՜վ սուրբ դահանայք, ով որ հանտիպիք, կամ կարդալով, կամ յաւրինակելով յիշեցէք ի սուրբ և մաքրափայլ աղաւթս ձեր և Քրիստոս զձեզ յիշէ իւր սոսկալի դատաստանին, որ աւէ եկայք աւրհնեալ էք հաւր իմոյ ժառանգեցէք զկեանս յաւիտենից։ Արդ, գրեցաւ յիշատակարանս ի թվին Ռ...Ն և Քրիստոս Աստուած ողորմ գնողին և ըստացողին։ Ամէն։ Հաւր մեր որ....

Բ. 10բ.— Զատացս Սուրբ Աւետարանս հալալ արդեանցս յինձ խանբէկի, Սուլթան Զուզարն, խանսուլթան Գուհարին, Թէթրոյին, Նէրսէսին, Զուհարին, Հայոց

թվ. ՌԴ-ին (1555)։ Ա բերան Հայր մեր երկնից հրամէցեն։

Ֆ. 11ա.— Զստացող Սուրբ Աւետարանիս որ հալալ արդեանց իւրոց. գնեցի զՍուրբ Աւետարանս յիշատակ ինձ Վարդան քահանայիս և ծնողացն մեր, զհայրն մեր Յովաննէս, և մայրս մեր Հաւասխաթուն, և զեղբարկիցն իմ զՄարթայխաթուն, և զաւակն իմ զԳերասմ, և զԱյլքսանոս, և զԹըստակէս, և զեղբայրքն իմ զՄարգըշէն և զՄկրտիչ, և զննջեցեալսն մեր Զաղուտ, Մրվան. Բախշին. Ստեփանոս։ Եւ զփոխեցեալն ի Քրիստոս զՄկրտիչ արեղայն, որ Աւետարանիս համար կոզնեցաւ Ծ թանկով, և Աստուած զիրեանց հոգին ըն արեամբ ներկեալ մարտիրոսացն և սուրբ եղիսոպաց. և սուրբ կուսանաց և սուրբ քահանայապետացն դասակից ու պսակակից արասցէ։ Ամէն։

Ֆ. 11բ.— Եւ որպէս կոչ հրամայէ թէ Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն և ընդանի Երուսաղէմ։ Եւ որպէս կոչ հրամայէ Քրիստոսի բերանն Աւետարան թէ Գանձեցէք ձեզ գանձ յաղում յերկինս, ուր ոչ գէշ մերձենայ և ոչ ցեց և ուտիճ ապականէ։ Զի ուր գանձք ձեր են, անդ և սիրտք ձեր եղիցին։ Արդ զմեզ յիշէ առաջի ահեղ ատենին Քրիստոսի, և մեզ բերան Աստուած ողորմի ասէ. Քրիստոս Աստուած ամենեցուն ստեղծաւղն զիւր մեղքն ջնջէ աստ և ի հանդերձեալսն։ Ամէն։ Ընդ նմին և զիս անարժան գիցուն գրիչս, զառատանուն Դաւիթ աբեղայս Փոյատահարան Տուփխիսո, յիշեցէք ի Քրիստոս և Աստուած զձեզ յիշէ։ Ամէն։

Ֆ. 12ա.— Հաւատարակից [illegible] յորամ թարգմանութեանն զանուց ի Տեառնէ հատուսցէ փառաւորութիւն։

Եւ որպէս կոչ հրամայէ թէ Որ ունիցի զաւակ ի Սիոն և ընդանի Երուսաղէմ, և որպէս կոչ հրամայէ Քրիստոսի բերանն Աւետարան թէ Գանձեցէք ձեզ գանձ յաղում յերկինս, որ ոչ գող մերձենայ և ոչ ցեց և ուտիճ ապականեն ենէ։ Զի ուր գանձք ձեր են անդ և սիրտք ձեր եղիցին։ Որ որ զմեզ յիշէ առաջի ահեղ ատենին Քրիստոսի և մեզ բերան Աստուած ողորմի ասէ. Քրիստոս Աստուած ամենեցուն ստեղծաւղն զիւր մեղքն ջնջէ աստ և ի հանդերձեալսն։ Ամէն։

Գրեց զայս բոլոր գիրս Ցակոբջան, յիշեցէք ի Քրիստոս։ Ամէն։

Ֆ. 83ա.— Խռաճի։

Ֆ. 103ա.— Ընդ նմին և զիս զՎարդան քահանայս և զեղբարկիցն իմ զՄարթախաթուն և զաւակն իմ Գերասմ, և զԱլեքսանոս, և զԹըստակէս, և զեղբայրքն մեր Մարգըշէն, և զՄկրտիչ, և զննջեցեալս մեր Աղուտ, Մրվան, Բախշին, Ստեփանոս, և զհայրս մեր Յովանէս, և զմայրս մեր Հաւասխաթուն, յիշեալ լինիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։

Ֆ. 160ա.— 1928 յուլիսի 15-ին ընդօրինակեցաւ բոլոր ծանօթութիւններն և յիշատակարանները, ինչպէս և նշանակեցի էջեր, կնքելով և Ս. Եկեղեցւոյ կնիքով։ Վիճակաւոր Ս. Պետրոս եկեղեցւոյ, 1921—1927, Յովհաննէս քահանայ։

Ֆ. 263ա.— Տէր Մխիթար։

Ֆ. 341բ.— Տէր սերս է ի որդի։

Մատայեցէք.... խոնարհեցո Տէր զունկն քո և լուր ինձ զի աղքատ և տնանկ եմ ես։

Պահեա զանձն իմ սուրբ Տէր և փրկեա զծառայս քո Աստուծոյ որ ի քեզ յուսացայ։ Ողորմեա ինձ Տէր զի առ քեզ աղաղակեցի զաւր հանապազ ուրախ արայ զանձն ծառայիս քո, զի առ քեզ Տէր համ .... փառ։

## № 210

## ԼԱՄԲՐՈՆԱՑՈՒ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆԸ

Թերթեր՝ 128։— Պրակներ՝ 11, յուրաքանչյուրը 12 թերթից, բաց առյալ հետևյալ պրակները՝ Ե՝ 8, Ժ՝ 10 և ԺԱ՝ 14 թերթից։— Մեծությունը՝ 22,2×16,4×3 սմ։— Նյութը՝ մաքուր սպիտակ ողորկ թուղթ։— Կազմը՝ կաշեպատ ստվարաթուղթ։— Պահպանակները՝ սկզբում և վերջում մեկական դեղնավուն գծավոր հասարակ թուղթ։— Վիճակը՝ լավ։— Գրությունը՝ միասյուն։— Դատարկ թերթեր՝ 126, 127 և 128։— Տողեր՝ 27։— Գծումները՝ ճնշումով։— Գիրը՝ նոտրգիր։— Զարդագրությունը՝ ձեռագիրն ունի Ս. Ներսես Լամբրոնացու մեծադիր գեղեցիկ գունավոր նկարը (թ. 3բ), մեկական գեղեցիկ գունավոր խորանազարդ և գլխազարդ (թ. 4ա), մի հատ խոշոր ձեռնագիր-մարդագիր (թ. 4ա) և բազմաթիվ ծաղկագրեր, միայն կարմիր թանաքով գծված։— Գրիչը՝ անհայտ։— Պատվիրատուն՝ անհայտ։— Ստացողը՝ անհայտ։— Ժամանակը՝ ԺԷ—ԺԸ դարեր։— Վայրը՝ անհայտ։— Նախորդությունը՝ այս ձեռագիրը նվեր է ստացվել Կահիրեից 1961 թվականին, պր. Հրանտ Նասիբյանի կողմից։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ֆ. 1ա.— Գիրք որ կոչի խորհրդածութիւն վասն ուղղափառ հաւատոյ։

Շարադրեալ ի Տեառն Ներսիսէ Լամբրոնացւոյ յԱրքեպիսկոպոսէ Տարսոնի Կիլիկիոյ։

Ի Հայրապետութեան Տեառն Գրիգորի ամենիմաստի ամենից հայոց կաթողիկոսի մականուամբ Տղայ կոչեցելոյ։

Ի ժամանակին քրիստոսապսակ արքային հայոց Լեւոնի։

Ի շրջանի ընթացից ամանակի ՈԻԶ (1178) թուոց Հայոց, ի մէջ լերանցն Տարսոսի։

Ֆ. 2ա.— Յառաջաբանութիւն հեղինակի սորոյ մատենիս։

Ֆ. թ. 4ա—123բ.— (գրքի տեքստը)։

Ֆ. 124ա.— Ցանկ գլխոց բանից պարունակելոց ի մատենիս։

## № 211

## ՊԱՐԶԱՐԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Թերթեր՝ 54։— Պրակներ՝ 6, անհամաչափ։ Ա պրակը՝ 6, Բ, Գ և Զ՝ 8, Դ և Ե՝ 12 թերթ։— Մեծությունը՝ 19×13,8×1,1 սմ։— Նյութը՝ ողորկ մաքուր թուղթ։— Կազմը՝ ստվարաթուղթ, որի կռնակի վրա սո-

*կեզույն տառերով գրված է «Մեկնութիւն».— Գանյատակները՝ սկզբից և վերջից մեկական գունավոր հաստաթուղթ.— Վիճակը՝ լավ.— Գրությունը՝ միասյուն.— Դատարկ թղթերը՝ չկան.— Տողերը՝ 28—29.— Գծումները՝ առանց ճնշման.— Գիրը՝ նոտրգիր.— Զարդագրություն՝ չկա.— Գրիչը՝ անհայտ.— Ստացողը՝ անհայտ.— Ժամանակը՝ ԺԸ—ԺԹ դարեր.— Վայրը՝ անհայտ.— Նվերի մասին՝ սույն ձեռագիրը նվեր է ստացված Նիկոզիայից (Կիպրոս) 1961 թվականի նոյեմբերին, Կարապետ Թաշճյանի կողմից։*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Թ. 1ա.—Պարզաբան ստուգաբանութիւն և բարէբանութիւն աստուածային Բանի մարմնացելոյ ըստ սկզբանց աստուածաբանութեան սուրբ վարդապետաց եկեղեցւոյ սպասաւորաց Նմին բանի և մեկնութիւն յառաջին գլխոյն Աւետարանի Յոհաննու գլխաւորին աստուածաբանիցն։*

*Շարադրէր զսա Պատրէ Հայրիպ վարդապետ Ֆրանսացի ի կարգէ Յիսուսեանց յարքայանիստ քաղաքն Ըսփահանի յամն ՌՃԿԲ (1663) թվականի Ֆրանկաց։*

*Վասն փառաց Նմին բանի Աստուծոյ և պատուոյ Սրբուհւոյ Աստուածածնին։*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*(Սկզբի պահպանակի կռնակում).*

*Սոյն ձեռագիր «Պարզաբան ստուգաբանութիւն» մատեանը կը նուիրեմ Ս. Էջմիածնայ մատենադարանին, առ ի մատակարարութիւն հոգևոր կրթութեան։*

*Աստուծոյ համեստ ծառայ մը՝ Կարապետ Թաշճեան։*

*Նիկոսիա (Կիպրոս) 5.11.61*

*Թ. 1ա.—* Icpaham for sets.

## № 212

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

## (Հունարեն)

*Թերթերը՝ 165.— Պրակները՝ 21, յուրաքանչյուրը 8 թերթից, ի բաց առյալ ԺԵ՝ 6, ԻԱ՝ 7 և Ա՝ 9 թերթից.— Մեծությունը՝ 17,7×12×2 սմ.— Նյութը՝ դեղնած ողորկ դիմացկուն թուղթ.— Կազմը՝ կաշեպատ ստվարաթուղթ, որի վրա երկու երեսներին ճնշումով զարդեր են նկարված.— Գանյատակները՝ սկզբից և վերջից մեկական թերթ հաստաթուղթ.— Վիճակը՝ լավ.— Գրությունը՝ միասյուն.— Դատարկ թղթերը՝ 1 և 165.— Տողերը՝ 20.— Գծումները՝ ճնշումով.— Գիրը՝ հունարեն (անխնամ գրված).— Զարդագրություն՝ ձեռագիրն ունի կարմիր թանաքով նկարված շատ նուրբ և սիրուն երեքական գլխազարդեր և զարդագրեր (թ. թ. 2ա, 82ա և 157ա), ինչպես նաև բազմաթիվ հաստարակ զարդագրեր։ Էջ 48բ-ում կա մի գեղեցիկ ծաղկեփունջ, կարմիր-սևեգույն, շրջանակի մեջ առնըված։ Շրջանակն ինքնին ներկայացնում է հունական խազերով և տառերով գրված երկու տողերի մի ամբողջություն.— Գրիչը՝ Ապոստոլոս Կոնստանս.— Ստացողը՝ անհայտ.— Տաղկողը՝ շատ հավանաբար նույնինքն ձեռագրի գրիչն է.— Ժամանակը՝ 1725 թ.— Վայրը՝ Սակըզ ադա (Քիոս կղզի).— Նվերի մասին՝ սույն արժեքավոր ձեռագիրը արտասահմանից նվեր է ստացված Վեհափառ Հայրապետի միջոցով։*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Ձեռագրի առաջին մասը (թ. թ. 2ա—81ա) ներկայացնում է Հունական Ուղղափառ Եկեղեցու խազային երաժշտական գիտելիքների մի հավաքածու։ Տրված են այդ խազերի բացատրությունը և իմաստը, զանազան տախտակներով և նկարներով, շատ պատկերավոր կերպով։*

*Կան հունական տաղաչափության հիմունքները ամանակի, խազերի և երաժշտության մասին, զանազան սխեմաներով (թ. թ. 12ա—13բ, 50ա—51բ, 69բ, 76բ, 79բ—80ա)։ Կա ձայնային ելևէջների մասին մի գեղեցիկ պատկերավոր նկարագրական մարդկային գլխի նկարազարդումով (թ. 31բ)։ Հիշատակված են նաև հունական առոգանության նշանները (թ. 43ա)։*

*Ձեռագրի երկրորդ մասը (թ. թ. 82ա—164բ) ներկայացնում է Հունական Եկեղեցու երաժշտական կտորների և հոգևոր տաղերի մի հավաքածու, որտեղ օգտագործված է հունական խազագրությունը։*

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

*Թ. 2ա.— Ձեռագրի հիշատակարանը գտնվում է սկզբում, որտեղ կարմիր թանաքով ուղիղ տողում տրված է գրչի հիշատակարանը։*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թ. 1բ.—* Apostolos Konslans, 1725, Saklz adada (Chios):

*(Հետագայում կցված մի թղթի վրա գրված է).*

*Թուական=1725*

*Գրիչ=* Apostolos Kontans

*Տեղի=Սաքըզ ատա* (Chios)

*Երաժշտական գիտելիքներ և եկեղեցական երաժշտութենէն կտորներ, որոնք մինչև այսօր կ'երգուին Օրթոտոքս եկեղեցիին մէջ։*

*25—8—1946։*

## № 213

## ԱՒԵՏԱՐԱՆ

*Թերթերը՝ 290.— Պրակները՝ 25, յուրաքանչյուրը 12 թերթից, բացի Ա1՝ 8, Ա3, Թ և ԺԵ՝ 10, Ա2, Ը և ԺԴ՝ 14 թերթից են.— Մեծությունը՝ 14×9,5×5,5 սմ.— Նյութը՝ սպիտակ մաքուր նուրբ մագաղաթ.— Կազմը՝ կաշեպատ ստվարաթուղթ, որի առաջին երեսին*

ճնշումով տպված է մի ոսկեգույն խաչ։— Պահպանակները՝ սկզբից 3 թերթ և վերջից մեկ թերթ մագաղաթ։— Վիճակը՝ լավ։— Գրությունը՝ երկսյուն։— Դատարկ էջերը՝ 1, 2, 3 և 290։— Տողերը՝ 24։— Գծումները՝ ճնշումով։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրությունը՝ սույն արժեքավոր ձեռագրի թ. թ. 4բ—17ա-ում կան 14 հատ շատ սիրուն նկարներ Հիսուսի կյանքից, ամբողջ էջի ծավալով։ Թ. թ. 18բ—27ա-ում կան գեղեցիկ համաբարբառներ, իսկ թ. թ. 30բ, 102բ, 151բ և 231բ-ում կան չորս ավետարանիչների գեղեցիկ մեծադիր նկարները։ Դրանցից բացի ձեռագրում կան գեղեցիկ խորաններ և լուսանցազարդեր, ծառեր և ծաղիկներ, թռչուններ և գազաններ, գլխազարդեր և գմբեթներ, տերունական նկարներ, սրբեր և հրեշտակներ։ Կան նաև շատ սիրուն թռչնագրեր, ծաղկագրեր, ձկնագրեր, երկու հատ գազանագրեր (թ. թ. 103ա և 152ա) և մի հատ հրեշտակագիր (թ. 31ա)։ Ձեռագրի բոլոր մեծատառերը գրված են ոսկեգույն, երբեմն էլ գունավոր ծաղկագրերով և թռչնագրերով։ Օգտագործված են բազմաթիվ վառ գույներ և ոսկեգույնը։ Ձեռագիրը հանդիսանում է միջնադարյան հայ գեղանկարչության մի հիանալի նմուշ։ Դժբախտաբար ոչ ծաղկողը և ոչ էլ գրիչը ձեռագրում ոչ մի տեղ չեն թողել իրենց անունները։— Գրիչը՝ անհայտ։— Պատվիրատուն՝ անհայտ։— Ծաղկողը՝ անհայտ։— Ժամանակը՝ ԺԵ—ԺԶ դարեր։— Վայրը՝ անհայտ։— Ծանոթությունը՝ սույն արժեքավոր ձեռագիրը արտասահմանից նվեր է ստացված Վեհափառ Հայրապետի միջոցով։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

*Թ. 230ա.— Աւրհնութիւն որ կարդայ, գովութիւն որ լսէ, փա՜ռք տուողին և յիշատակ գրչիս Ամէն։*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թ. 18ա.— Աւետարանս ..... ցիպար ..... ։*

*Թ. 280ա.— Աւետարանս այս կազմեց և ինձ ......եան ..... Գրիգոր ..... Նուաստիս։*

## № 214

## ՇԱՐԱԿՆՈՑ

Թերթերը՝ 56։— Պրակները՝ 11, անկանոն ծավալով։ Բ, Դ, Թ, Ժ և ԺԱ պրակները 4, Ա և Գ՝ 5, Զ, Է և Ը՝ 6, Ե՝ 8 թերթից են։— Մեծությունը՝ 24,7×18,5×0,9 սմ.։— Նյութը՝ դեղնած և կեղտոտված հաստ թուղթ։— Կազմը՝ լաթակազմ ստվարաթուղթ։— Պահպանակները՝ սկզբից և վերջից մեկական հաստ կապտավուն թուղթ։— Վիճակը՝ բավարար։— Գրությունը՝ միասյուն։— Դատարկ էջեր՝ չկան։— Տողերը՝ 12—13։— Գծումները՝ առանց ճնշման։— Գիրը՝ նոտրգիր և հայկական նոր խազեր։— Զարդագրությունը՝ չկա։— Գրիչները՝ մի քանի հոգի են գրել սույն շարակնոցը, որոնք շատ հավանաբար Արմաշի վանքի աշակերտներից հետևյալներն են՝ Գրիգոր Ս. Շահինյան, Սարգիս Գրալյան, Սահակ Մինասյան, Գ. Գանճյան, Ստեփան Հ. Թեքեյան, Գառնիկ Տերտերյան, Պետիկ, Կարապետ Ա. Մատթեոսյան, Ն. Գ. Բ., Համբարձում Ջերչյան։— Պատվիրատուն՝ շատ հավանաբար Արմաշի վանքի 1894 թվականի երաժշտության ուսուցիչը։— Ժամանակը՝ ապրիլ, 1895 թ.։—Վայրը՝ Արմաշի վանք (Թուրքիա)։— Ծանոթությունը՝ սույն շարակնոցը Վեհափառ Հայրապետի միջոցով նվեր է ստացված Ռումինիայից։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

*Թ. 8բ.— Գրիգոր Ս. Շահինեան։*

*Թ. 17ա.— Սարգիս Գրալեան։*

*Թ. 18բ.— Սահակ Մինասեան։*

*Թ. 26բ.— Ընդօրինակեաց Գ. Գանճեան։*

*Թ. 32բ.— Ստեփան Ց. Թէքէեան։*

*Թ. 38բ.— Ընդօրինակեաց Գառնիկ Տէրտէրեան (եւդոկեացի) 94, ապրիլ 14, յԱրմաշ։*

*Թ. 44բ.— Ընդօրինակեաց Պետիկ։*

*Թ. 46բ.— Ընդօրինակեաց Կարապետ Ա. Մատթէոսեան։*

*Թ. 52բ.— Ն. Գ. Բ.։*

*Թ. 56բ.— 1894 ապրիլ 12, Համբարձում Ջերչեան։*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*(Առջևի պահպանակի վրա).*

*Ի յիշատակ ողբացեալ՝ մեր պատուական ամուսնոյն և հօր Համբարձում Գրիգորեանի, նուէր մեր սիրելի և յարգելի բարեկամ Պր. Զարեհ Գլպուլի։*

*Պուքրէշ, 10 յունուար 1945։*

*Ընտանիք Համբարձում Գրիգորեան, Վահէ Հ. Գրիգորեան։ IV։*

## № 215

## ՏԱՂԱՐԱՆ

Թերթերը՝ 383։— Պրակները՝ չեն երևում, որովհետև իրար հետ շատ սեղմ կազմված են։— Մեծությունը՝ 15×10,5×3,2 սմ.։— Նյութը՝ մաքուր բարակ հասարակ թուղթ։— Կազմը՝ լաթակազմ ստվարաթուղթ, որի երկու երեսին ճնշումով զարդեր են նկարված, իսկ կռնակին էլ ոսկեգույն զարդեր կան։ Պահպանակները՝ սկզբից և վերջից մեկական թերթ կանաչավուն հաստ թուղթ։— Վիճակը՝ լավ։— Գրությունը՝ միասյուն։— Դատարկ էջերը՝ 6, 8, 351, 355, 356 և 383։— Տողերը՝ առհասարակ 5, սակայն տեղ-տեղ տարբերվում է։— Գծումները՝ առանց ճնշման։— Գիրը՝ նոտրգիր և հայկական նոր խազեր։— Զարդագրությունը՝ ձեռագիրն ունի մի փոքրիկ նկար թ. 5ա-ում, իսկ ձեռագրի սկզբում գտնվող երկու հիշատակարանները (թ. թ. 5ա և 7ա) գրված են զարդագրերով։ Օգտագործված են սև և կարմիր թանաքները։— Գրիչը՝ Խաչատուր Հ. Քուչահանյանց։— Պատվիրատուն՝ անհայտ։— Ծաղկողը՝ շատ հավանաբար նույն ինքը գրիչն է։— Ժամանակը՝ 4 մարտի 1881 թ.։— Վայրը՝ Երուսաղեմ։— Ծանոթությունը՝ սույն ձեռագիրը Բելմոնտից (ԱՄՆ) Բարգեն Կյուլեսերյանը 1960 թ. հուլիս ամսին նվիրել է Մայր Աթոռին՝ Վեհափառ Հայրապետի Ամերիկա կատարած այցելության առթիվ։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Թ. Բ. 1ա—4ա.— Ցանկ նյութոց (հետագայում գրված)։*

*Թ. Բ. 9ա—349բ.— Շարականներ և տաղեր։*

*Թ. Բ. 352ա—354բ.— Ցանկ։*

*Թ. Բ. 357ա—382բ.— Կան մի քանի տաղեր և երգեր, հայերեն և թաճկերեն։ Հայերենները հետևյալներն են. «Տաղ Ցարութեանն», «Ի փառս էինն», «Միփանայ սարըն», «Օր պիտի գայ», «Հայկազանց ուխտանըւէրն», «Տալուրիկցի կտրիճ եմն», «Սոխակ ինչո՞ւ գագրեցար», «Որք ընդ հողովն», «Դու փափկաթեն», «Հայր մերն»։*

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

*Թ. 5ա.— Տաղարան ընդօրինակեաց խաչատուր Յ. Քուլահճեանցի, 1891 մարտ 4։*

*Թ. 7ա.— Ձայնագրեալ երգեցողութիմք Ս. Պատարագի, յԵրուսաղէմ։*

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*(Առջևի պահպանակի վրա).*

*Նուէր, ի նշան հաւատարմութեան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնայ, Բարգէն Կիւլէսէրեան, Belmont, Mess., U. S. A., 1960 յունիս 8։ Վեհափառ Վազգէն Ա Կաթողիկոսի Ամերիկա այցելության առթիւ*

*Թ. 7ա.— Ի գրոց ....*

*Թ. 350ա.— Ամէն, Հայր Սուրբ, Որդիդ Սուրբ, եւն., Արսլանեան Գէորգ վարդապետէն։ Ամէն, Հայր եւն.։ Օրհնութիւն։*

## № 216

### ՇԱՐԱԿՆՈՑ

Թերթեր՝ 115։— Պրակներ՝ 8, յուրաքանչյուրը 20-ական թերթից, ի բաց առյալ Ջ՝ 15, Ա՝ 18 և Թ՝ 22 թերթից։— Մեծությունը՝ 24,5×18,5×1, 5 սմ.։— Նյութը՝ հաստատ դեղնած գծավոր թուղթ։— Կազմը՝ ստվարաթուղթ, որի առաջին երեսին գրված է. «Տետր 21, V»։— Պահպանակները՝ սկզբից և վերջից մեկական բարակ, հաստատ կանաչավուն թուղթ։— Վիճակը՝ բավարար։— Գույնը՝ միասյուն։— Դատարկ թղթերը՝ 111, 112 և 115։— Տողեր՝ 11։— Գծումներ՝ առանց թուղթը գծավոր է եղել։— Գիրը՝ շեղագիր և հայկական Նոր խազեր։— Զարդագրությունը՝ ձեռագրում կան 24 փոքր, հաստատ և պրիմիտիվ զարդեր (թռչներ, գլուխներ, աչքեր և այլն), նկարված սև թանաքով, գրչի կողմից, շարականների վերնագրությանը։— Գրիչը՝ անհայտ։— Ստացողը՝ անհայտ։— Ստացողը՝ նույնինքն գրիչն է։— Ժամանակը՝ ԺԹ դար։— Վայրը՝ Թուրքիա։— Սեփականությունը՝ սույն շարակնոցը նվեր է ստացված Ռումինիայից, Վեհափառ Հայրապետի միջոցով։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Թ. Բ. 1ա—110բ.— Շարականներ գրված հայկական Նոր խազերով և շեղագիր տառերով։*

*Թ. Բ. 113ա—114ա.— Ցանկ շարականաց։*

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*(Առջևի պահպանակի վրա).*

*Ի յիշատակ մեր ողբացեալ պատուական ամուսնոյն և հօր Համբարձում Գրիգորեանի, նուէր մեր սիրելի և յարգելի բարեկամ պրն. Զարեհ Գլպուկի։ Պուքրէշ, 10 յունուար 1945։ Ընտանիք Համբարձում Գրիգորեան, Վահէ Հ. Գրիգորեան։*

## № 217

### ՇԱՐԱԿՆՈՑ

Թերթեր՝ 182։— Պրակներ՝ 13, յուրաքանչյուրը 10-ական թերթից, ի բաց առյալ Ա՝ 4, Բ և ԺԱ՝ 18, Ը՝ 14 թերթից են։— Մեծությունը՝ 19,7×13,2×1,8 սմ.։— Նյութը՝ դեղնած և կեղտոտած բարակ գծավոր թուղթ։— Կազմը՝ կաշեպատ ստվարաթուղթ, որի կռնակին ոսկեգույն տառերով գրված է. «Ձայնագրեալ շարական»։— Պահպանակները՝ սկզբից և վերջից մեկական թերթ հաստատ կապտավուն թուղթ։— Վիճակը՝ լավ։— Գույնը՝ միասյուն։— Դատարկ թղթերը՝ չկան։— Տողեր՝ 8։— Գծումները՝ առանց թուղթը գծավոր է եղել։— Գիրը՝ շեղագիր և հայկական Նոր խազեր։— Զարդագրությունը՝ չկա։— Գրիչը՝ Կարապետ Գէրգուտյան։— Ստացողը՝ անհայտ։— Ժամանակը՝ Ի դարի սկզբին։— Վայրը՝ Թուրքիա։— Սեփականությունը՝ սույն ձեռագիրը նվեր է ստացված Բեյրութից (Լիբանան)։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Թ. Բ. 2ա—130ա.— Շարականները՝ նոտագրված հայկական Նոր խազերով։*

*Թ. Բ. 130բ—132ա.— Ցանկ շարականների։*

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Թ. 1ա.— Կը պատկանի Կարապետ Գէրգուտեանին. իր ձեռագիրը և սիրելի իրեն համար. պահեցէք յիշատակը, որ վախճանեցաւ 1949 հոկտեմբեր 2-ին, Պէյրութ, 80 տարեկան։*

## № 218

### ՇԱՐԱԿՆՈՑ

Թերթեր՝ 190։— Պրակներ՝ 13, յուրաքանչյուրը 16-ական թերթից, ի բաց առյալ Ա՝ 6 և Ջ՝ 8 թերթից։— Մեծությունը՝ 16,6×10,7×3,3 սմ.։— Նյութը՝ դեղնած և կեղտոտած գծավոր բարակ թուղթ։— Կազմը՝ կարմիր թղթով ծածկված ստվարաթուղթ։— Պահպանակները՝ սկզբից և վերջից մեկական հաստատ թուղթ։— Վիճակը՝ լավ։— Գույնը՝ միասյուն։— Դատարկ թղթերը՝ 1 և 190։— Տողեր՝ 7—8։— Գծամ-

ները՝ թուղթը առաջուց գծավոր է եղել։— Գիրը՝ շեղագիր և հայկական նոր խազեր։— Զարդագրությունը՝ չկա։— Գրիչը՝ Կարապետ Գերդաստյան։— Պատվիրատուն՝ անհայտ։— Ժամանակը՝ Ի դարի սկզբին։ Վայրը՝ Թուրքիա։— Ծանոթություն՝ սույն ձեռագիրը նվեր է ստացված Բեյրութից (Լիբանան)։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Ա. թ. 2ա.— Շարականները՝ նոտագրված հայկական նոր խազերով։*
*Ա. թ. 186բ—189բ.— Ցանկ շարականների։*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*(Կազմի առաջին երեսի կռնակում).*

*Այս ձեռագիր շարականը կը պատկանի Գ. Կարապետ Գերդաստեանին, ինչ գրած է ամէն որ կը գործածէր։ Թող պահուի իր անմոռանալի յիշատակին համար, որ վախճանեցաւ 1949 Հոկտեմբեր 2-ի կիրակի, 80 տարեկան, Պէյրութ։*

## № 219

## ՍԻՄԷՈՆ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 107։— Պրակները՝ 9, յուրաքանչյուրը 12 թերթից, ի բաց առյալ Բ՝ 8, Թ՝ 9, Ա՝ 14 և Զ՝ 16 թերթից։— Մեծությունը՝ 13,5×10×3,8 սմ. (սույն և հաջորդ ձեռագիրը՝ երկուսը միասին են կազմված)։— Նյութը՝ դեղնած և կեղտոտված բարակ թուղթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ, պարունակում է №№ 219 և 220 ձեռագրերը։— Պահպանակները՝ վերջից մի հատ հաստարակ թուղթ։— Վիճակը՝ լավ։— Գրությունը՝ միասյուն։— Դատարկ թղթերը՝ չկան։— Տողերը՝ 16—19։— Գծումները՝ ճնշումով։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրությունը՝ ձեռագիրն ունի մի հատ գլխազարդ (թ. 1ա), երկու հատ խառը թռչնագիր և ձկնագիր (թ. թ. 49ա և 57բ), վեց հատ բավական սիրուն թռչնագրեր և ինը հատ էլ լուսանցազարդեր։— Գրիչը՝ Միքայել աբեղա։— Պատվիրատուն՝ անհայտ։— Ծաղկողը՝ անհայտ։— Ժամանակը՝ ԺԶ—ԺԷ դարեր։— Վայրը՝ անհայտ։— Ծանոթություն՝ սույն ձեռագիրը բերված է Երնջակի Ս. Կարապետ վանքից մի թուրքի միջոցով։ Մայր Աթոռի ձեռագրատունը նվեր է ստացել 1963 թվականի մայիս ամսին, Տ. Վահան վարդապետ Տերյանից։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Թ. 1ա.— Սիմէոնի վարդապետի Ջուղայեցւոյ արարեալ քերականութիւն ըստ լեզուի մերում Հայկազանց։*

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

*Թ. 60բ.— Զսակաւ աշխատողս ի սմս զտառապեալ Միքայէլ աբեղայս աղաչեմ յիշել ի Տէր։*
*Թ. 106բ.— Եւ Քրիստոսի յուսոյն մերոյ և շնորհօղին ամենայն կարողութեանց փառք յաւիտեանս. Ամէն։ Զանպիտան և զթերավարժ Միքայէլ ծրողս աղաչեմ յիշել ի Տէր։*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Թ. 106բ.— Յիշատակ է այս քերականս Հաղարցեցւոյ Տէր Աղէքսանդրի որդի Տէր Ստեփանոսին և իւր որդի Աստուածատուրին և Մարտիրոսին և Գրիգորին և կողակիցն Վարվառին։ Յիշեցէք և զոյք յիշեալ լինիք ի Տեառնէ որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից։ Թվին ՌՄԼԷ (1788) մարտի տասնեւթն վերջ։*

## № 220

## ՊՈՐՓԻՒՐԻ ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 116։— Պրակները՝ 10, յուրաքանչյուրը 12 թերթից, իսկ Ժ՝ 9 և Ա՝ 11 թերթից են։— Մեծությունը՝ 13,5×10×3,8 սմ. (սույն և նախորդ ձեռագրերը երկուսը միասին են կազմված)։— Նյութը՝ դեղնած և կեղտոտած բարակ թուղթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ, պարունակում է №№ 219 և 220 ձեռագրերը։— Պահպանակները՝ վերջից մի հատ հաստարակ թուղթ։— Վիճակը՝ լավ, միայն ձեռագրի վերջում 7 թերթ (թ. թ. 109—115) իրար են կպած։— Գրությունը՝ միասյուն։— Դատարկ թղթեր՝ չկան։— Տողերը՝ 18—19։— Գծումները՝ ճնշումով։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրություն՝ ձեռագիրն ունի սիրուն երեքական գլխազարդեր, թռչնագրեր և լուսանցազարդեր (թ. թ. 1ա, 22բ և 70ա)։— Գրիչը՝ թեպետ ձեռագրում հիշատակարան չկա, սակայն սույն ձեռագիրը գրողը հանդիսանում է նախորդ՝ № 219 ձեռագրի գրիչ Միքայէլ աբեղան։— Պատվիրատուն՝ անհայտ։— Ծաղկողը՝ անհայտ, սակայն նախորդ ձեռագրի նույն ծաղկողն է։— Ժամանակը՝ ԺԶ—ԺԷ դարեր։— Վայրը՝ անհայտ։— Ծանոթություն՝ սույն ձեռագիրը բերված է Երնջակի Ս. Կարապետ վանքից մի թուրքի միջոցով։ Մայր Աթոռի ձեռագրատունը այն նվեր է ստացել 1963 թվականի մայիս ամսին, Տ. Վահան վարդապետ Տերյանից։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Թ. 1ա.— Պորփիւրի Ներածութիւն։*
*Թ. 77բ.— Սկիզբն է Նախադրութիւն գրոցն, որ ասի ըստ յունացն Պերիարմենիաս, և հայերէն՝ յաղագս մեկնութեան, արարեալ ի մեծ իմաստնոյն Արիստոտէլէ, թարգմանեալ և մեկնեալ ի Դաւթէ։*
*(Ձեռագիրն ունի 15 սխեմաներ և աղյուսակներ, մեկական էջի ծավալով։ Մեկը ձեռագրի սկզբում է, իսկ մնացյալ 14-ը ձեռագրի վերջում)։*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թ. 107ա.— Յիշատակ է այս Պորփիւրոսի Ներածութիւն Տէր Աղէքսանդրի որդի Տէր Ստեփանոսին, և որդւոցն Աստուածատուրին, և Մարտիրոսին, և Գրիգորին, և կենակիցն Վառվառին, ՌՄԼԷ (1788)։*
*Աստուածատուր. Աղէք.։*

Թ. 107բ.—Ներսէս—անունք են մի քեռչէ։

Հերնասա Ջարէս իբրև այս գիրն որ առայ թիվն էր 1881-ի մարտի ընկին։

Թ. 118ա.— Գերայլպատիւ և Նազելի իմ եղպար տիրացու Մարգարիտ շատ և շատ բարով կ՚անեմ։

Թ. 118բ.— Գերապատիւ և Նազելի տիրացու։

Առ Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսին Ամենայն Հայոց։ Մատլիմ ի Համբոյր Ս. Աջիդ։ Միաբան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի։ Վաչան վարդապետ Տերյան, 21 մայիսի 1963 ամի։

## № 221

## ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Թերթերը՝ 187։— Պրակները՝ 15, յուրաքանչյուրը 12-ական թերթից, իսկ Ը՝ 8 և ԺԸ՝ 9 թերթից են։— Մեծությունը՝ 11×8×4 սմ.։— Նյութը՝ դեղնած մագաղաթ, տեղ-տեղ հաստ և տեղ-տեղ բարակ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ, որի վրա ճնշամով զարդեր են նկարված։ Կազմել է ձեռագրի ծաղկողը՝ Հովակիմ քահանան։— Պահպանակները՝ վերջում երկու թերթ մագաղաթ, տեքստը երկաթագիր, Ավետարանից, ժամանակը՝ Ժ—ԺԲ դարեր։— Վիճակը՝ բավարար. սկզբից առաջին երեք պրակները ամբողջությամբ ընկել են, իսկ 8-րդ պրակից էլ 10 թերթ պակասում է։— Գրությունը՝ միասյուն։— Դատարկ թղթեր՝ չկան։— Տողերը՝ 22։— Գծումները՝ ճնշումով։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրությունը՝ ձեռագիրն ունի բազմաթիվ սիրուն գլխազարդեր, լուսանցազարդեր, զարդագրեր և թռչնագրեր։— Գրիչը՝ Խաչերես։— Պատվիրատուն՝ անհայտ։— Ծաղկողը՝ Հովակիմ քահանա։— Ժամանակը՝ 4 մարտի 1671 թ.։— Վայրը՝ անհայտ։— Ստացողությունը՝ սույն ձեռագիրը 1963 թվականի հուլիս ամսին գնված է Երևանի բնակիչ Գրիգորյան Հեռնից, որ իր կարգին ստացել է որպես ժառանգություն իր պապից՝ Գրիգորյան Հովհաննեսից (Ախալքալաք)։

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

*Թ. 166ա.— Փա՛ռք ամենասուրբ Երրորդութեանն և մի աստուածութեանն Հաւր և Որդւոյ և Հոգոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։ Գթութեամբ և մարդասիրութեամբ էին Աստուծոյ յանգ ելեալ կատարեցաւ տաղս աստուածապատում երգս մարգարէին Դաւթի, որ կոչի Սաղմոսարան, ձեռամբ մեղսաներկ Խաչերեսի, յիշատակ և ի վայէլումն (սկզբնական հիշատակարանից մեկուկես տող ջնջված է այստեղ և գրված է հետևյալը. «Մէռկելեանց տոհմին») …Նուաստի. ի թուականութեանս Հայոց քսան և երկու յոբելինի, և միակ երկոտասանի, յամսեանն մարտի յաւուր չորրորդի։ Արդ, որք հանդիպիք յայսմ հոգենորոգ բուրաստ(բ. 166բ)տանիս՝ յոգելով կամ զաղափարելով յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր (մի տող ջնջված է այստեղ և գրված է «Մէռկելեանց») ….որ ստացաւ զսա յիշատակ անձին, ի հալալ յընչից իւրոց. այլ և զծաղկող և զկազմող սորին և զաշխատաւորն և զմեծ երախտաւորն զՅովակիմ քահանայն, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ յորժամ հատուցանէ վարձս ըստ գործոց մարդկան ս ձեզ հատուցէ վարձս ըստ վաստակոց ձերոց և լսել տացէ զերանաւէտ բարբառն որ ասէ. «Եկայք աւրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զանսպառ ուրախութիւնն որ է աւրհնեալ յաւիտեանս։ Ամէն»։*

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 83ա.— Շընորք, սէր և սավածուին։

Թ. 165բ.— 25 տարին մեկ օրէլէն է, այսէս գըրված է Փըրկչի 1127 թվին, հայոց 792 թըվին։

Թ. 167ա.— Ի 1881 ամի 17-Ն մարտի այս Սաղմոսարանս պատկանի Սարգիս Մէռկելեանցի ժառանգութեան …. ուր են պապեր … որ են Մէռկելիոս … Օվաննէս, Ըստեփաննոս …. Բարթէողիմոս, Թաթէոս Ա. Մէռկելեանց ի գ. Ախալքալաք։

Թ. 167բ.— Պատկանիեյ կիրգըն այս Սարգիս Մեռկելեանց … ։ըրացավ 1875 թըվին ու մարդի յօրսին։

## № 222

## ՇԱՐԱԿՆՈՑ

Թերթերը՝ 368։— Պրակները՝ 32, յուրաքանչյուրը 12-ական թերթից, իսկ ԻԸ և ԼԲ՝ 8, Զ, Է և ԺԱ՝ 10, ԺԳ, ԺԴ և ԻԶ՝ 11, ԻԵ՝ 13 թերթից են։— Մեծությունը՝ 14×9,3×7,7 սմ.։— Նյութը՝ դեղնած և կեղտոտված դիմացկուն թուղթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ, որի առաջին երեսին ամրացված է 5,5×5,5 սմ. մեծությամբ մետաղյա մի խաչ, Քրիստոսի խաչելությունը ներկայացնող։— Պահպանակներ՝ չկան։— Վիճակը՝ բավարար, թեպետև բավական հնացել է։ Սկզբում և վերջում ուրիշ մի ձեռագրի զարդանկարները կտրվել և կպցվել են վեց էջերում։— Գրությունը՝ միասյուն։— Դատարկ թղթեր՝ չկան։— Տողերը՝ 28։— Գծումները՝ ճնշումով։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրությունը՝ ձեռագիրն ունի երկու նկարներ ամբողջ էջի ծավալով (Թ. Թ. 1բ և 285բ), ինչպես նաև բազմաթիվ կիսախորաններ, գլխազարդեր, լուսանցազարդեր, հրեշտակներ, սրբեր, փղեթներ, խաչեր և թռչուններ։ Կան նաև թռչնագրեր, զարդագրեր և մարդագրեր։ Նկարված են հասարակ ոճով։— Գրիչը՝ Սողոմոն։— Պատվիրատուն՝ Մարխաթունի զուստրը՝ Ենոֆոր։— Ծաղկողը՝ անհայտ։— Ժամանակը՝ 1477 թ.։— Վայրը՝ Երուսաղեմի Ս. Փրկիչ վանք։— Ստացողությունը՝ սույն ձեռագիրն արտասահմանից նվեր է ստացված Վեհափառ Հայրապետի միջոցով։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*(Սույն ձեռագիրն ամբողջությամբ գրված է հայկական հին խազերով)։*

*Թ. Թ. 2ա—331ա.— Շարակնոց։*

*Թ. Թ. 331ա—368ա.— Տաւնացոյց և Աւետարանացոյց, և կարգաւորութիւն, և հրահանգ Տէրունական տաւնից, զոր կարգեալ է*

և սահմանեալ Սրբոյն Սահակայ Հայոց հայրապետին, զոր ընկալեալ հաստուցին առ մեզ նախնիք մեր։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

*Թ. 285ա.— Հաղորդս արա զիս վերստին ըստ առակի անառակին։ Ուտել ըղձաց կենարարին ըմպել զբաժակ քո երկնային։ Ով զասք լուսերամից և սպասաւորք Որդոյն Աստուծոյ և բաշխաւղք կենարար հացին, յերես անկեալ աղաչեմ զձեզ յիշել ի Քրիստոս ի մաքրափայլ աղաւթս ձեր զՄարխաթուն և զփոխեցեալ զաւակքն իւր ի Քրիստոս զԿարապետ, Մանուկն, և զդստերքն իւր զԿուլիկն և զՇնոֆորն, որ ստացաւ զսայ ի հալալ ընչից իրոց, ի վայելումն եղբաւրորդոյն իւրոյ Տէր Յուսիկ կրաւնաւորին, և յիշատակ իւր և ամենայն արեան մերձաւորաց իւրոց. և Աստուած զյիշողքդ և զյիշեցեալքն յիշէ ի միւսանգամ գալստեան իւրոյ և տայ լսել զձայնն երանաւէտ։ Ամէն, ամէն։*

*Թ. 368բ.— Փա՜ռք համագոյ միասնական Սուրբ Երրորդութեանն և մի աստուածութեանն, Հաւր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ, յանկէտ և յանզրաւ յաւիտեան։ Ամէն։ Որ ետ կարողութիւն տկար և մատնադեղ փծուն և անարհեստ սուտանուն գրչի Սողոմոնի ելանել յաւարտ այսմ տառի, նմա փառք և գոհութիւն յեկեղեցի, և յամենայն յիւրական արարածոց։ Ամէն։*

*Արդ, գրեցաւ շարակնոցս և որ կայ ի սմա ի սուրբ քաղաքս Երուսաղէմ ի վանքս սուրբ մենաստան անապատիս որ կոչի Սուրբ Փրկիչ, ընդ հովանեաւ կափարիչ Բ վիմիս գերեզմանին Քրիստոսի և սուրբ բանտիս, ի թվին հայոց յՋԻԶ (1477 թ.), ի Կաթողիկոսութեանն Սըսոյ Հայոց Տեառն Ստեփանոսի, և էջմիածնին Տեառն Սարգսի, և յեպիսկոպոսութեան Սուրբ Աթոռոյս Առաքելական Երուսաղէմի Հայոց սրբազան և քաջ փիլիսոփայի Տէր Մկրտչի Ղրիմեցոյ, ի փակակալութեան Սուրբ Ուխտիս Տէր Տաւնական ալեաւք պատւեալ և սրբասնեալ կուսակրաւն սուրբ արեղայի և Տէր Յովանէս անարծաթ և անստացուած եպիսկոպոսի, որ մականուն Տաւիլ կոչի, և ճգնազգեաց սուրբ ծերունոյ Թադէոսի աւագ սարկաւագի յոյժ իմաստուն գիտնականի հին և նորոյ սրբոց տառի, կուսակրաւն և անստացուած միշտ ի մարմնի և այլ համշիրակ եղ... (շարունակությունը պարունակող թերթը ընկել է)։*

## № 223

## ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Թերթեր՝ 138։— Պրակներ՝ 12, յուրաքանչյուրը 12-ական թերթից, իսկ Է՝ 3 և Թ՝ 10 թերթերից։— Մեծությունը՝ 14,7×11,5×3,2 սմ.։— Նյութը՝ դեղնած և կեղտոտած հաստ թուղթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ, մաշված։— Պահպանակները՝ վերջում կա մի թերթ խունացած մագաղաթ, Ը—Թ դարերից, տեքստը՝ Ավետարաններից։— Վիճակը՝ անբավարար, սկզբից շուրջ 7 պրակ պակաս է, նաև միջից (Ժ պրակը ամբողջությամբ) և վերջից։— Գրությունը՝ միասյուն։— Դատարկ թղթեր՝ չկան։— Տողեր՝ 17—18։— Գծումները՝ աչքի չափով։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրությունը՝ ձեռագիրն ունի շատ հասարակ ոճով նկարված գլխազարդեր, լուսանցազարդեր, թռչուններ, զարդագրեր և թռչնագրեր։— Գրիչը՝ անհայտ։— Պատվիրատուն՝ անհայտ։— Ծաղկողը՝ անհայտ։— Ժամանակը՝ ԺԷ—ԺԸ դարեր։— Վայրը՝ անհայտ։— Ծանոթություն՝ սույն ձեռագիրը Լոս Անջելոսի բնակիչ տիկին Եղսա Գազանճյանի կողմից նվեր է ստացված 1960 թվին, վեհափառ Հայրապետի Ամերիկա կատարած ճանապարհորդության առթիվ։

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*(Առաջին կազմի կռնակում գրված մի թղթում).*

*Այս գիրքը կը նուիրէ Այրի Տիկին Եղսա Գազանճեան, ի յիշատակ իր ամուսնոյն հանգուցեալ Փիլիպպոս Գազանճեանի (Հիւսէյնիկ, Խարբերդցի) Լոս Անճէլըս, Գալիֆօրնիա, Միացեալ Նահանգներ Ամերիկայի. հասցէ՝*

4710 Don Zarembo Drive,
Los Angeles 18, California,
United States of America

*Թ. 5ա.— Հրապարակեաց։*

*Թ. 25բ.— Անզգեոց որ ոչ գոյինն հանգիստ։*

*Թ. 27բ.— Ուղիղ դատեցեաց։*

*Թ. 30ա.— (անընթեռնելի մի քանի տող)։*

*Թ. 107ա.— Ի պահէ առաւօտու մինչև յերեկոյն։*

*Թ. 109ա.— Գրչափորձ՝ ա բ գ դ ե զ է։*

## № 224

## ՏԱՂԱՐԱՆ

Թերթեր՝ 242։— Պրակներ՝ 21, յուրաքանչյուրը 12-ական թերթից, իսկ ԺԹ՝ 6, Է, ԺԱ և ԻԱ՝ 10, Բ՝ 13 թերթից։— Մեծությունը՝ 10×6,8×5 սմ.։— Նյութը՝ մաքուր բարակ մագաղաթ, սակայն տեղ-տեղ յուղոտած և կեղտոտած։— Կազմը՝ կաշեպատ տախտակ, այժմ քայքայված, երկու քռնակներն ընկել են, կաշվի վրա ճնշումով զարդեր կան նկարված։— Պահպանակները՝ սկզբում և վերջում երկուական թերթ հին մագաղաթ, դեղնած և կեղտոտած, գիրը՝ ուղղագիծ երկաթագիր, Ժ—ԺԲ դարեր, տեքստը՝ Ճառընտիրից։— Վիճակը՝ կազմը և վերջի պրակները քայքայված են։— Գրությունը՝ միասյուն։— Դատարկ թղթեր՝ 1, 241 և 242։— Տողեր՝ 13։— Գծումները՝ առանց ճնշման։— Գիրը՝ բոլորգիր և հայկական հին խազեր։— Զարդագրությունը՝ ձեռագիրն ինքնին ամբողջությամբ ներկայացնում է Կոստանդնուպոլսի դպրոցի ԺԷ դարի մանրանկարչության մի հիանալի նմուշը։ Ձեռագիրն ունի շատ գեղեցիկ զարդագրություն, գրեթե ամեն էջում կան հիանալի նմուշներ։ Ձեռագրի սկզբում (Թ. 3բ) մի էջի

ծավալով կա Ս. Ներսես Շնորհալու գեղեցիկ նկարը, ապա կան Քրիստոսի և Մարիամ Աստվածածնի կյանքից պատկերներ։ Կան շատ ... բազմաթիվ նկարներ և տեսարաններ։ Կան շատ սիրուն և նուրբ կիսախորաններ և լուսանցազարդեր, գլխազարդեր և հրեշտակներ, սրբեր և հայրապետներ, առաքյալներ և եզնավորներ, թագավորներ և քահանաներ, ձանուկներ և զարդեր, խաչեր և զմրեթներ, ծառեր և ծաղիկներ, թռչուններ և սիրամարգեր, զարդագրեր և թռչնագրեր։ Թերթի փոքր ծավալի պատճառով զարդագրությունը առատառատ փոքր չափի է, շուրջ 2—3—4 սմ.։ Օգտագործված են գեղեցիկ վառ գույներ, ինչպես նաև արյան կարմիրը և ոսկեգույնը։— Գրիչը՝ Հովհաննես սարկավագ։— Ծաղկողը՝ Մարկոս Աստվածատուր սարկավագ։— Ժամանակը՝ 1657 թ.։— Վայրը՝ Կոստանդնուպոլիս։— Սեփականությունը՝ սույն ձեռագիրը հանված է Ղլըճի բնակիչ հանգուցյալ Ավետիս Մկրտչյանի գաղաղից, թաղման օրը, և ապա նվեր է ուղարկված Մայր Աթոռի ձեռագրատուն, Ղլըճի Հոգևոր Հովիվ վանեցի Տ. Ղևոնդ քահանա Մինասյանի միջոցով, 1962 թվին։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տաղարանն ամբողջությամբ գրված է հայկական հին խազերով)։

Թ. 2բ.— Այս են խազերուն անունքն։

Թ. 4ա.— Երգ Տեառն Ներսէսի ասացեալ յաղագս Հ...։

Թ. 89ա.— Ստեղծիչ Ծինանց Ճաշու։

Թ. 96ա.— Սպաս ընծայ առնլու։

Թ. 99ա.— Սրբասացութիւն Սրբոյ Պատարագին։

Թ. 117բ.— Գանձ ի գումար Գ վանկէն։

Թ. 132բ.— Մեղեդիկ են այսոքիկ, աւետումն սուրբ հրեշտակապետին առ Կոյսն Մարիամ Սուրբ Աստուածածինն վասն յղութեան Բանին Աստուծոյ։

Թ. 143բ.— Ցունաց բառով մեղեդիկ։

Թուրա՞նի զաթէ, թուրա՞նի զաթէ, թէ զաթէ, սրմընարի կուլիայ պանիաւս, այաւս ա՞յաս էա՞ս, էլ կունացի, է՞լ կունացի՞, էլ կունացի էաւս։

Թ. 144ա.— Տաղ Ծննդեան և Յայտնութեան Քրիստոսի Աստուծոյ։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 239ա.— Փա՞ռք համապատիւ և համագոյ Սրբոյ Երրորդութեանն Հօր անեղին, և Որդւոյ անճառին, և Սրբոյ Հոգւոյ փառակցի նոցին այժմ և անզրաւ յաւիտեանս ամէն։

Գրեցաւ ամենափարթամ և գեղզեղափայլ ծաղկածաման տփիկս որ կոչի մեղիդարան ի հոյակապ և ի գերահռչակ յարքայանիստ մայրաքաղաքս Կոստանդինուպօլիս որ և Նոր Հռոմ, և ըստ արեգակնային յաւէտարն- (բ. 239բ) թաց համառօտականի որ ըստ մերոս պահի, հազարորդի և հարիւրորդի և վեցերորդի ամի, ձեռամբ Յովաննէս սարկաւագի, որ ի նոյնոյ քաղաքէն Կոստանդնոյպօլսի հանգուցելոյ ի Քրիստոս որոյ Տեառն ողորմեսցի, և գեղազարդ յօրինողի սորին Մարկոսի շնորհազարդ և անհաս նկարակերտի, ի վայելումն մաքրամիտ և հոգիածին աշակերտի իմոյ Աստուածատուր սարկաւագի։

Թ. 240ա.— Արդ, աղաչեմ զձասս լուսեբամ մանկանցդ եկեղեցւոյ, որք հանդիպիք յայսմ գեղապաճոյճ և ծաղկափթթիթ սրբոյ զանձիս աստուածայնոյ, լիով սրտիւ և սեռն սիրով մի բերան Աստուած ողորմի ասացէք ինձ մեղսանօրկ անձին և բիւրացանցար պարտաւորի Մարտիրոս վարդապետիս Ղրիմեցւոյ հանդերձ այլովքն զորս ի վերայ յիշատակեցաք, զի և դուք զնոյն առատ ողորմութիւն գտա(բ. 240բ)նել արժանասջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ ամենեցուն յաւիտեանս ամէն։

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ձեռագրի սկզբում, 1—2 թերթերի արանքում, կան հանգուցյալ Ավետիս Մկրտչյանի երկու փոքրիկ նկարները, որոնց հետևում գրված է հետևյալը).

Գրքույկս վերցրել եմ նկարիս տիրոջ Ավետիս Մկրտչյանին թաղելուց իրա մահու թարաղիցը, որ մոռացրել էին իրա հետ թաղելու։

Ղևոնդ քահանայ Մինասեան։

(Ձեռագրի վերջում գտնվող մագաղաթյա պահպանակի վրա).

Մեզեթարան է այս։

## № 225

## ՇԱՐԱԿՆՈՑ

Թերթերը՝ 300։— Պրակները՝ 25, յուրաքանչյուրը 12-ական թերթից են։— Մեծությունը՝ 18×10×4,7 սմ.։— Նյութը՝ զեղնած մագաղաթ, երբեմն բարակ և երբեմն էլ հաստ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ, վարդագույն շերտով ծածկված։ Կազմի երկու բռնակներն ընկել են։— Պահպանակները՝ սկզբում երկու թերթ և վերջում մեկ թերթ սպիտակ հաստ մագաղաթ։— Վիճակը՝ շատ լավ։— Գրությունը՝ միասյուն։— Դատարկ թղթերը՝ 1, 297—300։— Տողերը՝ 23—24։— Գծումները՝ ենչումով։— Գիրը՝ Նոտրգիր և հայկական հին խազեր։— Զարդագրությունը՝ ձեռագիրն ունի շատ սիրուն մանրանկարչություն։ Ընդհանրապես գործածված են կապույտ և կարմիր գույները, իսկ հազվադեպորեն դեղինն ու կանաչը։ Ձեռագիրն ունի երկու գեղեցիկ կիսախորաններ (թ. թ. 3ա և 107ա) և ութ գլխազարդեր։ Կան բազմաթիվ լուսանցազարդեր և զմրեթներ, խաչեր և թռչուններ, ծառեր և ծաղիկներ, մի սիրուն թռչուն մարդկային գլխով (թ. 230ա), բազմաթիվ զարդագրեր, թռչնագրեր և գազանագրեր։ Սրանցից բացի կան նաև խառն գլխատառեր, այսպես, օրինակ, միացյալ օձագիր և թռչնագիր՝ երկու հատ (թ. թ. 28ա և 160ա), միացյալ օձագիր և ձկնագիր՝ մի հատ (թ.

274ա)։ Միացյալ ածագիր և գագանագիր՝ երեք հատ (Թ. Թ. 104բ, 153ա և 232ա), միացյալ գազանագիր և թռչնագիր՝ մի հատ (Թ. 107ա), մարդագլուխ թռչնագիր՝ մի հատ (Թ. 252ա), միացյալ ձկնագիր և թռչնագիր՝ ինը հատ (Թ. Թ. 24ա, 152ա, 257բ և այլն)։ Քել անգամ, որոշ տեղեր, գլխագրերը նկարված են, սակայն չեն ներկված։ Սույն ձեռագրի զարդարվածությունը ներկայացնում է ԺԷ դարի հայկական մանրանկարչության մի գեղեցիկ նմուշ։— Գրիչը և ծաղկողը՝ Աղեքսիանոս քահանա։— Պատվիրատուն՝ անհայտ։— Ժամանակը՝ 1652 թ.։— Վայրը՝ անհայտ։— Ստացությունը՝ սույն ձեռագիրը նվեր է ստացված 1958 թվականի նոյեմբերի ամսին Նիցցայից (Ֆրանսիա), պր. Կարապետ Իրրանոսյանի կողմից։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Սույն շարակնոցն ամբողջությամբ գրված է հայկական հին խազերով)։

Թ. 10ա.— Կանոնն Աստուածայայտնութեան նրագալուցին։

Թ. 44բ.— Երգ բուն բարեկենդանին առաջի կիւրակէին ազուհացից, Տեառն Ներսեսի ասացեալ։

Թ. 87ա.— Կանոնն Յարութեանն Ղազարու։

Թ. 107ա.— Կանոնն Սուրբ Զատկին։

Թ. 146ա.— Կանոնն Պենտէկոստէի առաջի աւուր։

Թ. 185բ.— Կանոնն Նաւակատեաց Սուրբ Խաչին աւրհնութեան։

Թ. 234ա.— Կանոնն Համաւրէն ամենայն մարտիրոսաց։

Թ. 252ա.— Կանոնն Համաւրէն ամենայն Նընջեցելոց ի Քրիստոս։

Թ. 274ա.— Աւրհնութիւնն էր վասն Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 86բ.— Զրազմամեղ Աղեքսիանոս և զծնողսն իմ յիշել ի Տէր Աստուած աղաչեմ։

Թ. 106բ.— ՈՀ զհեռացեալս ի յարդարութենէ և զմոլորեալս ի ճշմարտութենէ։

Թ. 145ա.— Ո՜վ լուսամիտ մանկունք Սուրբ Սիոնի, զբազմամեղ Աղեքսիանոս քահանայ և ոչ ի գործոց, յիշեսջիք ի Քրիստոս և զծնաւղսն իմ, յիշել ի Տէր Քրիստոս որ յոյսն է ամենեցուն, աղաչեմ։ Գաղտափարեցի և ծաղկեցի. թվին Հայոց ՌՃ և Ա (1652 Թ.)։

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկզբում գտնվող մագաղաթ պահպանակի վրա).

Ոհաննէս ովեձեն։

Թ. 2ա.— Սրտագին նուէր Սրբոյ Էջմիածնայ Մայր Աթոռին Ն. Ս. Օծութեան Տէր Տէր Վազգէն Սրբազնակատար Կաթողիկոսի ծննդեան յիսնամեակին և զահակալութեան երրորդ տարեդարձին առիթով։

Ի յիշատակ վաղամեռիկ հանգուցեալ եղբօրորդւոյս Ռատոս Իրրանոսեանի։

Կարապետ Իրրանոսեան, Նիս, 10 նոյեմբեր 1958։

Թ. 2բ.— Ի հայրապետութեանն Տեառն Ղուկասու վրդյապետին և ի Պոլսո մէծի Պատրգ. Զաքարիեյ սսկաւէր վրդապյետին և ի տեղոյս վէրյակացւ այսինքն ամառին Օվհաննէս պաղտատցի ըրարօյնի 1232 (արաբական թվերով, այսինքն 1783 թվին) ամէն ի վաէլումն մահտեսի Նիկողաեոսի որդի մահտեսի Թորոս չէլէին գալիր։

(Ձեռագրում երեք տեղ՝ Թ. Թ. 3ա, 44բ և 107ա, կա մի փոքրիկ սև կնիք, 1,3×1,3 սմ. ծավալով, որի վրա կապույտով գրված է հետևյալը).

Թորոս— Ս Ո Չ ...Ժ

(որոշ տառեր չեն կարդացվում)։

## № 226

## ՊԱՐՋԱՏՈՄԱՐ

Թերթերը՝ 70։— Պրակները՝ 6, յուրաքանչյուրը 12 թերթից են, իսկ վերջին պրակը Զ՝ 10 թերթից։— Մեծությունը՝ 10,2×7,2×2,6 սմ.։— Նյութը՝ գեղնած և կեղտոտված մագաղաթ։— Կազմը՝ արծաթապատ տախտակ, որ մի հիանալի նմուշ է հայկական արծաթագործության։ Կազմի առջևի մասը ներկայացնում է մի գեղեցիկ տեսարան փորագրված արծաթի վրա, որ ցույց է տալիս Տրդատ թագավորի և խաչափառ քրիստոնյա մկրտությունը Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից։ Վերևից Ս. Հոգին աղավնու կերպարանքով իջնում է թագավորի գլխին։ Ձախին երևում է Երուսաղեմի տաճարը, իսկ աջին՝ Նոյան տապանը։ Սույն տեսարանը առնված է մի շրջանակի մեջ, որի վրա ամրացված են 12 հատ սիրիրական գունավոր քարեր, 5—10 մ. մ. երկայնքով, բաց և մուգ կանաչ ու կարմիր գույնով։ Քարերից բացի կան նաև 48 շատ փոքրիկ (2 մ. մ.) հուլունքներ, որոնց մի մասը ընկել է։ Կենտրոնական նկարի եզրերը բաց կապույտ, թևատարած Աղավնու կողերը սրճագույն, իսկ արտաքին շրջանակն էլ մուգ կապույտ մինայով է ծածկված։

Կազմի հետևի մասը ներկայացնում է մի տեսարան, որտեղ նստած երևում են երեք հոգևորականներ, երկուսը խույրով, իսկ երրորդը՝ գլխաբաց։ Ձախին ու աջին երևում են մի եպիսկոպոսական և մի վարդապետական գավազանի գլուխներ։ Գուցե այդ երեք անձինք ներկայացնում են Ս. Սահակ Պարթևին, Ս. Մեսրոպ Մաշտոցին և Վռամշապուհ թագավորին։ Նրանց գլխավերևում են երկու հրեշտակներ, որոնք իրենց ձեռքերով բռնած են բացված մի գիրք, որի երկու էջերում փորագրված են հայկական այբուբենի առաջին 12 տառերը։ Նախորդի նման սույն տեսարանն էլ առնված է նույն տեսակի մի շրջանակի մեջ, որի վրա ամրացված են 12 հատ սիրիրական գունավոր քարեր, նույն մեծությամբ, կանաչ և բաց ու մուգ կարմիր գույներով։ Այստեղ ևս կան 48 փոքրիկ հուլունքներ, որոնց մի մասը չարդվել և ընկել է։ Կենտրոնական նկարի եզրերը բաց կապույտ, իսկ արտաքին շրջանակն էլ մուգ կապույտ մինայով են ծածկված։

կազմի կռնակի վրա փորագրված են ծաղիկներ, տերևներ և զարդեր, որոնք ծածկված են կանաչ, սրճագույն, բաց և մուգ կապույտ գույնի մինայով։

Սույն ձեռագրի արծաթյա կազմը մի գեղեցիկ նմուշ է և արժեքավոր գործ հայկական փորագրության և արծաթագործության։— Պահպանակները՝ չկան։— Վիճակը՝ լավ։— Գրությունը՝ միասյուն։— Դատարկ թղթերը՝ 1 և 12։— Տողերը՝ 16։— Գծումները՝ ճնշումով։— Գիրը՝ նոտրգիր։— Զարդագրություն՝ չկա։ Միայն ձեռագրի առաջին մասում, թ. թ. 13ա—24բ, գրությունը գրված է երկու լուսանցքների միջև, մի լուսանցք, որ երեք գույնով է քաշված՝ կարմիր, կապույտ և կանաչ։ Ձեռագրում մի քանի գլխատառեր միայն գրված են կապույտ ներկով, մնացյալները գրված են կարմիր ներկով։— Գրիչը՝ Դավիթ երեց։— Պատվիրատուն՝ Խաչատուր Ջուղայեցի։— Ժամանակը՝ 1669 թվականի մարտի 9։— Վայրը՝ Էրզրում։— Ծանոթություն՝ սույն արժեքավոր ձեռագիրը նվեր է ստացված Կահիրեից 1956 թ. մարտ ամսին, պր. Հրանտ Նասիպյանի կողմից, վեհափառ Հայրապետի Եգիպտոս կատարած հովվապետական այցելության առթիվ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագրի սկզբում կան 18 հատ օրացուցային աղյուսակներ (թ. թ. 2բ—11ա)։

Թ. 13ա.— Թուականն, ՌԹ,

Թ. 15ա.— Սույն թերթից մինչև ձեռագրի վերջը գրված է յոթներյակների մասին։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 69բ.— Գրեցաւ պարզատումարս ի լաւ և յընտիր օրինակէ ի մայրաքաղաքս Արզրում, ի թուին ՌՃԺԸ (1669 թ.) մարտի ամսոյ ի ութն, ձեռամբ մեղապարտ Դաւիթ իրիցի։ (Թ. 70ա) Ի խնդրոյ Ջուղայեցի Խաչատրին, զոր Տէր Աստուածն մեր բարւոք վայելել տացէ, և լիցի սա յիշատակ իւրն և ծնողացն Աղազարին, և մօրն, և որդւոցն, և ամենայն ազգայնոցն, և որք օգտիք ի սմանէ և կամ հարևանցի տեսանէք, մէկ լի սրտիւ Հայր մեղայ ասացէք, ամէն։

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 2ա.— Թվ. ՌՄԿԷ (1818) հոկտեմբերի է հանի ...յական. ես անարժան երեցս՝ Հաննէս պըսակեցի ...շնորհաւորս արարցէ, յորժամ պըսակեցաւ ... էր հարս եղա ... ։

Թ. 70ա.— Իւր սիրելի մօր յիշատակին կը նուիրէ Հրանտ Նասիպեան։ Գահիրէ, 15.3.1956։

## № 227

## ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 240։—Պրակները՝ 20, յուրաքանչյուրը 12-ական թերթից, ի բաց առյալ Ա պրակը որ 10 թերթից է։— Մեծությունը՝ 11×8×3,7 սմ.։— Նյութը՝ ողորկած հաստ և բարակ մագաղաթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով զարդեր են նկարված։ Կազմի երկու բռնիչները ընկել են։— Պահպանակները՝ սկզբում և վերջում կան մեկական թերթ մագաղաթ և մեկական թերթ սպիտակ թուղթ։— Վիճակը՝ շատ լավ։— Գրությունը՝ երկսյուն։— Դատարկ թղթերը՝ 240։— Տողերը՝ 25—26։— Գծումները՝ ճնշումով։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրություն՝ սույն ձեռագրի զարդագրությունը մի հիանալի նմուշ է ԺԷ դարի Կոստանդնուպոլսի հայկական զարդանկարչության և արվեստի մի գեղեցիկ գործ է։ Ձեռագիրն ունի համաբարբառներ (թ. թ. 2ա—11ա), չորս ավետարանիչների ամբողջական էջի ծավալով նկարները (թ. թ. 15բ, 78բ, 119բ և 190բ), չորս խորաններ (թ. թ. 16ա, 79ա, 120ա և 191ա), ինչպես նաև բազմաթիվ մեծ ու փոքր լուսանցազարդեր, գմբեթներ և խաչեր, թռչուններ և սիրամարգեր, ծառեր և ծաղիկներ, թռչնագրեր և զարդագրեր։ Կան նաև երկու սիրուն գազանագրեր (թ. թ. 79ա և 120ա) և մեկական մարդագիր (թ. 16ա) ու մեծ թռչնագիր (թ. 191ա)։ Ձեռագրում օգտագործվել են կապույտ, կարմիր, կանաչ, ոսկեգույն ու որդան կարմիր գույները։— Գրիչը՝ Հովհաննես քահանա։— Պատվիրատուն՝ Ամիրասաթենց Խոջա Սաֆար։— Ստացողը՝ անհայտ։— Ժամանակը՝ 1636 թ.։— Վայրը՝ Կոստանդնուպոլիս։— Ծանոթություն՝ սույն արժեքավոր ձեռագիրը նվեր է ստացված Կահիրեից 1956 թվականի մարտ ամսին, պր. Հրանտ Նասիպյանի կողմից, վեհափառ Հայրապետի Եգիպտոս կատարած հովվապետական այցելության առթիվ։

(Շարունակելի)

# ՑԱՆԿ

## «Էջմիածին» ամսագրում 1964 թվականի ընթացքում տպագրված նյութերի

### Ա. ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Պսակ արքեպիսկոպոս Թումայանին արքության պատիվ շնորհելու մասին, Բ—Գ 7:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը ապրիլյան մեծ եղեռնի 50-ամյակի առթիվ, Ը—Թ 8:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանին Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի հայոց թեմի հայրապետական պատվիրակ նշանակելու մասին, Ե 7:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոսին Երուսաղեմի ուխտավորությունից և արտասահմանյան ուղևորությունից վերադարձի առթիվ, Բ—Գ 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հայրիկ արքեպիսկոպոս Ասլանյանին արքության պատիվ շնորհելու մասին, Բ—Գ 5:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի մահվան տասներորդ տարելիցի առթիվ, Ե 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Հարավային Ամերիկայի հայոց հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Բարգեն արքեպիսկոպոս Ապտայանին արքության պատիվ շնորհելու մասին, Ը—Թ 6:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Մեծի Տանն Կիլիկիո Տ. Տ. Խորեն Ա Կաթողիկոսին՝ երջանկահիշատակ Զարեհ Ա Կաթողիկոսի մահվան տարելիցի առթիվ, Դ 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Չիկագոյի հայոց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծման առթիվ, Ժ 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ հեռագիրը ՍՍՌՄ Մինիստրների սովետի նախագահ Նիկիտա Սերգեևիչ Խրուշչովին՝ ծննդյան յոթանասնամյակի առթիվ, Ե 9:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ նամակը Քույր եկեղեցիների հոգևոր պետերին ապրիլյան մեծ եղեռնի 50-ամյակի առթիվ, ԺԱ 8:

Ամանորի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և պետական պաշտոնական անձնավորությունների միջև փոխանակված ողջույնի հեռագրերը, Բ—Գ 9:

Ամանորի և Փրկչի հրաշափառ և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և նվիրապետական Աթոռների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Բ—Գ 10:

Հաղորդագրություն, Ժ 10:

Հաղորդագրություն, ԺԲ 8:

Հաղորդագրություն Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտոր Ժոզե դը Ազերեդո Պերդիգաոի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելության մասին, Ժ 20:

Հաղորդագրություն Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելության մասին, Է 18:

Հայաստանում սովետական կարգերի հաստատման քառասունչորրորդ տարեդարձի կապակցությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական անձնավորությունների միջև փոխանակված հեռագրերը, ԺԲ 5:

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 44-րդ տարեդարձին նվիրված հանդիսություններ Մայր Աթոռում, ԺԲ 7:

Հայտարարություն, Դ 14:

Հեռագրերի փոխանակում Արևելյան Հնդկաստանի Կաթողիկոս Նորին Սրբություն Բասիլիոս Բ Գևարգեսի մահվան առթիվ, Բ—Գ 22:

Հնդկաստանի վարչապետ Նորին Վսեմություն Ջավահառլալ Ներուի մահվան առթիվ փոխանակված ցավակցական հեռագրեր, Զ 6:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի քառասունյոթերորդ տարեդարձի կապակցությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական անձնավորությունների միջև փոխանակված հեռագրերը, ԺԱ 8:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո Անթիլիասի կաթողիկոսության միջև փոխանակված պաշտոնական գրություններ, Ը—Թ 8, 64:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո Անթիլիասի կաթողիկոսության միջև փոխանակված պաշտոնական գրություններ Ադիս-Աբեբայում կայանալիք միջեկեղեցական ժողովին Հայաստանյայց եկեղեցու մասնակցության մասին, ԺԱ 10:

Մեծի Տանն Կիլիկիո Տ. Տ. Խորեն Ա Հայրապետի գրությունը Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսին, Դ 5:

Մեծի Տանն Կիլիկիո Տ. Տ. Խորեն Ա Հայրապետի նամակը Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսին, Դ 7:

Տ. Տ. Խորեն Ա Կաթողիկոսի պատասխանը Ամենայն Հայոց Հայրապետի օգոստոս 27 թվակիր նամակին, ԺԱ 15:

Փրկչի հրաշափառ և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Բ—Գ 11:

Փրկչի հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայ-

րապետի և Նվիրապետական Աթոռների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Ե 18:
Փրկչի Հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծության Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Ե 13:

## Բ. ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Անցնող տարին, Ա 3:
Վեհափառ Հայրապետի պատմական ուղևորությունը, Բ—Գ 32:
Հարության պատգամը, Դ 8:
Մեծագործ Կաթողիկոսը, Ե 10:
«Էջմիածին» ամսագրի քսան տարին, Զ 8:
Պայծառակերպություն, Է 3:
Կյանքի և խաղաղության ուխտը, Ը—Թ 10:
Պանծալի Երուսաղեմի ողջագուրման ճշմարիտ ոգին., Ժ 5:
Ազգային մեծ եղեռնի հիսնամյակի առթիվ, ԺԱ 3:
«Օրհնեսցի և պանծացեսցի և նախախնամեալ պահեսցի Հանրապետութիւն Խորհրդային Հայաստանի», ԺԲ 3:

## Գ. ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԲԵՐԲԵՐՅԱՆ ԱՐՍԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ— Մոսկվայի հոգևոր ակադեմիայի 150-ամյակը:
ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ— Էջմիածնի և Կիլիկիո Աթոռները, Ե 28:
Ամենայն Հայոց Հայրապետի հարցազրույցը Սովետական Հայաստանի ռադիոկոմիտեի թղթակցի հետ արտասահմանյան իր չորրորդ ուղևորությունից վերադարձին, Բ—Գ 159:
Խոսքեր Գևորգ Զ Կաթողիկոսից, Ե 22:
Վատիկանի երկրորդ ժողովը, Դ 18:
Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի չորրորդ ուղևորությունը արտասահման, Բ—Գ 36:

## Դ. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Ամանորի հանդեսը Հոգևոր Ճեմարանում, Բ—Գ 29:
Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտոր Ժոզե դը Ազերեդո Պերդիգոնը Մայր Աթոռում, Ժ 27:
Եպիսկոպոսական ձեռնադրություն Մայր Աթոռում, ԺԲ 12:
Երուսաղեմի հայոց ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարքը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ժ 10:
Երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի մահվան 10-րդ տարելիցի հանդիսությունները Մայր Աթոռում, Զ 8:
Ծայրագույն վարդապետական իշխանության տվչություն, ԺԱ 22:
Ծայրագույն վարդապետության իշխանության տվչություն, Զ 14:
Հայրապետական բարձր գնահատության, Է 26:
Հանդիսություն Հոգևոր Ճեմարանում նվիրված Կոմիտաս վարդապետի ծննդյան 95-ամյակին, ԺԱ 19:
Հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոն Մայր Աթոռում Մեծի Տանն Կիլիկիո երջանկահիշատակ Տ. Տ. Զարեհ Ա Կաթողիկոսի մահվան առաջին տարելիցի առթիվ, Դ 13:
Ներքին բեմերի խորհրդանշական ժողով, Դ 21:
Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի 1962—1963 ուսումնական տարեշրջանի տարեվերջի հանդիսությունը, Է 8:
Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի 1964—1965 ուսումնական տարվա վերաբացումը, Ժ 36:
Վարդանանց տոնը Մայր Աթոռում, Դ 15:
Վեհափառ Հայրապետի գահակալության իններորդ տարեդարձի հանդիսությունները Մայր Աթոռում, Ժ 11:
Փրկչի Հրաշափառ և Սուրբ Ծննդյան տոնի առթիվ հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ և քարոզ Մայր Տաճարում, Բ—Գ 23:
Փրկչի Հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ հայրապետական սուրբ պատարագ և քարոզ Մայր Տաճարում, Դ 10:
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ (լուրեր Մայր Աթոռից)— Ա 5, Բ—Գ 27, Դ 16, Ե 48, Զ 12, Է 6, Ը—Թ 25, Ժ 32, ԺԱ 17, ԺԲ 18:

## Ե. ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԲԳԱՐՅԱՆ Գ.— Նորայր Բյուզանդացու անտիպ երկերը, Ը—Թ 35:
ԱԼՊՈՅԱՃՅԱՆ Ա.— Պորտուգալ և Հայաստան, Ա 17:
ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԱՐԱԳ— Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Է 45, Ը—Թ 41, Ժ 44, ԺԱ 32:
ԴԱՎԹՅԱՆ Հ.— ԺԶ դարի հայերեն փայտագիր (քսիլոգրաֆ) բնագրերով մի հազվագյուտ հրատարակություն, Դ 45:
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Հ.— Թանահատի վանքը կամ Գառավանքը և նրա վիմագիր արձանագրությունները, Ժ 52:
ԽԱԼՓԱԽՉՅԱՆ Հ.— Դպրոցներն ու գրատները միջնադարյան Հայաստանում, Ա 25, Դ 38:
ԿԱՆԱՅԱՆ Խ.— Իմ հուշերը Գևորգյան Ճեմարանից, Զ 26, Է 38:
ՀԱԿՈԲՅԱՆ Գ. Ա.— Շարականների սեռը միջնադարյան հայ բանաստեղծության մեջ, Ժ 38, ԺԱ 26:— Գրիգոր Տղա, ԺԲ 23:
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Զ.— Ղազար Փարպեցու կենսագրության մի քանի հարցերի շուրջը, Է 52, Ը—Թ 47:
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ.— Հայկական ճարտարապետության ականավոր հետազոտողը, Դ 23:
ՃԵՎԱՀԻՐՃՅԱՆ Մ.— Հայոց Սովի կաթողիկոսանիստը, Ա 39:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԴՈՆՑ. ՆՇԱՆ— Էլամացին և իրենց լեզուն, ԺԲ 35:
ՇԻՐԻՆԱԶԱՆՅԱՆ Գ., ՀՈՎՍԵՓՅԱՆ Ա.— Տպավորություններ Երկու մասյան. Զ 37:
ՊԱՊՈՒԽՅԱՆ Ն. Մ.— Ժողովրդական և մասնագիտական առնչությունների կապի դրսևորումները Սյունիքի ճարտարապետական դպրոցում, ԺԱ 49:
ՍԱՄՎԵԼՅԱՆ Ա.— Երվանդ Լալայան, ԺԲ 28:
ՍԻՐՈՒՆԻ Հ. Ճ.— Պոլիս և իր դերը. Ա 7, Դ 26, Ե 51, Զ 16:—Պրոֆեսոր Վլադ Բրնըզեանու, Է 28:
ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ (Մաղկարար)— Ռոզմալյա. Ա 32, Դ 48:
ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ Հ.— Գեղարդի վանքի գանձերից. ԺԱ 10:— Հայկական արծաթագործության արվեստի գոհարը. Ը—Թ 28:
ՔՅՈՒՐՏՅԱՆ Հ.— Պատմական Երկու նշումներ. Դ 34:
ՊՈՂԱՆՋՅԱՆ Ս.—Պրոֆ.-դոկտ. Վլադ Բրնըզեանուն և նրա հայագիտական աշխատությունները. Զ 51:— Տրանսիլվանիայի հայերի պայքարը ազգային ինքնուրույնության պահպանման համար, ԺԲ 37:

Զ. ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԵՎՈՐԳՅԱՆ ՊԱՐԳԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ— Անմոռանալի Վեհափառը. Ե 32:
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՔԱՀԱՆԱ—Գևորգ Զ Կաթողիկոսը և Մայր Էջմիածնի Հոգևոր ճեմարանը, Ե 45:
ՏԵՐՅԱՆ ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ—Մեծագործ և հայրենասեր Հայրապետը, Ե 37:
Գերաշնորհ Տ. Վահան եպիսկոպոս Տերյան, ԺԲ 14:
Գերաշնորհ Տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյան, ԺԲ 16:

Է. ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Պաշտոնական ընդունելություն, Ժ 31:
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ— Ա 60, Դ 60, Ե 61, Զ 61, Է 60, Ը—Թ 53, Ժ 61, ԺԱ 61, ԺԲ 45:

Ը. ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԹՂԹԱԿԻՑ— Ամենայն Հայոց Հայրապետի կոնդակով լանջախաչի տվչություն գերաշնորհ Տ. Էմիլիանոսյան եպիսկոպոսին, Դ 56:
ԹՂԹԱԿԻՑ— Առաջնորդ Հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետի այցելությունը, Ա 58:
ԹՂԹԱԿԻՑ—Բուլղարահայ «Երևան» մշակութային միության [illegible] երգի և պարի անսամբլի այցելությունը, Ա 58:
ԹՂԹԱԿԻՑ— Սայաթ-Նովայի 250-ամյակը Սոֆիայի մեջ, Ա 58:
ԹՂԹԱԿԻՑ.— Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակի տոնակատարությունը Բուխարեստի մեջ, Ա 59:
ՔՈՎՄԱՍՅԱՆ ԼԵՎՈՆ— Սրտագին խոսք Ամենայն Հայոց Հայրապետին, ԺԱ 25:
Կ. Վ. Գ.— Ամերիկահայ կյանք, ԺԱ 23:
ՄԻՐԶԱՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ ՔԱՀԱՆԱ— Հովվական այցելություններ, Է 20:
ՄՈՒՇՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ— Հայրապետի կոչը. Զ 59:
Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա և Տանն Կիլիկիո Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսների պատմական ողջագուրումը, Է 10:
ԱՄՆ-ի հայոց արևելյան և արևմտյան թեմերի խորհրդակցական միացյալ ժողովը, Է 15:
…ություններ Նաշուբենեն վերջ, Է 13:
Հարավային Ամերիկայի հայոց հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Պարգև արքեպիսկոպոս Ապտոյանի քահանայության 25-ամյակը, ԺԲ 8:
Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց առաջնորդական վիճակի 82-րդ տարեկան ընթացիկ պատգամավորական ժողովը, Է 17:
Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց առաջնորդական վիճակի հոգևորականության տարեկան համագումարը, Է 10:
Սփյուռքահայ կոմպոզիտոր Համբարձում Բերբերյանի հեղինակային համերգը Նյու-Յորքում, Ա 57:
Վաշինգտոնի հայոց նորակառույց Սուրբ Աստվածածին եկեղեցու օծումը, Ա 57:

Թ. ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

Խաղաղության պաշտպանության համաշխարհային համաքրիստոնեական երրորդ կոնգրեսը Պրագայում, Ը—Թ 22:

Ժ. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Վ.— Խոսք Երախտիքի. Ե 48:

ԺԱ. ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ԹՂԹԱԿԻՑ— Ռումինացի հայագետ պրոֆ. Վլադ Բրնըզեանուի մահն ու թաղումը, Դ 58:
Հանգիստ գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանի, Ա 51:
Հանգիստ Տ. Ներսես վարդապետ Ակինյանի, Ա 53:

ԺԲ. ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի, Ը—Թ 56, ԺԲ 48: